



ԿՈՏՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ.

ԿԵՐՏՈՒՄ՝ ԱՊԱԳԱ

**2020-2021 ուսումնական տարվա գործունեության
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

*Ռեկտոր, մ.գ.թ., պրոֆեսոր
Դավիթ Խիթարյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ.....	3
ՆԱԽԱԲԱՆ	4
ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐ	7
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	46
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	48
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ	72
ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	78
ՈՐԱԿՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	95
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ–ՀԱՂՈՐԴԱԿՅԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	97
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ	102
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ	111

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը, հավատարիմ մնալով ֆիզիկական դաստիարակության և սպորտի, մարզական լրագրության, սպորտային հոգեբանության, սպորտային տուրիզմի և փրկարարական գործի, ֆիզիկական վերականգման և սպորտի կառավարման ոլորտներում բանիմաց, որակյալ և կարողունակ մասնագետներ պատրաստելու իր առաքելությանը, ***կոչում է կարծրալիպերը. կերպում՝ ապագա:***

Ինքս, ստանձնելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պաշտոնը, ինստիտուտի աշխատակազմի հետ համատեղ, մեծ պատասխանատվությամբ և վճռականությամբ ձեռնամուխ եմ եղել բուհի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին:

Զարգացման նախանշված մակարդակին հասնելու համար իրականացվել են հեռանկարային բազմաթիվ ծրագրեր՝ կրթության որակի բարձրացման և կրթական նոր ծրագրերի ներդրման, բուհի միջազգայնացման և շարժունության ապահովման, գիտահետազոտական աշխատանքների ոլորտային բազմազանման և ընդլայնման, աշխատակազմի որակավորման բարձրացման և աշխատանքների համակարգման, բուհի շենքային պայմանների արդիականացման և լսարանների վերանորոգման ուղղությամբ: Թվարկված բոլոր աշխատանքների իրագործումն իրատեսական է՝ դրանք հնարավոր է իրականացնել բուհի արհեստավարժ և մասնագիտական հմտություններով օժտված աշխատակազմի հետ միասին, և ես լիահույս եմ, որ մենք ի զորու ենք ավարտին հասցնել բուհի հետագա զարգացումն ապահովող բարեփոխումները:

Պատրաստել որակյալ և աշխատաշուկայում մրցունակ մասնագետ, կրթել հայրենասեր սերունդ, պատրաստել բանիմաց գիտնական, ունենալ բարձրորակ աշխատակից՝ սրանք այն հիմնախնդիրներն են, որոնց իրականացման նպատակով մեր թիմը ողջ ներուժով աշխատել է և շարունակելու է աշխատել նվիրումով և ջերմեռանդությամբ:

ՆԱԽԱԲԱՆ


Առաջնորդվելով ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության և Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքներով, բուհի կանոնակարգի, բուհի կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումների ու կարգադրությունների դրույթներով՝ 2020-2021 ուսումնական տարում ինստիտուտում իրականացվել են կրթության որակի ապահովմանն ուղղված տարաբնույթ գործընթացներ, այդ թվում՝ դասավանդման մեթոդների որակի բարձրացման, կրթական գործընթացի բարելավման, նորագույն տեխնոլոգիաների կիրառման, գիտելիքների հաղորդման և դասախոսներին գիտամեթոդական աշխատանքների մեջ ներգրավմանն ուղղությամբ: Բարեփոխումների ապահովման նպատակով բոլոր մասնագիտական ամբիոններում կիրառվել են մանկավարժական և գիտահետազոտական ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիական մոտեցումներ:

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում իրականացված լայնածավալ բարեփոխումների նպատակն է՝ ժամանակակից մարտահրավերներին և բուհի ռազմավարության սկզբունքներին համապատասխան՝ արձանագրել առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք նպատակաուղղված են բուհի վարկանիշի և հեղինակության բարձրացմանը:

Հաշվետվության մեջ ներկայացված են անհրաժեշտ տվյալներ՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ, որոնք իրականացվել են հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված բարեփոխումներն ապահովելու համար:

Չնայած 2021 թվականը թե՛ ռազմաքաղաքական, և թե՛ տնտեսական առումներով արտառոց էր Հայաստանի Հանրապետության համար, այնուամենայնիվ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը կարողացավ իրականացնել նախանշած ծրագրերը՝ անցնելով վերահավատարմագրման գործընթացը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐԱԿՏԻԿԱ ԿԱՐԻԵՐԱ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ

Աշխատաշուկայի
ուսումնասիրում

Արտաքին շահակիցների
հետ ինստիտուցիոնալ
հարաբերությունների
ստեղծում

Բուհ-շրջանավարտ , Բուհ-
գործատու
համագործակցային
կապերի զարգացում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագրերի
արդիականացում

Ուսումնական գործընթացի
կազմակերպման
կատարելագործում

«Կրթություն բոլորի
համար» սկզբունքի
ներդրում

Գիտական
դրամաշնորհային
ծրագրերի հայտավորում /2
ծրագիր/:

Գիտական
աշխատանքների
կատարման խրախուսում

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անձնակազմ

Որակյալ ծառայություն
և ենթակառուցվածքներ

Հորիզոնական
ինտեգրացիա և
համագործակցային
միջավայրի ձևավորում

Հակակշիռների և
փոխզսպումների
մեխանիզմների ներդրում

Ֆինանսների
արդյունավետ
կառավարում

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Օտար լեզվով կրթական
ծրագրերի մեկնարկ

Արտասահմանյան
ուսանողների
ներգրավում

Միջազգային
դրամաշնորհային
ծրագրերի ներկայացում

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒ- ԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող
անձանց բուժում
աշխատանքով ապահովում

Կամավորական
աշխատանքներ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Բուհի բրենդի կիոարկում

Բուհի ճանաչելիության
բարձրացում

ԹՎԵՐ՝ 2020-2021 ՈՒՍՏԱՐԻ ՄԵՆՔ՝ 76




4

Բակալավրի
կրթական ծրագրեր



8+1

Մագիստրոսի
կրթական ծրագրեր



3

Հետբուհական
կրթական
ծրագրեր



2244

Բակալավրի
ուսանողներ



136

Մագիստրանտներ



20

Ասպիրանտներ
և հայցորդներ



66

Սփյուռքի և օտարերկրացի
ուսանողներ




23

Արտաքին
շահակիցներ



1

Մասնագիտական
խորհուրդ



1083

Դիմորդ



9

Անվանական
կրթաթոշակ



33

Միջազգային պայմանագրեր
և համաձայնագրեր

ԲԱՐԵԼԱՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՀՖԿՍՊԻ-ի մասնագիտությունները, մասնագիտական-կրթական ծրագրերը և ուսանողական համակազմը

«Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ». սահմանված է «տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ՀՖԿՍՊԻ-ում ստացած կրթությունից»:

Բուհի երկու ֆակուլտետում իրականացվում է 12 կրթական ծրագիր, որոնցից 4-ը՝ բակալավրի, 8-ը՝ մագիստրոսի, 1-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում:

Բակալավրի կրթական ծրագրեր

Հ	Մասնագիտություն և դասիչ	Կրթական ծրագիր և դասիչ	Որակավորում
1.	Մասնագիտական մանկավարժություն՝ 011401.00.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.6 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.6	Մանկավարժության բակալավր. առկա/հեռակա
2.	Սպորտ՝ 101401.00.6	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա՝ 101401.02.6	Սպորտի բակալավր. առկա/հեռակա
3.	Լրագրություն՝ 032101.00.6	Լրագրություն՝ 032101.01.6	Լրագրության բակալավր. առկա/հեռակա

Մագիստրոսի կրթական ծրագրեր

Հ	Մասնագիտություն և դասիչ	Կրթական ծրագիր և դասիչ	Որակավորում
1.	Մասնագիտական մանկավարժություն՝ 011401.00.7	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.7 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.7	Մանկավարժության մագիստրոս. առկա/հեռակա
2.	Սպորտ	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա՝ 101401.02.7 Ադապտիվ սպորտ՝ 101401.03.7	Սպորտի մագիստրոս. առկա/հեռակա
3.	Լրագրություն՝ 032101.00.7	Լրագրություն՝ 032101.01.7	Լրագրության մագիստրոս. առկա/հեռակա

4.	Հոգեբանություն՝ 031301.00.7	Հոգեբանություն՝ 031301.01.7	Հոգեբանության մագիստրոս. առկա
5.	Կառավարում՝ 041301.00.7	Մենեջմենտ՝ 041301.01.7	Կառավարման մագիստրոս. առկա
6.	Շուկայագիտություն (մարկետինգ) 041401.00.7	Մարկետինգ՝ 041401.01.07	Կառավարման մագիստրոս. առկա
7.	Զբոսաշրջություն. 101501.00.7	Սպորտային տուրիզմ՝ 101501.06.7	Զբոսաշրջության մագիստրոս. առկա/հեռակա

Ուսումնագիտական բաժինն ապահովում է ուսումնական գործընթացի տեխնիկական սպասարկումը, այն դեպքում, երբ ֆակուլտետները և ամբիոնները դեկանների և ամբիոնների վարիչների ղեկավարությամբ պատասխանատու են ուսումնական և գիտական գործունեության որակի և բովանդակության համար:

ՀՖԿՍՊԻ-ի Ուսումնագիտական բլոկի տվյալ կառուցվածքը հաստատվել է Հոգաբարձուների խորհրդի 2020թ. թիվ 2-Լ որոշմամբ:

Բուհի Ուսումնագիտական բլոկի գործառույթներն են՝

1. կրթական համակարգի արդիականացում,
2. որակյալ կրթության համար անհրաժեշտ միջոցառումների մշակում և իրականացում,
3. կրթական ծրագրերի, ուսումնական պլանների մշակում, արդիականացում, վերահսկում,
4. ուսումնական գործընթացի կազմակերպում, կառավարում, վերահսկում,
5. ուսումնական գործընթացի ժամանակացույցի կազմում, հաստատում, վերահսկում,
6. պրակտիկաների իրականացման ընթացքի վերահսկում,
7. պրոֆեսորադասախոսական բեռնվածության կազմում, վերահսկում,
8. պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարիքների վերհանում, որակավորման աստիճանի բարձրացման աշխատանքների կազմակերպում,
9. դասալսումների՝ բաց դասերի, փոխադարձ դասալսումների և ստուգողական դասալսումների իրականացում, վերահսկում, կառավարում,
10. ընդունելության քննությունների, ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների համաժամանակյա ներկայացում, հանձնաժողովների աշխատանքի վերահսկում,
11. ուսանողների առաջադիմության, փոխատեղման, փոխադրման, հեռացման, անվանական կրթաթոշակների ներկայացման գործընթացների կատարում և վերահսկում,

12. մշակում և կիրարկում է գիտական ներուժի բացահայտման, զարգացման և կատարելագործման ճանապարհային քարտեզը,
13. ապահովում է ասպիրանտուրայի ընդունելության, ատեստավորման պատրաստումն ու անցկացումը, ինչպես նաև՝
14. դրամաշնորհային ծրագրերի իրազեկման, մշակման և ներկայացման ընթացակարգերը,
15. գիտական գործունեության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը,
16. տարեկան հաշվետվությունների պատրաստումն ու վերահսկումը:

Ուսումնագիտական բլոկի գործունեությունն իրականացվել է՝ համապատասխան վերոգրյալ խնդիրների, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ-ի 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցի: Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից կատարվել է ՌԾ-ի ուսումնական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող նպատակների մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերլուծություն, խնդիրների վերհանում:

Ռազմավարական ծրագրի ուսումնական և գիտական գործունեությանն առնչվող նպատակների և խնդիրների կատարման վերլուծության, ինչպես նաև ապագային միտված նպատակների իրականացման համար մշակվել է 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի ուսումնական և գիտական գործունեությանն առնչվող նպատակները, դրանց իրագործման ճանապարհային քարտեզը և ակնկալվող վերջնարդյունքները:

Ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից ղեկավարվել են նաև աշխատանքային խմբեր, որոնց գործունեության արդյունքները ներկայացված ստորև:

Ուսումնագիտական բլոկի հաշվետվությունը ներառում է բոլոր այն բաժինների, ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները, որոնք գործում են երկու կարևոր ռազմավարական խնդիր լուծելուն՝ որակյալ կրթություն և ժամանակակից հետազոտությունների իրականացում ապահովելուն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԵՐԸ

527


ԴԻՄՈՐԴ

582


ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ,
ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՄԱՐԶԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի առաքելությունը և նպատակները բխում են ՀՖԿՍՊԻ-ի առաքելությունից և նպատակներից, համապատասխանում են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին: Ֆակուլտետի առաքելությունն է՝ պատրաստել սպորտի սպասարկման ոլորտի մրցունակ և կարողունակ մասնագետներ, առավելագույնս ապահովել շրջանավարտների մասնագիտական զբաղվածությունը: Ֆակուլտետի գործունեության նպատակն է՝ մշակել և իրականացնել արտաքին և ներքին շահակիցների պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր, մշակել և ներդնել դրանց իրագործման արդյունավետ ուղիներ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետը կազմված է 5 թողարկող ամբիոններից՝ Ֆիզիկական վերականգնման, Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի, Սպորտի մանկավարժության և հոգեբանության, Մարզական լրագրության, Սպորտի կառավարման և մարկետինգի: Ուսումնական գործընթացն իրականացվում է ՀՖԿՍՊԻ-ի գլխավոր մասնաշենքում, որը գտնվում է Ա. Մանուկյան 11 հասցեում: Ուսումնական պլանով հաստատված որոշ դասեր, մասնավորապես՝ վոլեյբոլ, բասկետբոլ, շարժախաղեր, հանդբոլ առարկաներն անցկացվում են Մարզախաղերի ամբիոնում և դրան կից դահլիճում, որը գտնվում է Երվանդ Քոչար 3/6 հասցեում:

Ֆակուլտետն իրականացնում է 3 բակալավրիական կրթական ծրագիր՝

1. «Սպորտ» մասնագիտությամբ՝ «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»,
2. «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ փրկարարական գործ»,
3. Լրագրություն մասնագիտությամբ՝ «Լրագրություն»:

Ֆակուլտետում իրականացվում են նաև 5 մագիստրոսական կրթական ծրագրեր՝

1. «Սպորտ» մասնագիտությամբ՝ «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»,
2. «Հոգեբանություն» մասնագիտությամբ՝ «Հոգեբանություն»,
3. «Լրագրություն» մասնագիտությամբ՝ «Լրագրություն»,
4. Կառավարում մասնագիտությամբ՝ «Կառավարում» և «Շուկայագիտություն»:

2020-2021 ուսումնական տարում մշակվել և ներդրվել է «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ «Սպորտային տուրիզմ» կրթական ծրագիրը:

Ֆակուլտետում բակալավրիական բոլոր կրթական ծրագրերը, ինչպես նաև «Լրագրություն», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագրերն իրականացվում են առկա և հեռակա ուսուցման ձևերով, իսկ «Հոգեբանություն», «Կառավարում» և «Մարկետինգ» կրթական ծրագրերը՝ միայն առկա ուսուցման ձևով:

Հաշվետու 2020-2021 ուստարում Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի աշխատակիցները 88-ն են, որից՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ՝ 81, ուսումնաօժանդակ անձնակազմ՝ 6, վարչական անձնակազմ՝ 1:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմից 4-ը պրոֆեսորներ են, 11-ը՝ գիտությունների թեկնածու, դոցենտներ, 4 գիտությունների թեկնածու, 1 դոցենտ, 61-ը՝ ասիստենտներ և դասախոսներ: Ֆակուլտետի գիտական ներուժից 20 կազմում են մինչև 35 տարեկան աշխատակիցները, 31 հոգի՝ 36-51 տարեկան, 30 հոգի՝ 51-70 տարեկան: Ֆակուլտետի մինչև 35 տարեկան դասախոսների խմբում 5-ը հայցորդներ են:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետի ուսումնական, գիտական, դաստիարակչական և այլ գործընթացները ղեկավարվում են դեկանի կողմից: Ֆակուլտետում գործում է գիտական խորհուրդ, որն իրավասու է ֆակուլտետում իրականացվող գործընթացների վերաբերյալ որոշումների կայացման և անհրաժեշտության դեպքում ինստիտուտի գիտական խորհրդին երաշխավորելու համար:

Ֆակուլտետի գործունեությունն իրականացվում է՝ համապատասխան հաստատված աշխատանքային պլանի: Առնվազն յուրաքանչյուր ամսվա մեջ մեկ անգամ տեղի է ունենում ֆակուլտետի նիստ, որտեղ և քննարկվում են ֆակուլտետի գործունեությանն առնչվող հարցերը: Ֆակուլտետի խորհուրդը բաղկացած է 8 անդամներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր պատասխանատվության ոլորտը՝ ֆակուլտետի կառավարում (Լ. Ստեփանյան), ուսումնամեթոդական աշխատանքներ (Գ. Նալբանդյան), գիտական գործունեություն (Հ. Բաբայան), որակի ապահովման պատասխանատու (Ս. Դանիելյան), ֆակուլտետի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև ֆակուլտետի խորհրդի գիտական քարտուղար (Ա. Բաղդասարյան) և ուսանողների հետ տարվող աշխատանքներ (Դ. Ալեքսանյան):

Ֆակուլտետում գործում է հորիզոնական կառավարման ոճ, որտեղ իրենց մասնակցությունն են ունենում դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը, ուսանողները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուստարում ԱՏՏԿ ֆակուլտետը վերամշակել է ֆակուլտետում գործող բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլանները, առարկայական նկարագրերը: Ֆակուլտետում պարբերական բնույթ են կրել դասալսումները, ստուգողական և բաց դասերի անցկացումը:

Ֆակուլտետում տեղի ունեցող փոխակերպումները նպաստել են հետազոտական և ձեռնարկատիրական մոդելների ստեղծմանը: Մասնավորապես, Սպորտի կառավարման և մարկետինգի, ինչպես նաև Մարզական լրագրության ամբիոններում իրականացվող մագիստրոսական ծրագրերը հիմնվում են ձեռնարկատիրական մոդելների վրա, այն դեպքում, երբ Ֆիզիկական վերականգնման, Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոններում հիմնվում են հետազոտական մոդելների վրա: Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնում իրականացվող բակալավրիական, և արդեն իսկ մշակված «Սպորտային տուրիզմ» մագիստրոսական ծրագիրը հիմնված է ձեռնակատիրական և գործնական հմտությունների ձևավորման մոդելի վրա:

2020-2021 ուսումնական տարվա ֆակուլտետի ձեռքբերումներից է նաև «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի անգլերեն լեզվով իրականացումը: Թեպետ, նշված ծրագրով առաջին տարին ընդունվել և սովորել է մեկ ուսանող՝ Գանայի Հանրապետությունից: Սակայն այն սկիզբն է միջազգայնացման և օտար լեզվով կրթական ծրագրերի իրականացման համար:

Ուսումնական գործընթացի բարելավման նպատակով հաշվետու տարում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

1. Վերահսկվել է ուսումնական գործընթացը:
2. Ուսումնագիտական բաժնի կողմից վերահսկվել է ուսանողների բացակայությունները, պարզորոշվել բացակայությունների հիմնական պատճառները և աշխատանքների վերաբերյալ առաջարկություններ է արվել բացակայությունների բարձր տոկոսի նվազման ուղղությամբ:
3. Կատարվել են երիտասարդ դասախոսների դասալսումներ:

Ուսումնական գործընթացի վերահսկման արդյունքում դուրս են բերվել մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը պետք է ուղղված լինի 2021-2022 ուսումնական տարվա գործունեությունը: Մասնավորապես, ուսանողների բացակայությունները մեծ մասամբ պայմանավորված են եղել համավարակի, պատերազմյան և հետպատերազմյան իրադարձությունների հետ: Սակայն, ըստ ուսանողների հարցումների՝ մեծ դեր է խաղացել նաև որոշ դասախոսների ոչ իրազեկվածությունը: Օրինակ՝ դասախոսությունը թելադրության վերածելը, ժամանակավրեպ տեղեկության փոխանցումը, ժամանակակից տեխնոլոգիաների պակասը և այլն: Մինևույն ժամանակ, դուրս բերված խնդիրների հիման վրա առաջարկվել է մշակել դասախոսների վերապատրաստման ծրագիր, որտեղ զետեղված կլինեն ժամանակակից դասախոսի համար անհրաժեշտ կոմպետենցիաների զարգացման համար դասընթացները: Առաջարկությունների հիման վրա արդեն իսկ կյանքի է

կոչվել ծրագիր: 2021 թ. հուլիս–օգոստոս ամիսներին կիրականացվի դասախոսների վերապատրաստման 1-ին փուլը՝ ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքակազմի ուսումնառությանը: Հաջորդ փուլում նախատեսվում է իրականացնել նաև օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացում:

2020-2021 ուսումնական տարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել են 6 ուսումնամեթոդական, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ և ուղեցույցներ՝ համապատասխան ուսումնառվող դասընթացների: Վերամշակվել և արդիականացվել են նաև դասախոսությունների ֆոնդը, որը կրելու է շարունակական բնույթ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական գործընթացի արդյունավետության բարելավման նպատակով իրականացվել են վարպետաց դասեր, սեմինարներ, մասնագիտական հանդիպումներ՝ ոլորտի լավագույն մասնագետների կողմից:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով արդիականացվել է նաև նյութատեխնիկական բազան: Մասնավորապես՝ կառուցվել է ժայռամագլցման պատը, որը ծառայելու է «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ փրկարարական գործ», ինչպես նաև «Սպորտային տուրիզմ» կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողների գործնական պարապմունքների իրականացման համար: 7 լսարան համալրվել են պրոյեկտորներով, նոութբուքերով, ինտերակտիվ գրատախտակներով: «Ֆիզիկական վերականգնման և մարզական լրագրության» ամբիոնի դասերի իրականացման համար ձեռք է բերվել համապատասխան գույք: Չնայած նյութական ձեռքբերումներին՝ դեռ վաղ է խոսել նյութատեխնիկական հագեցվածության բավարար մակարդակի մասին:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուսումնական տարում ուշադրության կենտրոնում է գտնվել ֆակուլտետի գիտական գործունեությունը. ըստ հնարավորին՝ բոլոր ուղղություններով իրականացվել են տարաբնույթ աշխատանքներ:

Մասնավորապես, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ժամանակ հետազոտական բաղադրիչը որոշիչ դեր է ունեցել: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գնահատականները կազմված են եղել հետևյալ բաղադրիչներից՝ տեսական վերլուծություն, նպատակի և խնդրի դրվածք, շարադրում, հետազոտական բաղադրիչ և ներկայացում: Ուստի, ռեֆերատիվ բնույթի աշխատանքները գնահատվել են ցածր միավորներով:

Մյուս կողմից ուսանողների շրջանում հետազոտական կենտրոն մտածողություն ձևավորելու նպատակով բոլոր կրթական ծրագրերում տարբեր դասընթացների գնահատման մուլտիբաղադրիչային մոդելում իր ուրույն տեղն է զբաղեցրել հետազոտությունների իրականացումը և ներկայացումը:

Մագիստրոսական կրթական ծրագրերում դասընթացների մի մասի գնահատումն իրականացվել է նախագծերի մշակման և ներկայացման հիման վրա:

2020-2021 ուսումնական տարում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 65 գիտական հոդված, որոնցից 22-ը՝ միջազգային պարբերականներում, 43-ը՝ ԲՈԿ-ի ցանկում ներառված ՀՀ պարբերականներում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետից ներկայացվել են 5 դրամաշնորհային ծրագրեր՝ «Սպորտի և առողջ ապրելակերպի հոգեֆիզիոլոգիայի ԳՀ ինստիտուտ» գիտահետազոտական ինստիտուտի բացման հայտ, «Ուսանողների բարեկեցության հոգեբանական ապահովում», «Ձյուղոն՝ որպես բուլինգի կանխարգելման միջոց հանրակրթական դպրոցներում», «Վերականգնողական կենտրոնի» ստեղծման ծրագիր, «Մեդիալաբորատորիա»-ի ստեղծման ծրագիր:

Ներկայացված ծրագրերից «Ուսանողի բարեկեցության հոգեբանական ապահովում» վերտառությամբ ծրագիրը մրցույթը հաղթահարել է և այժմ գտնվում է իրագործման փուլում: Այն միջբուհական ծրագիր է, որն իրականացվելու է 2 տարում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուսումնական տարում ֆակուլտետը անմասն չի մնացել նաև հասարակական պատասխանատվության աշխատանքներից: Մասնավորապես, «Ֆիզիկական վերականգնման» ամբիոնի վարիչի գլխավորությամբ բակալավրի և մագիստրատուրայի ուսանողները կամավոր սկզբունքով մասնակցել են զինվորների վերականգնման աշխատանքներին: Պատերազմի առաջին իսկ օրվանից տարբեր հիվանդանոցներում, վերականգնողական կենտրոններում, այնուհետև զինվորների վերականգնողական աշխատանքների համար բուհում հատուկ հատկացված կաբինետում իրականացվել են լայնածավալ աշխատանքներ: Այս ընթացքում բուժվել են և շարունակում են բուժում ստանալ պատերազմի մասնակից զինվորները: Պատերազմի և հետպատերազմյան շրջանում «Սպորտային տուրիզմ և փրկարարական գործ» ամբիոնի վարիչ Ս. Դանիելյանը, դասախոսներ՝ Ս. Բիճյանը, Կ. Հովհաննիսյանը և այլք, ինչպես նաև «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ փրկարարական գործ» կրթական ծրագրով ուսումնառող 7 ուսանող ուղևորվել են Արցախի Հանրապետություն՝ փրկարարական աշխատանքներ կատարելու համար: Նույն ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել են մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման տարբեր ծրագրերի՝ միջազգային և տեղական:

Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հոգեբան դասախոսները Ա. Ստեփանյանի գլխավորությամբ վիրավոր զինվորներին և նրանց հարազատներին հոգեբանական աջակցություն են ցուցաբերել, որի համար ՊՆ-ի կողմից արժանացել են շնորհակալագրերի:

Մարզական լրագրության ամբիոնի դասախոսներ Լ. Հակոբյանը, Ա. Նովրուզյանը, Ա. Բաղդասարյանը բուհի ուսանողների համար կազմակերպել են մեդիագրագիտության դասընթացներ: Հարկ ենք համարում նշել, որ Մարզական լրագրության ամբիոնի անձնակազմը՝ Ա. Բաղդասարյանի գլխավորությամբ, իր ակտիվ և առանցքային դերակատարությունն է ունեցել բուհի տարբեր միջոցառումների կազմակերպման և լուսաբանման գործընթացներում:

Սպորտի կառավարման և մարկետինգի ամբիոնի ասիստենտ Կ. Քոչարյանն ակտիվ մասնակցություն է ունեցել և շարունակում է աջակցել Արցախից ժամանած մեր հայրենակիցներին, զոհված զինծառայողների ընտանիքներին և վիրավորում ստացած զինվորներին:

«Սպորտային տուրիզմ և փրկարարական գործ» ամբիոնի վարիչ Ս. Դանիելյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ իրականացվել են ՀՀ տարբեր շրջաններում լեռնագնացության ծրագրեր, որոնք նույնպես, մի կողմից ուղղված են կորպորատիվ մշակույթի ձևավորմանը, աշխատակիցների միմյանց ճանաչմանը ոչ ֆորմալ պայմաններում, մյուս կողմից՝ հայրենիքը ճանաչելուն և սիրելուն:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Երկու կիսամյակների կտրվածքով՝ զարնանային և աշնանային, հաճախելիությունը համապատասխանաբար կազմել է՝ աշնանային առկա՝ 71,8%, հեռակա՝ 65.5%, զարնանային առկա՝ 69,7%, հեռակա՝ 79,2%:

Ուսանողների առաջադիմությունը ԱՏՍԿ ֆակուլտետում առկա ուսուցման ձևում համապատասխանաբար կազմել է՝ գերազանց՝ 21.68%, լավ՝ 34.22%, բավարար՝ 39.92%, անբավարար՝ 4.18%:

ԱՏՍԿ ֆակուլտետում հեռակա ուսուցման ձևում առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ գերազանց՝ 12%, լավ՝ 34%, բավարար՝ 48%, անբավարար՝ 6%:

ՄԱՐԶԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Մարզչամանկավարժական ֆակուլտետի կազմում ընդգրկված են 7 ամբիոններ՝

1. Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի,
2. Ցիկլիկ մարզաձևերի,
3. Ֆուտբոլի,
4. Մարզախաղերի,
5. Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի,
6. Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի,
7. Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի:

Նշված ամբիոններում ընդգրկված են 23 մարզաձևերի, ինչպես նաև ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետներ:

Ֆակուլտետում սովորող ուսանողների թիվը կազմել է 2233 ուսանող, որից՝ 962 առկա և 1271 հեռակա բաժիններում:

Ֆակուլտետը թողարկում է մասնագետներ հետևյալ մասնագիտություններով.

- «Մասնագիտական մանկավարժություն» (011401.00.6) մասնագիտության՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (011401.09.6) բակալավրի կրթական ծրագրով,
- «Մասնագիտական մանկավարժություն» (011401.00.6) մասնագիտության՝ «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» (011401.10.6) բակալավրի կրթական ծրագրով,
- «Մասնագիտական մանկավարժություն» (011401.00.7) մասնագիտության՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (011401.09.7) մագիստրատուրայի կրթական ծրագրով,
- «Մասնագիտական մանկավարժություն» (011401.00.7) մասնագիտության՝ «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» (011401.10.7) մագիստրատուրայի և «Ադապտիվ սպորտ» (011401.03.7) մագիստրատուրայի կրթական ծրագրերով:

2020-2021 ուստարում ֆակուլտետն ունեցել է 106 աշխատող՝ 1 դեկան, 95 դասախոս, 10 ամբիոնի գործավար:

Ֆակուլտետում գիտական աստիճան ունեն 26 դասախոս (25%), գիտական կոչումներ՝ 39 դասախոս (37%):

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Ուսումնական տարվա սկզբին իրականացվել է ֆակուլտետի դասախոսների բեռնվածության բաշխում:

Վերանայվել են ֆակուլտետում գործող ՄԿԾ-ները, բուհում իրականացվող կրթական ծրագրերի առարկայական նկարագրերը: ՄԿԾ-ների վերանայման համար ստեղծվել են աշխատանքային խմբեր:

2020-2021 ուստարվա ընթացքում երկրում տիրող համավարակի հետևանքով, ինչպես նաև պատերազմի պատճառով դասերն անցկացվել են հիբրիդային տարբերակով: Նման եղանակով դասերի անցկացումն իր բացասական ազդեցությունը թողեց ուսումնական գործընթացի իրականացման վրա, առավել ևս՝ գործնական դասերի: Տեսական դասերի հիմնական խոչընդոտը համարվում էր ուսանողների ներգավաժությունն առցանց դասերին, սակայն կարճ ժամանակում այդ հարցը գրեթե լիովին լուծվեց: Կիսամյակային քննությունները և ստուգարքներն անցկացվեցին ինչպես offline, այնպես էլ online հարթակներում:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ֆակուլտետի ամբիոններում կազմակերպված դասերի զգալի մասն անցկացվել է տեխնիկական միջոցների, ուսուցողական տեսաֆիլմերի և լրացուցիչ դիդակտիկ նյութերի կիրառմամբ:

Աշխատանքները տվյալ ուղղությամբ շարունակական են: Ամբիոնները համալրվել են նոր ուսուցողական տեսաֆիլմերով:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են ինստիտուտի կողմից կազմակերպված վերապատրաստումներին՝ ստանալով համապատասխան հավաստագրեր:

ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվետու տարում ֆակուլտետում ընգրկված ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ՀՀ-ում հրատարակվել է 37 գիտական հոդված, իսկ արտերկրում՝ 24: Առկա են նաև հոդվածներ, որոնք տպագրման են ներկայացված արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում: Գիտական աշխատանքների ուղղություններն ընդլայնված են, օգտագործվում են նորարարական գիտահետազոտական տեխնոլոգիաներ: Աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվում են:

Կազմակերպվել են հանդիպումներ հանրապետությունում գործող այլ բուհերի համապատասխան ստորաբաժանումների, մանկապատանեկան մարզադպրոցների հետ: Համագործակցության շրջանակներում քննարկվել են գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման հնարավորությունները՝ նախատեսելով տարբեր գիտաժողովների նյութերում համատեղ գիտական հոդվածների հրատարակում:

Ուստարվա ընթացքում ֆակուլտետի ամբիոններում կազմակերպվել են ուսանողական ներամբիոնային գիտական կոնֆերանսներ:

Իրականացվել են հանդիպումներ հանրակրթական դպրոցի, նախադպրոցական հաստատությունների, ներառական կրթություն իրականացնող կրթական հաստատությունների, պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ: Ֆակուլտետի ողջ անձնակազմը հայտնել է իր պատրաստակամությունը՝ օգնելու նրանց ուսումնական, գիտական աշխատանքների կազմակերպման, ծրագրերի կազմման, ավելի արդյունավետ մեթոդների ընտրության և կիրառման գործընթացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում անցկացնել անհատական խորհրդատվություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ֆակուլտետում առանձնակի ուշադրություն է դարձվել ուսանողների հաճախումներին: Բոլոր խմբերում պատասխանատուները զրույցներ են անցկացրել ուսանողների հետ: Պարբերաբար ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվել և գործնական քայլեր են կատարվել բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների բացթողումները լրացնելու ուղղությամբ: Մշտապես կազմակերպվել են խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ՝ հատկապես պատերազմի մասնակիցների հետ:

Ստեղծվել է կապ՝ ինստիտուտից դուրս այլ բուհական հաստատությունների համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների հետ: Աշխատանքների սկիզբը դրվել է դեռևս 2016-ից, համագործակցում ենք ԵՊՀ-ի, ԲՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության սպորտի և տուրիզմի ամբիոնների հետ: Համագործակցությունը վերաբերում է համատեղ գիտական հոդվածների կատարման և որոշ աշխատանքային ծրագրերի գրախոսման աշխատանքներին, ինչպես նաև մարզչամանկավարժական գործունեությանը:

«Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավարության խնդրանքով ֆակուլտետի դասախոսների և ուսանողների մի մասը կամավոր հիմունքներով՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ոսուցիչներ, ընդգրկված են կենտրոնի աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի աշխատակիցները մասնակցել են ինստիտուտի, ինչպես նաև քաղաքային շաբաթօրյակների, արշավների, տարբեր նմանատիպ միջոցառումների, որոնք նույնպես ունեն իրենց դրական ազդեցությունը ուսանողների դաստիարակման գործում:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2020–2021 ուսումնական տարում համավարակի և պատերազմի հետ կապված՝ ֆակուլտետում նախատեսված մարզական միջոցառումներ գրեթե չեն անցկացվել:

Ֆակուլտետի գործնական ամբիոնների դասախոսական կազմը ՖԻՄԱ-ի հետ համատեղ 2020թ. անցկացրել է Արցախյան պատերազմում զոհված ուսանողների հիշատակին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնք կրելու են շարունակական բնույթ: Ֆակուլտետի բազմաթիվ ուսանողներ ՀՀ հավաքականի անդամներ են, ՀՀ չեմպիոններ, մի շարք միջազգային մրցումների մասնակիցներ և մրցանակակիրներ, ՀՀ ռեկորդակիրներ:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնել, որ ֆակուլտետի աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է բարելավել գործնական և տեսական դասերի անցկացման պայմանները: Հնարավորության դեպքում ապահովել ժամանակակից գույք և գործնական դասերն անցկացնելու համար ժամանակակից պայմաններ և միջոցներ, համալրել լսարաններն էլեկտրոնային գրատախտակներով, պրոյեկտորներով, ժամանակակից ինտերակտիվ միջոցներով և այլն: Պրոֆեսորադասախոսական կազմի համար ստեղծել աշխատանքային գործունեության բարենպաստ պայմաններ: Երիտասարդ դասախոսներին ընդգրկել տարբեր սեմինարներին և դասապատրաստումներին, որոնք կազմակերպվում են ոչ միայն մեր բուհի, այլև այլ պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից, հնարավորություն տալ տպագրվելու արտասահմանյան հեղինակային ամսագրերում կամ պարբերականներում: Ուսանողների հետ կազմակերպել հանդիպումներ, զրույցներ, ներկայացնել իրենց ընտրած մասնագիտության նշանակությունը և ազդեցությունը, աճող սերնդի առողջության և ֆիզիկական պատրաստության վրա, խրախուսել այն

ուսանողներին, որոնք զբաղվում են գիտահետազոտական գործունեությամբ: Անհրաժեշտ է նշել, որ բուհում արդեն իսկ իրականացվում են բոլոր վերոնշյալ աշխատանքները: Ֆակուլտետում ընգրկված դասախոսների մեծ մասը զբաղվում է նաև մարզչական գործունեությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատանքներ իրականացնել ապագա դիմորդների, մարզադպրոցների ղեկավար կազմի, մարզիչների, ծնողների հետ:

ԲԺՇԿԱԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի առաքելությունը: Բժշկական սարանական գիտությունների ամբիոնի գործունեությունն ուղղված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներում ապագա մասնագետների բժշկական սարանական գիտելիքների, համապատասխան կարողությունների և հմտությունների անհրաժեշտ մակարդակի ձևավորմանը, ուսանողի անձի զարգացմանը և ներդաշնակ դաստիարակությանը:

Ամբիոնի տեսլականը: Բժշկական սարանական գիտությունների ամբիոնն ինստիտուտի ստորաբաժանումներից է, որն իր գործունեությամբ հեռանկարում կարող է առաջարկել՝

1. բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնական նոր ծրագրեր, դասավանդման նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ.
2. ուսումնական և գիտահետազոտական ժամանակակից բազա, որը թույլ կտա արդյունավետ իրականացնել ամբիոնի ուսումնական գործունեությունը, ինչպես նաև ավարտական և մագիստրոսական գիտական հետազոտությունները.
3. ուսանողի հայրենասիրական, համակողմանի դաստիարակության համակարգ.
4. ֆիզկուլտուրային, մարզական և առողջապահական տարբեր կազմակերպություններին բժշկական սարանական խորհրդատվության և տարբեր ծառայությունների կազմակերպում:

Ամբիոնում աշխատում են 21 հոգի, որից՝ 18 պրոֆեսորադասախոսական անձնակազմ, 1 գործավար, 1 լաբորանտ, 1 ուսումնական լաբորատորիայի պատասխանատու:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել և համալրվել են ամբիոնում դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերը: Արդիականացվել է դասախոսությունների ֆոնդը:

2020-2021 ուսումնական տարում բոլոր առարկաներից ստեղծվել են դիդակտիկ էլեկտրոնային նյութեր, մշակվել են դասապրոցեսի և քննությունների հեռավար անցկացման մի շարք փաթեթներ: Ըստ հաստատված ժամանակացույցի՝ իրականացվել են փոխադարձ դասալսումներ, ստուգողական դասալսումներ և բաց

դասեր: Բաց դասերին կիրառվել են նաև դասավանդման ժամանակակից մեթոդներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատակիցների և միջազգային գործընկերների հետ համատեղ սկսվել են «Աթլետիկ սպորտ» մագիստրոսական նոր կրթական ծրագրի մշակման աշխատանքները, որոնք իրենց տրամաբանական ավարտին կհասնեն 2021-2022 ուսումնական տարում:

«Առողջ ապրելակերպ» և «Սպորտային բժշկություն» առարկաների շրջանակներում իրականացվել են վարպետաց դասեր՝ հրավիրված մասնագետների կողմից՝

1. Նիկ Թավուշյանի (ԱՄՆ, Հայ-ամերիկյան սպորտային բժշկության դաշինք) նախաձեռնությամբ «Հետպատերազմյան վերականգնողական բուժում» խորագրով առցանց սիմպոզիում:

2. Մ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ «Ջուրը՝ որպես առողջ ապրելակերպի գործոն» և «Ծխամոլության վտանգները՝ պասիվ ծխողներ» թեմաներով դասախոսություն-քննարկումներ:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները՝ համաձայն ամբիոնի կողմից 2018-2023 թթ. հաստատված գիտական պլանի, որը ներառել է 3 համաամբիոնային թեմաներ.

1. «Մարզիկների սրտանոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի հետազոտություն և գնահատում»,
2. «Մարզիկների սթրեսակայունության հոգեֆիզիոլոգիական բնութագիրը և օպտիմիզացման ալգորիթմը»,
3. «Մարզիկների և ֆիթնեսով զբաղվողների առողջ ապրելակերպի ապահովման ուղիների ուսումնասիրություն»:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են նաև անհատական գիտական թեմաներ, մասնավորապես՝

1. ուսումնական լաբորատորիայի վարիչ Մ.Ռ. Սարգսյան՝ «Մարզիկների սրտի ռիթմի փոփոխականության գնահատման առանձնահատկությունները ֆունկցիոնալ թեստավորման ժամանակ»,
2. ամբիոնի դասախոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հայցորդ Լ.Մ. Խաչատրյան՝ «Սև նյութի նեյրոնների սինապսային երևույթների մորֆոֆունկցիոնալ ուսումնասիրությունը Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա՝ մելանինի և կոբրայի թույնի պրոտեկցիայի պայմաններում»,
3. ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ն.Գ. Տեր-Մարգարյանը ղեկավարում է հայցորդ Ե. Բոլոտովայի անհատական գիտահետազոտական աշխատանքը՝ «Особенности методики физического воспитания в развитии навыков пространственной ориентации у детей с аутосимптоматикой»:

Ն.Գ.Տեր-Մարգարյանը, Մ.Գ.Աղաջանյանը, Լ.Ս. Ստեփանյանը, Կ.Է.Ղուլյանը, Մ.Ռ Սարգսյանն առցանց մասնակցել են Elsevierscience.ru կազմակերպության կողմից անցկացրած վեբինարների շարքին՝ «Подготовка статьи для публикации в научных журналах, индексируемых в международных базах данных»:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տպագրվել է 17 գիտական հոդված, որից 8-ը՝ միջազգային պարբերականներում, 9-ը՝ տեղական:

Ամբիոնի դասախոսներից Մ. Աղաջանյանը, Ն. Տեր-Մարգարյանը, Լ. Ստեփանյանը բուհի Գիտահամակարգող խորհրդի, ինչպես նաև «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամներ են: Լ. Ստեփանյանը «Արդի հոգեբանություն» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ է:

ՌԻՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև բուհի հասարակական կյանքում՝ ակտիվորեն մասնակցելով ՀՖԿՍՊԻ-ի 75-ամյակին նվիրված միջոցառումներին, մասնավորապես՝

1. 44-օրյա պատերազմի ժամանակ և դրանից հետո ամբիոնի ուսանողները՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ն.Գ. Տեր-Մարգարյանի ղեկավարությամբ կամավոր այցելել են Երևան քաղաքի տարբեր հիվանդանոցների վերակենդանացման բաժանմունքներ՝ կատարելով վիրավոր զինվորների սուր փուլի վերականգնման միջոցառումներ:
2. «Սպորտային տուրիզմ և փրկարարական գործ» ամբիոնի վարիչ Ս.Դանիելյանի նախաձեռնությամբ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է տարբեր արշավների:
3. Ամբիոնի աշխատակիցները Հրազդանի կիրճում մասնակցել են համապետական ծառատունկի:
4. Կ.Ղուլյանի և Ն.Զաքարյանի նախաձեռնությամբ և ATP ընկերության աջակցությամբ իրականացվել է ծառատունկ՝ նաև ՀՖԿՍՊԻ-ի տարածքում:
5. Կ.Գրիգորյանի և Ա.Սարգսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Խնկարկում» խորագրով հիշատակի երեկո՝ նվիրված 44-օրյա պատերազմի հերոսներին:
6. Կ.Ղուլյանի և Ն.Զաքարյանի նախաձեռնությամբ “Environment and Health” ՀԿ-ի նախագահ Լիանա Մարգարյանի կողմից «Թափոնների կառավարում» թեմայով անցկացվել են վեբինարներ՝ առաջինկուրսեցիների հետ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի առաքելությունը: Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի առաքելությունն է՝ նպաստել սպորտի և հարակից ոլորտներում

աշխատաշուկայի պահանջներին բավարարող եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրերի պատրաստմանը, սպորտային մանկավարժության գիտության ոլորտը սպասարկող առարկաների միջոցով համեմատական գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը և ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև բուհի կայուն առաջընթացի օժանդակմանը:

Ամբիոնի տեսլականը: Այլ բուհերում աշխատող գիտնականների հետ համատեղ ծրագրերի իրականացում, նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում գիտության արդի պահանջներին: Գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումն ու համապատասխանեցումը հասարակության և տնտեսության արդի պահանջներին:

Բակալավրիատի, մագիստրատուրայի և հետբուհական կրթության դասավանդվող առարկայական ծրագրերի քննարկում, լրացում: Ներամբիոնային և միջամբիոնային գիտագործնական սեմինարների կազմակերպում:

Ամբիոնի նիստեր: Ամբիոնի նիստերն իրականացվել են ըստ աշխատանքային պլանում սահմանված գրաֆիկի՝ ամիսը մեկ անգամ, որոշ դեպքերում կազմակերպվել են նաև արտահերթ նիստեր՝ առարկայական ուսումնամեթոդական փաթեթի հաստատման և ընթացիկ հրատապ հարցերի քննարկման համար (արձանագրություններն առկա են):

2020-2021 ուստարում տեղի է ունեցել 10 ամբիոնի նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի բարելավման, ուսուցման որակի մշտադիտարկման և ուսանողների գիտահետազոտական հարցեր, հեռավար ուսուցման անցնելու մեթոդներ, ինչպես նաև՝ դասախոսների մասնագիտական որակը բարձրացնելուն, մասնագիտական կրթության ոլորտի զարգացման խնդիրները վերհանելուն միտված հարցեր:

Ամբիոնի նիստերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ուսանողների առաջադիմությանը, հաճախումներին, դասախոսների, ուսումնաօժանդակ կազմի աշխատանքային կարգապահությանը և ակադեմիական էթիկայի նորմերին ու բարեվարքությանը վերաբերող հարցերին (Հիմք՝ ամբիոնի նիստերի անցկացման պլան):

Ամբիոնն ունի 55 աշխատակից. այդ թվում՝ 2 գիտությունների թեկնածու-պրոֆեսոր, 7 գիտությունների թեկնածու, 2 գիտությունների թեկնածու-դոցենտ, 41 դասախոս, 3 գործավար:

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Բաժինն իր գործառույթներն իրականացնում է՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ինստիտուտի կանոնադրության և ներքին իրավական ակտերի:

2020-2021 ուսումնական տարում Ուսումնագիտական բաժինն իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով՝

1. Ուսումնական գործընթացին առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում,
2. Ուսանողներին առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում,
3. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից եկող գրությունների պատրաստում և պահանջվող փաստաթղթերի տրամադրում,
4. Քննական գործընթացի կազմակերպում և վերահսկում,
5. Գիտության զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգում,
6. Ուսումնական գործընթացների թվայնացում,
7. Ուսումնական գործընթացի վիճակագրության վարում,
8. Մագիստրատուրայի ուսումնական գործընթացին առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում, մագիստրանտների հետ առնչվող աշխատանքների կազմակերպում,
9. Հետքուհական կրթության կազմակերպում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2020-2021 ուսումնական տարում վերանայվել և կատարելագործվել են ուսումնական պլանները՝ դեկանների և ամբիոնների վարիչների կողմից ներկայացված առարկայացանկերի հիման վրա՝ ըստ ֆակուլտետների: Փոփոխությունները կատարվել են՝ ելնելով արդի աշխատաշուկայի պահանջներից:

2020-2021 ուստարում վերանայվել են նաև 2021-2022 ուսումնական տարվա պլանները և կազմվել պլան-ժամանակացույց, ինչպես նաև որոշ տեխնիկական շտկումներ են կատարվել նախորդ տարիների ուսումնական պլաններում:

Ամբիոնների հետ համագործակցելու արդյունքում բաժինը կազմել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2020-2021 ուսումնական տարվա բեռնվածության աղյուսակը և բաշխումը՝ ըստ ամբիոնների: Ներդրվել է բեռնվածության բաշխման նոր մոտեցում, ըստ որի՝ առավել հստակորեն է արտացոլվում դասախոսների բեռնվածության իրական պատկերը:

Նախորդ տարվա կատարված աշխատանքների վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ 2021թ. մայիս-հունիս ամիսներին նոր մշակված ձևաչափով կազմվել է դասախոսների՝ 2021-2022 ուստարվա բեռնվածությունը և առկա բակալավրիատի 1-ին կիսամյակի դասատախտակի հետ միասին ուղարկվել ամբիոններին՝ դասախոսների միջև ժամերը բաշխելու նպատակով: Ամբիոններից ուղարկված բաշխվածությունը բեռնվածության հետ համեմատելուց հետո փաթեթը ներկայացվել է ֆինանսավարչական գծով պրոռեկտորին:

2020-2021 ուսումնական տարում ներդրվել է դասերի վերահսկողության համակարգը և՛ առկա, և՛ հեռավար ձևաչափերով: 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում, երբ բուհը հեռավար ուսուցումից անցավ լսարանային ուսուցման, դասերի վերահսկողությունը շարունակվում էր իրականացվել ամենօրյա ռեժիմով, կանոնավոր կերպով ստուգվում էին ինչպես դասախոսների, այնպես էլ

ուսանողների ուշացումներն ու բացակայությունները: Այդ ամենն արձանագրվում էր էլեկտրոնային հարթակում, ամբիոնների հետ տարվում էր համատեղ շարունակական աշխատանք, մասնավորապես՝ ուսանողների բացակայության մասով լուծումներ գտնելու նպատակով: Պետք է արձանագրել, ցավոք, այս հարցում մեծ ձեռքբերում չունենք, սակայն իրականացված աշխատանքի արդյունքում առաջարկվել է խստացնել ուսանողների բացակայությունները զսպող միջոցառումները, որոնք առաջիկայում կիրառելու դեպքում կնպաստեն շոշափելի հաջողությունների:

Վերանայվել և կազմվել է հայցորդների, ասպիրանտների, դոկտորանտների համար ուսումնական պլանով նախատեսված ծրագրերը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ուսանողների հետ աշխատանքը բավականին ծավալուն, բայց միաժամանակ արդյունավետ է իրականացվել բաժնի ֆակուլտետի պատասխանատուների աշխատանքի շնորհիվ:

Բաժնի կողմից ընդունվել է ուսանողների ավելի քան 1000 դիմում, որոնք տարբեր բնույթի բովանդակություն են պարունակում (ազատման, վերականգնման, հեռացման, Ազգային բանակ զորակոչվելու, տեղափոխման): Ուսումնագիտական բաժինը, համագործակցելով այլ բաժինների հետ, բոլոր դիմումներին ընթացք է տվել, և չկա գրեթե մեկ դիմում, որին ընթացք չի տրվել:


Ֆակուլտետի պատասխանատուների կողմից ուսանողների պահանջի հիման վրա տրամադրվել են ուսանողի կարգավիճակի վերաբերյալ 550 տեղեկանք:

Ուսումնագիտական բաժնի կողմից ուսանողներին տրվել է 804 հրաման, որից՝ 67 հեռացման, 303 վերականգնման, 53 ազատման, 203 բանակ զորակոչվելու, 178 ներբուհական ակադեմիական շարժունության, փոխատեղման և ուսանողների վերաբերյալ, ինչպես նաև այլ հրամաններ՝ ընդունելության, ավարտման, ուսման վճարի մասնակի փոխհատուցման, փոխատեղման և այլն:


ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐՔԸ

2020-2021 ուսումնական տարում բակալավրում սովորել է 2265 ուսանող, որից՝ 949 առկա բակալավր, 1258-ը՝ հեռակա բակալավր, այդ թվում՝ 58 սփյուռքահայ և օտարերկրացի: Ցածր առաջադիմության պատճառով բուհից հեռացվել է 190 ուսանող:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ




ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ



2020-2021 ուսումնական տարում ինստիտուտն ավարտել է բակալավրի 520 ուսանող, որից 275-ը՝ առկա, 245-ը՝ հեռակա:

ԱՎԱՐՏԱԾ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ



2020-2021 ուսումնական տարում զորակոչվել է 298 ուսանող:

Ստորև ներկայացված է 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ

Հ	Մասնագիտություն	2020-2021 ուստարի					
		Առկա			Հեռակա		
		ար.	իգ.	ընդ.	ար.	իգ.	ընդ.
1	Մասնագիտական մանկավարժություն	655	95	750	1015	62	1077
2	Սպորտ	105	52	157	111	51	162
3	Լրագրություն	27	15	42	17	2	19
	Ընդամենը	787	162	949	1143	115	1258

2020-2021 ուսումնական տարում վիճակագրական տվյալներով ինստիտուտից հեռացվել է 568 ուսանող և վերականգնվել 315 ուսանող:

Ստորև աղյուսակով ներկայացված է հեռացված և վերականգնված ուսանողների վերաբերյալ տվյալները:

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԵՌԱՑՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄ

Հ		2020-2021 ուստարի	
		Քանակ	Ուսանողության քանակ (%)
1	Հեռացված ուսանողներ	568	25,73
2	Վերականգնված ուսանողներ	315	14.27


ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2020-2021 ուսումնական տարում Ուսումնագիտական բաժինը, ֆակուլտետները, ամբիոնները, որակի ապահովման կենտրոնը նպաստել են հաճախումների և առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելուն: Ուսանողների հետ անցկացվել են խորհրդակցություններ, զրույցներ, կոնսուլտացիաներ:


Երկու կիսամյակների կտրվածքով՝ գարնանային և աշնանային, հաճախելիությունը համապատասխանաբար կազմել է՝ աշնանային առկա՝ 71,8%, հեռակա՝ 65.5%, գարնանային առկա՝ 69,7%, հեռակա՝ 79,2%:

Ուսանողների առաջադիմությունը ԱՏՍՏԿ ֆակուլտետում առկա ուսուցման ձևում համապատասխանաբար կազմել է՝ գերազանց 21.68%, լավ՝ 34.22%, բավարար՝ 39.92%, անբավարար՝ 4.18%, իսկ հեռակա ուսուցման ձևում կազմել է՝ գերազանց՝ 12%, լավ՝ 34%, բավարար՝ 48%, անբավարար՝ 6%:

ԱՏՍՏԿ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ




**ԱՏՏՏԿ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**




ՄՄ ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում ուսանողների առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ գերազանց՝ 10%, լավ՝ 33%, բավարար՝ 50%, անբավարար՝ 7 %, իսկ ՄՄ ֆակուլտետի հեռակա ուսուցման ձևում՝ գերազանց՝ 4.5%, լավ՝ 29.1%, բավարար՝ 62.7%, անբավարար՝ 3.7%:

**ՄՄ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**



ՄՄ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2020-2021 ուսումնական տարում բաժնի կողմից տրամադրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից պահանջվող փաստաթղթեր՝ ըստ սահմանված ձևաչափի (46):

Սահմանված ժամանակահատվածում նախարարությունից եկող գրություններին պատշաճ պատասխան է տրվել:

2020 թվականի Արցախյան պատերազմի մասնակից ուսանողների հետ կապված՝ բաժինը սերտ համագործակցել է նախարարության հետ, որի շնորհիվ բուհի մասնակից ուսանողներին պետության կողմից տրվել է մեկ կիսամյակի ամբողջական փոխհատուցում (481 ուսանող):

ՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ինստիտուտում ընթացող բարեփոխումների շրջանակներում բոլոր գրավոր քննություններն անցկացվում են անանուն և փակ ձևաչափով՝ առանց դասախոսների ներկայության: Քննական լսարաններում ներկա են գտնվում քննությունների վերահսկման գործառույթն իրականացնող աշխատակիցները: Քննություններից 4 շաբաթ առաջ ամբիոններն ուղարկում են քննական հարցաշարերը, տոմսերն ու թեստերը, որոնք ստուգվում են, խմբագրվում, ըստ ուսանողների քանակի պատճենահանվում և տեսակավորվում են ծրարների մեջ: 2020-2021 ուստարում նշված ձևաչափով կազմակերպվել են կիսամյակային և ընդունելության քննությունները:

2020-2021 ուստարվա միջանկյալ քննություններն իրականացվել են քննական թեստային հարցաշարերի միջոցով: 1-ին կիսամյակի քննությունները պատշաճ իրականացնելու համար հրավիրվել են քննական գործընթացի 15 անկախ պատասխանատուներ՝ քննական հսկիչներ: 2-րդ կիսամյակում այդ գործառույթը դրված է եղել ամբիոնների գործավարների վրա, որոնք քննությունից թույլ են տալիս անցնել, թե որ լսարանն են մտնելու:

Հսկիչների կողմից ուսանողների խախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Ֆակուլտետի պատասխանատուների կողմից կազմվել և տրամադրվել են քննական տեղեկագրեր:

Բաժինը ատեստավորման օրերին զբաղվել է նաև կազմակերպչական աշխատանքներով. կազմվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների անդամների հրավեր-գրություններ:

Այս տարվա մայիս և հունիս ամիսներին բուհում առաջին անգամ անցկացվեցին նաև ընդունելության փորձնական քննություններ, որոնց նպատակն էր՝ ապագա դիմորդներին ծանոթացնել ընդունելության կարգին և ձևաչափին: 1-ին փուլին գրանցվեց 8 դիմորդ, իսկ 2-րդ փուլին՝ 25 դիմորդ (ընդհանուր՝ 33), որոնցից միայն 2-ին չհաջողվեց հաղթահարել անցողիկ շեմը: Շատ ոգևորիչ էր այն փաստը, որ փորձնական քննություններին մասնակցած բոլոր դիմորդներն ընդունելության քննություններից հետո հետադարձ կապով փաստեցին այդ քննությունների կարևորությունն ու արդյունավետությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

COVID-19 համավարակով պայմանավորված՝ 2020-2021 ուստարվա հոկտեմբերին որոշում կայացվեց բուհում ուսումնական գործընթացը կազմակերպել հեռավար եղանակով: Սեղմ ժամկետներում ՏՏ բաժինը ZOOM օգտահաշիվներ տրամադրեց բոլոր դասախոսներին, և դրանք տեղադրվեցին դասատախտակների վրա: Դասերի վերահսկողությունն ամենօրյա ռեժիմով իրականացվում էր ուսումնական մասի համապատասխան մասնագետի կողմից: Իրավիճակից ելնելով՝ Ուսումնագիտական բաժնում բացվեց նաև ուսուցման էլեկտրոնային կառավարման մասնագետի պաշտոնը, որը պատասխանատու է ուսանողների և դասախոսների համար ուսուցման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և գործածման համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ հեշտացվել է ներինստիտուտային և արտաքին աշխարհի հետ կապը: Բաժինը, համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ, ինստիտուտի կայքի և ֆեյսբուքի էջերում տարածել է ուսումնական գործընթացների՝ դասացուցակների, քննատախտակների, ինստիտուտի կողմից ուսանողներին մասնակի փոխհատուցման վերաբերյալ տեղեկատվություններ:

2020-2021 ուսումնական տարում նորարարություն է համարվում ուսանողների համար էլեկտրոնային հասցեների ստեղծումը և սպասարկումը, որի շնորհիվ էլ ավելի է հեշտացվել ինստիտուտ-ուսանող կապը:

Բաժինը, համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ, աշխատում է նոր կրեդիտային համակարգի ստեղծման վրա և նպաստում է, որ 2021-2022 ուսումնական տարում ամբողջովին պատրաստ լինի նոր կրեդիտային համակարգը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ հեշտացվել է ներինստիտուտային և արտաքին աշխարհի հետ կապը: Գործընթացը մեկ համակարգում դարձել է առավել թափանցիկ և ամբողջական:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հաշվետու ուսումնական տարում մագիստրատուրայի առկա ուսուցման ընդունելությունն ընթացել է 2 փուլով. ընդհանուր հաշվարկով ընդունվել է 97 ուսանող՝ կրթական 7 ուղղություններից: Առաջին փուլով մագիստրատուրա են ընդունվել 27 ուսանող, բոլորն էլ անվճար, առանց տարկետման իրավունքի: Առաջին փուլով ընդունված 5 ուսանողներ զորակոչվել են Ազգային բանակ: Երկրորդ փուլով ընդունվել է 74 ուսանող, որից 71-ը՝ վճարովի, իսկ 3-ը՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված, անվճար հիմունքներով: 1 ուսանող վերականգնվել է առկա ուսուցման համակարգում անվճար հիմունքներով՝ Ազգային բանակից զորացրվելուց հետո:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՌԻԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՌԿԱ		
Մասնագիտություն	Կրթական ծրագիր	Մագիստր. Թիվ
Մասնագիտական մանկավարժություն	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	20
	Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ	9
	Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	4
Սպորտ	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)	35
Լրագրություն	Մարզական լրագրություն	2
Հոգեբանություն	Հոգեբանություն	5
Կառավարում	Մենեջմենտ	15
Շուկայագիտություն	Մարկետինգ	7
ԸՆԴՀԱՆՈՒՐ		97

Ինչ վերաբերում է մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի ընդունելությանը, ապա պետք է շեշտել, որ ընթացիկ ուսումնական տարում ընդունվել է 54 ուսանող, որոնցից 27-ն այլ բուհերի շրջանավարտներ են:

**ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՀԵՌԱԿԱ		
Մասնագիտություն	Կրթական ծրագիր	Մագիստր. Թիվ
Մասնագիտական մանկավարժություն	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	24
	Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ	14
	Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	3
Սպորտ	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)	10
	Ադապտիվ սպորտ	2
Լրագրություն	Լրագրություն	1
ԸՆԴՀԱՆՈՒՐ		54

Պետք է նշել, որ մագիստրատուրայի առկա ուսուցման վճարովի համակարգից իրենց դիմումի համաձայն ինստիտուտից ազատվել է 5 մագիստրանտ, 6 մագիստրանտ հեռացվել է ինստիտուտից՝ բավարար կրեդիտներ չունենալու պատճառով: Մեկ մագիստրանտ երկրում չլինելու պատճառով մագիստրոսական թեզ չի պաշտպանել:

Ընդհանուր հաշվարկով այս ուսումնական տարում հրամանագրվել է 85 ուսանող_և ավարտել 87-ը, որից երկուսը երկտարեցի են և մասնակցել են միայն թեզի պաշտպանությանը:

Ուսումնական գործընթացը, ինչպես նաև ուսանողների հաճախումները, մշտապես վերահսկվել են Ուսումնագիտական բաժնի և մասնագիտական ամբիոնների կողմից: Այս ուսումնական տարվա ընթացքում, շնորհիվ համատեղ աշխատանքի, ուսանողների հաճախումները բավարար են եղել:

2020թ. դեկտեմբերի 22-ին և 23-ին կազմակերպվեց հեռակա ուսուցմամբ 24 շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Ըստ այդմ՝ ըստ մասնագիտությունների հրավիրվեցին հանձնաժողովի նախագահներ: «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ուղղության հանձնաժողովի նախագահը պրոֆեսոր Հ. Թումանյանն էր, իսկ «Սպորտ» մասնագիտության «Ադապտիվ սպորտ» և «Առողջարարական ֆիզիկական

կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը ղեկավարում էր Բ.Գ.Թ., դոցենտ Մ.Ն.Ավագյանը:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Մասնագիտական կրթական ծրագիր	Ընդհանուր քանակ	Ընդհանուր դիպլոմների քանակ		Գերա- զանց՝ 90-94 միա- վոր		Գերա- զանց՝ 95-100 միա- վոր		Լավ՝ 80-84 միա- վոր		Լավ՝ 85-89 միա- վոր		Զեն ներկայացել	
		n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ադապտիվ սպորտ	2	2	100	-	-	2	100					-	-
Առողջարարական ֆի- զիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա	7	3	43	2	28.6	1	14.3	3	42.9	1	14.3	-	-
Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	15			6	40	9	60	-	-	-	-	-	-

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի արդիականությանն ու բովանդակությանը, պետք է նշել, որ մագիստրանտները՝ ըստ իրենց թեզերի ուղղվածության, կատարել են մեծածավալ և բազմակողմանի ուսումնասիրություններ և ըստ այդմ ստացել փորձարարական արժեքավոր տվյալներ:

2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանությունն ընթացել է ըստ հաստատված ձևաչափի՝ հիմքում ունենալով ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ինստիտուտի ղեկավարի համապատասխան որոշումները և հրամանները:

Մագիստրատուրայի առկա ուսուցման շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը տեղի է ունեցել ինստիտուտի ղեկավարի 2021թ. մայիսի 20-ի թիվ 25-Ա հրամանով հաստատված համապատասխան ժամանակացույցի և ընթացել է հունիսի 21-30-ը ներառյալ:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզերի պաշտպանության համար ձևավորվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ և, ըստ կրթական ուղղությունների՝ հրավիրվել են հանձնաժողովի նախագահներ:

Այսպես՝ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում էր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ՖԴ և ԱԻ ամբիոնի վարիչ, մ.գ.թ. Հ.

Գաբրիելյանը, «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը՝ ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.թ. Ի.Հարությունյանը, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղության հանձնաժողովը՝ Մ.Հերացու անվան ԵՊԲՀ Այլընտրանքային բժշկության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մ. Ն. Ավագյանը, «Հոգեբանություն» մասնագիտության հանձնաժողովը՝ Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Ա.Ա. Նադոյանը, «Մենեջմենտ» և «Մարկետինգ» կրթական ուղղությունների հանձնաժողովը՝ Եվրասիական ֆոնդային բորսաների միության գլխավոր քարտուղար, տ.գ.թ. Կ. Սարոյանը և «Մարզական լրագրություն» կրթական ուղղության հանձնաժողովը՝ ԵՊՀ ակադեմիկոս, Հ.Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ.Եղիազարյանը:

Բոլոր կրթական ուղղությունների հանձնաժողովների աշխատանքները սկսվել են առավոտյան ժամը 09³⁰ և ավարտվել 13³⁰: Հանձնաժողովներում ամփոփիչ ատեստավորումն անցել է կազմակերպված, օբյեկտիվ գնահատմամբ, փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Բողոքարկում չի արձանագրվել:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրվել են մասնակցել մագիստրատուրայի առկա ուսուցման 87 մագիստրանտ, որից՝ երկու մագիստրանտ՝ Վարդան Մասիսի Գևորգյանը (Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ վոլեյբոլ) և Շողիկ Ավետիսեանը (հոգեբանություն) որպես երկտարեցի՝ իրենց դիմումի համաձայն մասնակցել են թեզի պաշտպանությանը:

Թեզերի պաշտպանության արդյունքները՝ ըստ կրթական ուղղությունների, ներկայացված է աղյուսակում:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

№	Մագիստրոսական կրթական ուղղություն	Ընդհանուր քանակ	Ընդհանուր դիմումների քանակ		Գերազանց՝ 90-94 միավոր A		Գերազանց՝ 95-100 միավոր A+		Լավ՝ 80-84 միավոր B		Լավ՝ 85-89 միավոր B+		Բավարար՝ 60-69 միավոր C		Բավարար՝ 70-79 միավոր C+		Զեղչ ներկայացել	
			n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	N	%
1.	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	18	13	72.2	4	22.2	12	66.6	-	-	2	11.1	-	-	-	-	-	-
2.	Ֆիզիկական դաս. տես. և տեխնոլոգիաներ	9	6	66.6	4	44.4	5	55.5	-	-	-	-	-	-	-	-	-	-

3.	Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա	32	15	46.8	9	28.1	10	31.2	6	18.7	4	12.5	3	9.3	-	-	-	-
4.	Մարզական լրագրություն	2	2	100	-	-	2	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
5.	Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	2	-	-	-	-	2	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
6.	Հոգեբանություն	6	5	83.3	-	-	6	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
7.	Մենեջմենտ	14	6	42.8	3	21.4	3	21.4	3	21.4	2	14.2			3	21.4	-	-
8.	Մարկետինգ	4	1	25	-	-	1	25	1	25	-	-	1	25	1	25	-	-
Ընդամենը		87	48		20		41		10		8		4		4		-	-

ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՅՈՐԴՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2020-2021 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ-ում իրականացվել է հետքուհական կրթություն ժԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» մասնագիտությամբ: Միևնույն ժամանակ հաշվետու տարում բուհը թույլտվություն է ստացել իրականացնել հետքուհական կրթություն ևս 2 մասնագիտություններով՝ ժԹ. 00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» և Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»:

2020-2021 ուսումնական տարվա սկզբում ինստիտուտում ուսանել են պետական պատվերով 5 ասպիրանտներ (2-ը՝ առկա, 3-ը՝ հեռակա) և 11 հայցորդներ:

Հաշվետու տարում կազմակերպվել և իրականացվել է 2021-2022 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն: Արդյունքում ընդունվել է ֆիզիկական վերականգնման ամբիոնի դասախոս Աննա Աշոտի Մարտիրոսյանը (առկա ուսուցմամբ, անվճար հիմունքներով) Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ և հրամանագրվել Բժշկական-սարանական գիտությունների ամբիոնում՝ որպես ասպիրանտ:

2020-2021 ուստարում ինստիտուտի հայցորդներ են ձևակերպվել Ղազախստանի քաղաքացիներ՝ Այնաշ Տյույպբաևան (Ֆիզիկ մարզաձևերի ամբիոն, գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Արմեն Հակոբյան), Եկատերինա Յուրտաևան, Մերուերտ Իմանբաևան (Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոն, գիտական ղեկավար՝ մ.գ.թ., պրոֆեսոր Սուսաննա Հովեյան), Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի գործավար Վարսիկ Աբգարյանը (Սպորտային մանկավարժության և հոգեբանության ամբիոն, գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Չատինյան), Արմինե Նովրուզյանը (Լրագրության ամբիոն), Մելինե Հովհաննիսյանը և Կարինե Հակոբյանը (Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոն):

Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասպիրանտներ Արման Եղիշի Դավթյանը (հեռակա) և Աննա Հակոբի Կովալյովան (առկա) ավարտել են ասպիրանտուրան: Իսկ հայցորդներ Ալեն Ասատրյանը և Գոհար Նիկողոսյանը, անձնական պատճառներից ելնելով, դադարեցրել են հայցորդության ուսումնառությունը:

Այժմ ինստիտուտում ուսանում են 4 ասպիրանտ (2-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա) և 16 հայցորդ, որոնցից 6-ն այլ կազմակերպությունների գիտաշխատող են (աղյուսակ 1):

Մասնագիտական որակավորման քննություն են հանձնել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ՝ Աննա Աշոտի Կովալյովան, Արման Եղիշի Դավթյանը և հայցորդ Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանը: Վերջիններս պատրաստվում են նախնական փորձաքննության:

Հաշվետու տարում ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել է ուսումնական գործընթաց՝ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով, որն ավարտվել է ստուգարքներով և քննություններով:

ՑՈՒՑԱԿ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ

Ամբիոն	Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական ղեկավար	Մասնագիտություն և դասիչ	Թեմայի անվանում
ՀԱՅՑՈՐԴ 2018թ.					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	1	Ղանթարյան Էվելինա Էդուարդի	Ե.Հակոբյան	ԺԳ. 00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա	Գաղափարական դաստիարակությունը ֆիզիկական կուլտուրայի մասնագետների համակարգում
	2	Խաչատրյան Սաթենիկ Գառնիկի	Ֆ.Ղազարյան		Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդիկան ֆիզիկական կուլտուրայի դասերին
	3	Ղազարյան Իզաբելա Աղաբեկի	Ե.Հակոբյան		Օլիմպիական դաստիարակության բովանդակությունը և իրականացման մեթոդիկան նախապատրաստական հաստատություններում
	4	Էլոյան Նարեկ Արայիկի	Ե. Հակոբյան		Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում
Սպորտային մանկավարժություն և հոգեբանություն	5	Յայյան Եղիա Խաչիկի	Ա. Չատինյան		Վաղ մասնագիտացման փուլում ուսումնագիտական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները ծանրամարտում
2019թ.					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	6	Մատվիևսկայա Անաստասիա	Ս. Հովեյան	ԺԳ. 00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա	Հոգեկան զարգացման խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական ներառումը ֆիզիկական կուլտուրայի միջոցներով
Բժշկական-սաբանական	7	Բոլոտովա Ելենա	Ն. Տեր-Մարգարյան		Աուտիզմով երեխաների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները

գիտություններ					տարածական կողմնորոշման հմտությունների ձևավորման փորձում
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	8	Վդովին Դմիտրի	Ե. Հակոբյան		Առաջնությունների ծնողների ուսուցման մեթոդիկական ֆիզիկական դաստիարակության հիմունքներին
Սպորտ.մանկ. և հոգեբանություն	9	Մուրադյան Գոհար	Ա.Չատինյան		Ուսանող-լրագրողների մասնագիտական կոմպետենցիաների հսկման և գնահատման համակարգը ֆիզկուլտուրային- մարզական բուհերում
2020թ.					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	10	Յուրտասա Եկատերինա	Ս. Հովեյան	ԺԳ. 00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա	Մտավոր խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման կարողությունների կատարելագործումն ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի միջոցով
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	11	Իմանբակա Մերուերտ	Ս. Հովեյան		Շարժախաղերի ազդեցությունը 6-10 տարեկան առաջնությունների կողորդինացիոն ընդունակության մշակման վրա
Ֆիզիկկ մարզաձևեր	12	Տյուլյուբայևա Այնա2	Ա. Հակոբյան		Առաջնություն երեխաների շարժողական ընդունակությունների մշակումը լողի և բադմինտոնի միջոցով
Մանկ և հոգեբան.	13	Աբգարյան Վարսիկ	Ա. Չատինյան		Դեռահաս մարզիկների սոցիալականացման գործընթացի բարելավման մանկավարժական տեխնոլոգիան (բոնցքամարտի օրինակով)
2021թ.					
Մարզական լրագրություն	14	Նովրուզյան Արմինե	Ա.Չատինյան	ԺԳ. 00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա	
Սպորտի մանկավարժության և հոգեբանություն	15	Հովհաննիսյան Մելինե	Լ. Ստեփանյան	ԺԹ. 00.01 Հոգեբանության տեսություն և պատմություն	
	16	Հակոբյան Կարինե	Լ. Ստեփանյան		
ԱՍՊԻՐԱՆՏ					
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	1	Հակոբյան Հովհաննես (հեռակա, պ. պ.)	Ա.Հակոբյան	ԺԳ. 00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա	Պատանի շախմատիստների ֆիզիկական պատրաստության կատարելագործման ուղիները
Մարմն. և սպ. պարեր	2	Պետրոսյան Արմեն (հեռակա, պ. պ.)	Ֆ.Ղազարյան		Կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկական մեթոդիկական մարմնամարզության միջոցներով
ՖԴՏ, մեթոդիկա և ԱՖԿ	3	Ավետիսյան Արման (առկա, պ. պ.)	Ա.Չատինյան		10-12 տարեկան ծյուղոյիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը քրոսֆիթի տարրերի կիրառմամբ
Բժշկական-բանական գիտությունների ամբիոն	4	Մարտիրոսյան Աննա (առկա, պ. պ.)		Գ.00.09 Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	

ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ

ԱՏՏՏԿ ֆակուլտետի ուսանողների մասնագիտական, կլինիկական և մանկավարժական պրակտիկաներն անցկացվել են նախապես հաստատված կազմակերպություններում: «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» մասնագիտության ուսանողներն իրենց կլինիկական պրակտիկան անցկացրել են ՀՀ-ի վերականգնողական կենտրոններում՝ «Ալտմեդ», «Արբես», «Վիզմոր», Հանրապետական վերականգնողական կենտրոն, «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ, ինչպես նաև բժշկական հաստատություններում: 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի 33 շրջանավարտներից 13-ն աշխատում են ՀՀ տարբեր վերականգնողական կենտրոններում և բուժհաստատություններում: Մասնավորապես, 5 մագիստրոս աշխատում է «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն»-ում, 1-ական ուսանող՝ «Լխուե» կրթահամալիրում, «Վիտալոնգա» բժշկական կենտրոնում, «Երագի տուն» մանկական վերականգնողական կենտրոնում, «Ալտմեդ» վերականգնողական կանխարգելիչ և ավանդական բժշկության կլինիկայում, «Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն»-ում, Հանրապետական վերականգնողական կենտրոնում, Ռ. Գոլեցյանի անվան ըմբշամարտի ՕՀՄԴ-ում:

«Լրագրություն» մասնագիտության ուսանողները պրակտիկան անցկացրել են ՀՀ հեռուստատեսություններում՝ Հ1, Արմենիա, Երկիր մեդիա լրատվական կայքերում, հանրային ռադիոյում, Vnews մեդիայում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության լրատվության բաժնում: Պրակտիկայի ավարտին 6 ուսանողներ ստացել են աշխատանքի առաջարկ և աշխատում են VNEWS մեդիայում՝ որպես լրագրող-մեկնաբաններ, 1 ուսանող՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության լրատվական բաժնում՝ որպես թղթակից, 1 ուսանող՝ Արմենպրես գործակալությունում՝ որպես լրագրող-թղթակից, «Ֆիզիկական դաստիարակություն՝ սպորտային մարզումներ (փրկարարական գործ)» մասնագիտությամբ Ռուս-հայկական փրկարարական կենտրոնում, ԱԻՆ-ում:

2020-2021 ուստարվա «Ֆիզիկական դաստիարակություն՝ սպորտային մարզումներ (փրկարարական գործ)» մասնագիտության շրջանավարտներից 8-ն աշխատում են ԱԻՆ-ում և մասնավոր փրկարարական կազմակերպություններում, 14-ը՝ ուժային կառույցներում:

«Սպորտի հոգեբանության» մագիստրոսական ծրագրի ուսանողներն իրենց պրակտիկան անցկացրել են «Տորք Անգել» ակումբում, մարզական ֆեդերացիաներում, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում, դպրոցում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով շարունակական և լրացուցիչ կրթության դերը մասնագետների պատրաստման գործընթացում՝ այժմեական և արդիական է վերապատրաստման

դասընթացների իրականացումը ոչ ֆորմալ կրթության շրջանակներում, որը հնարավորություն կընձեռի և՛ ուսանողներին, և՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմին, և՛ ուսումնաօժանդակ, և՛ վարչական աշխատակիցներին զարգացնել և կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները և հմտությունները: ՀՖԿՍՊԻ-ի կայուն զարգացման հրամայականն է ցկյանս կրթության իրականացումը, որը կապահովվի՝

1. երկարաժամկետ և կարճաժամկետ ուսուցողական ծրագրերի,
2. վարպետաց դասերի, կլոր-սեղան քննարկումների, գիտագործնական սեմինարների,
3. թրենինգային ծրագրերի և այլ միջոցառումների օգնությամբ:

Լրացուցիչ և շարունակական կրթության շրջանակներում կազմակերպվող կարճաժամկետ և միջնաժամկետ վերապատրաստման դասընթացներին այլ բուհերի ուսանողների, դասախոսների, կազմակերպությունների աշխատակիցների մասնակցությունը կնպաստի բուհի ճանաչելիությանը մի կողմից, մյուս կողմից՝ ֆինանսական հոսքերի դիվերսիֆիկացիային:

Հաշվետու ժամանակաշրջանում բուհում արդեն սկսվել են լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացումը: Մասնավորապես, երկար տարիներ գործող «Մերսում և առողջարարական ֆիզկուլտուրա» 5-ամսյա դասընթացներից բացի, բացվել են նաև «Ֆիթնես-մարզիչների պատրաստման» 5-ամսյա դասընթացներ, ինչպես նաև նախապատրաստական դասընթացներ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների համար: Բացի այդ իրականացվել են «Ֆուտբոլային մեկնաբան»-ի վերապատրաստման դասընթացների նախապատրաստական աշխատանքները:

ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կրթական բարեփոխման ռազմավարության գերակա խնդիրը կրթության որակի բարելավումն է, ինչի ուղղությամբ իրականացվում են մի շարք միջոցառումներ և ծրագրեր, այդ թվում նաև՝ նախապատրաստական ծրագրեր:

Նախապատրաստական դասընթացներն ուղղված են հանրակրթական հաստատությունների ավարտական դասարաններում սովորողների, շրջանավարտների դպրոցում ձեռք բերած գիտելիքների ամրապնդմանը և համակարգմանը, ինչպես նաև առարկայական ծրագրերի յուրացմանը, գիտելիքի ձեռքբերմանը:

Ծրագրի նպատակն է՝ դիմորդների համար կազմակերպել նախապատրաստական դասընթացներ՝ ուղղորդված և համակարգված գիտելիքի փոխանցման և ամրապնդման ճանապարհով:

Ծրագրի առանձնահատկությունն է՝ մատչելիություն, խորքային, համակարգված գիտելիք, անհատական մոտեցում, բարձր որակավորում և մեծ փորձ ունեցող դասախոսների ընտրություն (թիրախային խմբեր՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ, ՀՀ հիմնական դպրոցի շրջանավարտներ):

Նախապատրաստական ծրագիրը ներառում է տարբեր կրթական ծրագրերով ընդունելության քննությունների առարկաներ՝ կենսաբանություն, հայոց լեզու, ԸՖՊ, ՖԿ և սպորտի պատմություն, մարզաձևեր:

Նախապատրաստական դասընթացները լուծում են բուհի առջև ծառացած մի քանի խնդիր՝ 1. ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացում, 2. գիտակցված մասնագիտական ընտրություն կատարած դիմորդների աճ, 3. բուհում ֆինանսական հոսքերի ավելացում:

Ծրագիրը ներկայացվել է ռեկտորատում և արժանացել հավանության:

2020-2021 ուստարում ՀՖԿՍՊԻ-ում կրկին մեկնարկեցին նախապատրաստական դասընթացներ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների համար: Մշակվեց դասընթացների ընթացակարգը, որոշվեց վճարի չափը, որը նույնմբերին հաստատվեց ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից: Դասընթացներին գրանցվեցին ՀՀ 4 և օտարերկրյա 23 քաղաքացիներ: Օտարերկրյա քաղաքացիներից 15-ն ուսումնական տարվա ընթացքում հեռացվեցին բացակայությունների պատճառով: ՀՀ 4 քաղաքացիները հաջողությամբ հանձնեցին ավարտական քննությունները, իսկ օտարերկրյա քաղաքացիներից միայն 5-ին հաջողվեց հաղթահարել անցողիկ շեմը:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Լրացուցիչ շարունակական կրթության նպատակը մասնագիտական կարողությունների զարգացումն է, ցկյանս կրթության ապահովումը հավելյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերի իրականացման հաշվին: Լրացուցիչ կրթական ծրագրերն ուղղված են նաև մասնագիտական կարողությունների, որակավորումների բարձրացմանը: ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական ծրագրի նպատակներից է տարբեր միջնաժամկետ ծրագրերի իրականացումը: Բուհում երկար տարիներ գործում է **«Մերսում և առողջարարկան ֆիզկուլտուրա» 5-ամսյա դասընթաց**, որը ներառում է 400 ակադեմիական ժամ տեսական և գործնական դասընթացներ: Կրթական ծրագրի ավարտին ունկնդիրներին քննական հանձնաժողովի որոշմամբ տրվում են ավարտական վկայականներ:

Հաշվետու ժամանակաշրջանում բացվել է 2 խումբ վերոգրյալ դասընթացներ: 1-ին խմբում հավաքագրվել են 10 հոգի, որոնք հաջողությամբ անցել են դասընթացը և հանձնել քննությունը: 2-րդ խմբում հավաքագրվել են 25 ուսանող, որոնցից 23-ը հաջողությամբ ուսումնասիրել են նյութը և հանձնել քննությունը, 2-ը չեն ստացել ավարտական վկայական՝ քննությունն անհաջող հանձնելու պատճառով:

«Ֆիթնես-մարզիչների վերապատրաստման» 5-ամսյա դասընթաց

Հաշվետու ժամանակաշրջանում բուհն իրականացնում է նաև **«Ֆիթնես-մարզիչների վերապատրաստման» 5-ամսյա դասընթաց**: Ծրագրի հեղինակներն են՝ Ե. Հակոբյանը, Ն. Տեր-Մարգարյանը և Ք. Քեշիշյանը: Ծրագիրը բաղկացած է 4 մոդուլներից, ընդհանուր՝ 200 ժամ ակադեմիական տևողությամբ: Յուրաքանչյուր մոդուլի ավարտին ուսանողները հանձնում են քննություն և ստանում

մասնակցության հավաստագիր, 4 մոդուլների հաջող հանձնումից հետո ստանում են ավարտական վկայական:

Հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է 1-ին* խումբը, որը կազմված է 7 հոգուց՝ բուհի ուսանողներից և գործող մարզիչներից: Ծրագիրն իրագործման փուլում է: Առաջին և երկրորդ փուլերն ավարտվել են, երրորդ և չորրորդ փուլերը կիրականացվեն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Ծրագրի շրջանակում ուսումնասիրվում են ֆիթնես մարզչի որակավորման համար անհրաժեշտ մի շարք առարկաներ՝ ֆունկցիոնալ անատոմիա և բիոմեխանիկա, ֆիզիոլոգիա, ֆիթնեսի պատմություն, ֆիթնեսի ձևեր, բեռնվածության տեսություն, նուտրիցիոլոգիա և այլն:

«Ֆուտբոլային մեկնաբան» վերապատրաստման դասընթացների մեկնարկի համար իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ.

1. Կազմվել է ծրագիր:
2. Նկարահանվել է գովազդային տեսահոլովակ:
3. Ցուցակագրվել են դիմորդներ:

Նախապատրաստական աշխատանքները շարունակվեցին նաև օգոստոս ամսին, որին հաջորդեցին 1-ին խմբի դասընթացների մեկնարկը:

«ՓՈՔՐԻԿ ՕԼԻՄՊԻԿ» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐ

Ամառային արձակուրդները հետաքրքիր ժամանցի և անհոգ հանգստի ժամանակն են: Մարդու բնականոն գործունեության համար կարևոր է հանգստի և աշխատանքի ռեժիմի պահպանումը, կարճատև և երկարատև հանգստի կազմակերպումը: Հատկապես այն կարևորվում է անձի զարգացման վաղ փուլերում, երբ ձևավորվում են բնավորության գծերը և կանխորոշում մարդու կենսակերպը: Ամառային դպրոցն արդյունավետ հանգստի կազմակերպման լավագույն ձևերից է, երբ օգտակարը համընկնում է հաճելիի հետ: Ամառային դպրոցների աշխատանքներն էապես տարբերվում են իրենց գործառույթներով և կազմակերպչական առանձնահատկություններով: Նախ և առաջ ամառային դպրոցներում բացակայում է դասերի անցկացման պարտադիր բաղադրիչը: Այն միտված է ընդհանուր զարգացման՝ ֆիզիկական և հոգեբանական զարգացմանը, հասակակիցների և մեծահասակների հետ արդյունավետ շփմանը: Ամառային դպրոցն առաջարկում է ամենաօգտակար կրթական ծրագրերը, որոնք նպաստում են երեխաների համակարգային և համապարփակ զարգացմանը:

Մեր կողմից առաջարկվող ամառային դպրոցի քաղաքականությունը ձևավորվել է օլիմպիզմի գաղափարախոսության շրջանակներում և «ներդաշնակ զարգացում» կարգախոսի ներքո: Ամառային դպրոցի յուրահատկությունը կայանում է որդեգրած տեսլականի մեջ, այն է՝ օլիմպիզմի գաղափարախոսությունը որպես երեխաների ներդաշնակ զարգացման գրավական իր գործառնության տարբեր մակարդակներում՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինտելեկտուալ:

Ամառային դպրոցի ծրագրի նպատակն է՝ ապահովել երեխաների դրական, կենսուրախ հանգիստը՝ համադրելով այն անձի զարգացման առանցքային

հատկությունների ձևավորման հետ, այն է՝ պատասխանատվություն, ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողությունների զարգացում, կյանքի դրական կողմերի դաստիարակում, ստեղծագործական ունակությունների զարգացում, առողջ ապրելակերպի դաստիարակում, միջանձնային հարաբերությունների կառուցում:

«Փոքրիկ օլիմպիկ» ծրագրի մեկնարկը հաշվետու տարում տրվել է 2021 թվականի հունիսի 28-ին և տևել է 1 ամիս: Ծրագրին մասնակցել են ընդհանուր առմամբ 10 երեխա: Որպես խմբավարներ՝ ներառված են եղել բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և բարձր կուրսերի ուսանողները:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի գիտական գործունեությունը կատարվել է՝ համաձայն աշխատանքային պլանի, որի հիմքը 2020 թվականի փետրվարի 3-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-11 կետերն են:

Համաձայն աշխատանքային պլանի՝ հավաքագրվել է բուհի բակալավրի 720 ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի 2020–2021թթ. թեմաների անվանումները և կազմվել գիտական աշխատանքների շտեմարան, որը հնարավորություն է ընձեռում վերահսկել և խուսափել գիտական թեմաների կրկնումներից:

Ամբիոններ է ուղարկվել ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի կառուցվածքը և ներկայացվող պահանջները:

Հաշվետու տարվա ընթացքում համապատասխան աշխատանքներ են իրականացվել «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական գիտական տարեգրքի մշակման և հրատարակման, ինչպես նաև նույն անվանմամբ հավաստագրի ձևավորման ուղղությամբ:

Կազմակերպվել են հանդիպումներ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի, Ֆիզիկական վերականգնման, Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի, Սպորտային մանկավարժության և հոգեբանության, Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի, Մարզական լրագրության, Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի, Ֆուտբոլի, Յիկլիկ մարզաձևերի և Մարզախաղերի ամբիոնների վարիչների հետ, որի ընթացքում քննարկվել է ավարտական աշխատանքների կատարման ընթացքը:

Ինստիտուտի գիտության գծով պատասխանատու Ա. Հակոբյանը և գիտական քարտուղար Ա. Չատինյանը հանդիպել են ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ղարիբյանի, գիտական հետազոտական կենտրոնի ղեկավար Ս. Բակունցի հետ և պայմանավորվածություն ձեռք բերել համատեղ իրականացնել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական գործունեություն՝ համաձայն երկու բուհերի միջև կնքված «Համագործակցության հուշագիր» փաստաթղթի 2-րդ

բաժնի, 2.5 կետի, այն է՝ ՀՖԿՍՊԻ-ի առաջատար գիտնականներ՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Չատինյանը, հոգ.գ.թ., պրոֆեսոր Հ.Բաբայանը և մ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբյանը մշակեն համապատասխան մագիստրոսական թեմաներ և ղեկավարեն ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի որոշ մագիստրոսների ատենախոսական աշխատանքները:

Գիտական կապեր հաստատելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են կատարվել Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ներկայացուցիչների հետ:

Ուսանողության (բակալավրների, մագիստրանտների) գիտահետազոտական գործունեությանը խթանելու նպատակով մշակվել է գիտական ակտիվության «Գնահատման քարտ»: Բարձր գնահատական ստացող ուսանողներին հնարավորություն կընձեռվի մագիստրատուրա կամ ասպիրանտուրա ընդունվելիս օգտվել համապատասխան արտոնություններից:

Համապատասխան աշխատանքներ են տարվել ամբիոններում՝ անցկացնելու ուսանողական գիտաժողովներ: Նմանատիպ գործունեություն է ծավալվել նաև բուհի ամենամյա ուսանողական գիտաժողովի անկացման համար, որն իրականացվել է բավական բարձր մակարդակով: Վերջինիս վերաբերյալ բուհի Գիտական խորհրդին տրվել է հաշվետվություն:

Բուհի գիտական քարտուղար պրոֆեսոր Ա.Չատինյանը և գիտության գծով պատասխանատու Ա. Հակոբյանը համատեղ մշակել են գիտական հոգվածների գրախոսականի կառուցվածքը:

Գիտության գծով պատասխանատու Ա. Հակոբյանը մշակել է նաև բուհի գիտագործնական գործողությունների ռազմավարական նշանակություն ունեցող ստորև ներկայացված ուղղությունները.

- Երևան քաղաքի նախակրթական հաստատությունների երեխաների ֆիզիկական զարգացման, շարժողական պատրաստվածության բարելավման և առողջ ապրելակերպի սերմանումը լողի պարապմունքների միջոցով:
- ՀՀ ազգաբնակչության կյանքի որակի բարելավման ուղիները:
- ՀՀ հենակետային մարզաձևերի պատանեկան հավաքական թիմերի մարզիկների մանկավարժական, հոգեբանական, ֆունկցիոնալ ցուցանիշների ուսումնասիրում և մարզման գործընթացի բարելավման ուղիների մշակում:
- ՀՀ հենակետային մարզաձևերի հավաքական թիմերի գիտական սպասարկում:

Ամփոփելով ուսումնագիտական գործունեության արդյունքները ռիսկերը կառավարելու և թերությունները վերացնելու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել մի քանի միջոցառում.

1. Մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման համակարգ՝ յուրաքանչյուր տարի խրախուսելու նպատակով:

2. Բուհի գիտական ներուժն ակտիվացնելու նպատակով յուրաքանչյուր տարի սահմանել առնվազն 2 ներբուհական դրամաշնորհային ծրագիր, մեկը նախատեսված դասախոսների համար, մյուսը՝ ուսանողների:
3. Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներն ակտիվացնելու և զարգացնելու նպատակով որոշ առավելություններ սահմանել ուսանողական աշխատանքների ղեկավարներին և ուսանողներին:
4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրելիս՝ օտար լեզվի տիրապետումը և գիտական գործունեության ծավալումը սահմանել պարտադիր պայման:
5. Մշակել դասախոսների վերապատրաստման ծրագիր՝ ըստ մասնագիտական փորձի: Սահմանել կրեդիտների որոշակի քանակ, որը դասախոսը պարտավոր է յուրացնել մասնագիտական և օժանդակող գիտակարգերի ուսուցումից:
6. Իրականացնել գործող կրթական ծրագրերի շարունակական բարելավում:
7. Պրոֆեսիոնալ մարզիկների համար ներդնել ուսումնական գործընթացների կառավարման ճկուն համակարգ՝ մշակել հեռավար կրթության իրականացման առնվազն 1 կրթական ծրագիր:
8. Առցանց ուսուցման ուղեցույցի մշակում և ներդրում՝ համավարակի նոր ալիքի դեպքում՝ ուսումնական գործընթացի պլանավորման և իրականացման համար:
9. Ամբիոնների, ֆակուլտետների և ստորաբաժանումների գործունեության հաշվետվողականության մեխանիզմի կատարելագործում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՖԿՍՊԻ ինստիտուտցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում, ինքնավերլուծության զեկույցի պատրաստում

Հաշվետու ժամականաշրջանում ՀՖԿՍՊԻ-ում մեկնարկել են հավատարմագրման երկրորդ շրջափուլի աշխատանքները. ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույց պատրաստելու նպատակով ստեղծվել է ինքնագնահատման գործընթացը համակարգող հանձնաժողով՝ ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր Դ. Խիթարյանի ղեկավարությամբ: Ռեկտորի հրամանով ձևավորվել է ինքնավերլուծության զեկույցի պատրաստման [աշխատանքային խմբի](#) կազմը և կազմվել է պլան-ժամանակացույց:

Զեկույցի պատրաստման աշխատանքները բնականոն և անխափան իրականացնելու համար ՈԱ բաժինը աշխատախմբին պարբերաբար ներկայացրել է որոշակի մեթոդաբանական խորհրդատվություն, որը հիմնականում վերաբերել է չափանիշ (չափորոշիչների) հիմքերի վերաբերյալ աշխատախմբի ունեցած տարբեր ընկալումների պարզաբանմանը: Արձագանքելով աշխատախմբի անդամների

հարցումներին՝ կանոնավոր կերպով (յուրաքանչյուր ուրբաթ) անցկացվել են [աշխատաժողովներ](#)։ ՈԱԲ-ի կողմից մանրամասնվել են զեկույցի չափորոշիչների վերլուծության սկզբունքները, տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունավետության գնահատման մեխանիզմները, անդրադարձ է արվել SWOT վերլուծության տարրերի տարբերություններին։

Նախատեսված ժամանակացույցով ընթացքով աշխատանքերը խոչընդոտվել են զեկույցի տարբեր չափանիշերի պատասխանատուների, անդամների՝ կորոնավիրուսով վարակվելու, Արցախյան 44-օրյա պատերազմին զինվորագրվելու հետևանքով։

Որակի ապահովման բաժինը, այնուհանդերձ, շարունակել է անհատական խորհրդատվությունների միջոցով համագործակցել զեկույցի մյուս չափանիշերի պատասխանատուների և անդամների հետ։

Հարկ է նկատել, որ ինքնավերլուծության զեկույցի պատրաստման աշխատանքները բուհում մեկնարկ են հանդիսացել քանակական արժանահավատ և ամբողջական տվյալների հավաքագրման համար։ ՈԱԲ-ին տրամադրված վիճակագրական տեղեկատվության մեջ հայտնաբերվել են մի շարք անճշտություններ ու անհամապատասխանություններ, որոնք ՈԱԲ նախաձեռնությամբ համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները վերանայել, վերստուգել և ճշգրտել են։

ՈԱԲ-ի կողմից իրականացվել է նաև ինքնավերլուծության զեկույցի չափանիշերի (չափորոշիչների) բովանդակության խմբագրում, առկա հիմքերի համապատասխանության ստուգում և այլ լրացուցիչ շտկողական աշխատանքներ։

2021-ի ՈԱԱԿ հունիսի 10-ի [№ 10 որոշմամբ](#) ՀՖԿՍՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցն ընդունվել է, փոխհամաձայնեցվել է հավատարմագրման փորձագիտական կազմի հետ։ Հաստատված ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցերը բուհում տեղի ունեցան 2021-ի սեպտեմբերի 27-30-ը։

Շարունակական աջակցություն որակի մշակույթի զարգացմանն ու որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի բարելավմանը

ՀՖԿՍՊԻ-ի Որակի ապահովման բաժինը ներքին շահակիցների կողմից ընկալվում է որպես անկախ և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում, որի առաքելությունն ինստիտուտում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է։

2019-ին ՀՖԿՍՊԻ-ում ներդրված նոր կազմակերպական կառուցվածքով ՈԱԲ-ը պահպանել է իր ինքնավարությունն ու անկախությունը։ Բաժինն իր գործունեությամբ հաշվետու է ՀՖԿՍՊԻ-ի ղեկավարին։

Բաժինը գործում է 4 հիմնական հաստիքով՝ բաժնի ղեկավար, 1 գլխավոր մասնագետ, 1 մասնագետ և 1 սոցիոլոգ։ Բաժնի աշխատակիցների աշխատանքների և պարտականությունների բաշխումը սահմանված է ՈԱԲ-ի կանոնակարգով։

ՈԱԲ-ը, խթանելով որակի համակարգի ներքևից վերև ձևավորման քաղաքականությունը, ընդլայնում է շահակիցների երկխոսությունը դասավանդման ուսումնառության համակարգային խնդիրների վերաբերյալ: Որակի ապահովման համակարգերի ներդրման ու զարգացման, ինչպես նաև ռազմավարական պլանավորման ու ինքնավերլուծության իրականացման և գնահատման մեխանիզմների բարելավմանն են ուղղված եղել շահակիցների հետ անցկացված բաց քննարկումները, տրամադրված խորհրդատվությունն ու աջակցությունը:

ՈԱԲ-ը շեշտադրում է բուհում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի և շրջանավարտների ռիսկերի կառավարումը:

Ելնելով իր նպատակներից ու գործառույթներից, նոր մարտահրավերներից և հետադարձ կարծիքի միջոցով ստացված տեղեկատվության վերլուծությունից՝ ՈԱԲ-ը 2020-2021 թթ. [աշխատանքային պլանում](#) սահմանել է հետևյալ հիմնական **նպատակները**.

1. բաժնի գործունեությամբ զգալիորեն նպաստել մասնագիտական կրթության որակի ապահովմանը,
2. վերհանել ՈԱ խնդիրներ, վերլուծել և գնահատել բուհի գործունեության տարբեր տիրույթների որակի ապահովման ներքին համակարգը, ՈԱ մեխանիզմները, ստացված արդյունքների հիման վրա ներկայացնել խնդիրների հաղթահարման ուղիներ ու բարելավման առաջարկություններ,
3. լինել անկախ, թափանցիկ ու վստահելի բուհի բոլոր շահակիցների համար,
4. խթանել կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը:

Հաշվետու տարում ՈԱԲ-ը աշխատել է վերոնշյալ նպատակների իրագործման հետևյալ **խնդիրների** լուծման ուղղությամբ.

Մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտ

ՈԱԲ-ի ջանքերով և խորհրդատվությամբ բուհում մեծ ինտենսիվությամբ ծավալվել են կրթական ծրագրերի մասնագրերի, առարկայական նկարագրերի լրամշակված ձևաչափով տարվող աշխատանքները: Մասնագրի նոր ձևաչափը ՄԿԾ-ի աշխատախմբերին հնարավորություն է տվել կրթական ծրագրի մշակման փուլում գնահատել վերանայվող, նոր ստեղծվող ծրագրի հիմնավորվածությունը (հասարակական և աշխատաշուկայի պահանջարկը, ռեսուրսային ապահովվածությունը և այլն), ծրագրի համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակի պահանջներին, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների փոխկապակցվածությունը, պրակտիկ քաղադրիչի ծավալը:

Այս հարցերի համատեքստում ՈԱԲ-ը բոլոր ամբիոնների հետ կազմակերպել և իրականացրել է անհատական և խմբային [հանդիպումներ](#). առարկայական նկարագրի օրինակելի տարբերակի դիտարկմամբ մանրամասնվել է դասընթացի

վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների համապատասխանեցման մատրիցան, գնահատման չափանիշերի (ռուբրիկների) մշակման սկզբունքները, որոնք դասավանդողների շրջանում դժվարություններ և տարընկալումներ էին առաջացրել:

ՈԱԲ ներկայացված բանավոր և գրավոր հարցադրումների վերլուծությունից պարզ է դառնում, որ դասավանդողներին հետաքրքրում է մասնավորապես դասընթացի և կրթական ծրագրի վերջնարդյունքների փոխկապակցման մոտեցումները՝ լրացուցիչ մեկնաբանման կարիք ունենալով նաև «վերջնարդյունքի գնահատման չափանիշ», «ուսանողի գործնական աշխատանքին ներկայացվող պահանջներ» ձևակերպումները, վերջնարդյունքին միտված ուսումնառության առաջադրանքի (հանձնարարականի) նկարագրությունը ևս դժվարություն էր առաջացրել մասնագիտական ամբիոններում:

Հաշվի առնելով մասնագիտական կարիքները՝ ՈԱԲ-ը ամբիոններին, դասախոսական կազմին տրամադրել է ՄԿԾ մշակման [ուղեցույցներ](#), ներկայացրել արդյունահեն դասավանդման և ուսումնառության մեթոդներ ու մոտեցումներ, հասանելի դարձրել վերջնարդյունքահեն գնահատման մեթոդների ընտրության ուղենիշներ: Դրանցում ներկայացված մոտեցումներն ու կրթական մոդելները ևս պարզաբանվել են առանձին հանդիպումների ընթացքում:

Օժանդակող խորհրդատվության տրամադրում, ՄԿԾ որակի կառավարման ուղենիշերի ներկայացում կրթական ստորաբաժանումների ներկայացուցիչներին ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրումը ՀՖԿՍՊԻ-ի աշխատակիցներին մշտական բնույթ է կրում:

Ներկայումս ՈԱԲ-ը մեծ նշանակություն է տալիս որակի ապահովման գործընթացներում դասախոսական կազմի ներկայացուցիչներից, ուսանողներից և գործատուներից կազմված աշխատախմբերի ներգրավվածությանը ինչպես կրթական ծրագրերի մշակման և հաստատման, այնպես էլ դրանց որակի մշտադիտարկման աշխատանքներում:

ՈԱԲ-ը շարունակում է իր համագործակցությունը ՈԱ պատասխանատուների հետ՝ որպես մասնագիտական կրթության որակի ապահովման խնդիրների և փորձի փոխանակման հարթակ: ՈԱ պատասխանատուների հետ համագործակցությունը զգալիորեն օժանդակել է նաև ուսանողական հարցումների գործընթացի իրազեկման, համակարգման աշխատանքներին (ուսանողական առցանց խմբերում հարցման հղումների տարածում):

ՈԱԲ-ը վարչական, ուսումնական ստորաբաժանումների հետ պարբերաբար կազմակերպող հանդիպումներին և աշխատաժողովներին, Գիտական խորհրդի նիստերում քննարկում է որակի ներքին համակարգի բաղադրիչներին վերաբերող հարցեր և ընդունվում են որակի մշակույթի արմատավորման հիմնարար որոշումներ:

Որակի ներքին համակարգի վերանայման մասին կարող են վկայել հաշվետու ժամանակահատվածում Գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը

ներկայացված որակի ապահովմանն առնչվող կարգերը, մշտադիտակումների ու ներքին գնահատումների վերաբերյալ զեկույցները.

1. «Ներքին շահակիցների կարիքների վերհանման, գնահատման հարցումների անցկացման և արդյունքների օգտագործման կանոնակարգը» (2020թ.).
2. «Դասավանդման և որակի արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման և արդյունքների օգտագործման կանոնակարգ» (2020թ.),
3. «ՀՖԿՍՊԻ-ի կազմակերպած պրակտիկայի գնահատման կանոնակարգ», (2021).
4. Ներքին շահակիցների հետադարձ կարծիքի ուսումնասիրության արդյունքների վերլուծություն (10 զեկույց),
5. ՈԱ մշտադիտակումների արդյունքների վերլուծություն (3 զեկույց):

Ընդգծենք՝ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ իրականացված ՈԱ գնահատումները վեր են հանել դրական ու բացասական փաստեր, ՈԱԲ անցկացրած գնահատողական վերլուծությունները ներկայացվել են Գիտական խորհրդի քննարկմանը: Գիտխորհրդի կողմից համապատասխան ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ՝ բազմակողմանիորեն քննարկելու որակի ապահովման այս կամ այն գործընթացը, լուծելու վերհանված խնդիրները, ներկայացնելու բարելավման ուղիներ՝ ըստ համապատասխան ցուցանիշների:

ՈԱԲ-ը առաջարկություններ է ներկայացրել մի շարք հենքային փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես օրինակ՝

1. Մասնագիտության կրթական ծրագրի մասնագրի ձևաչափ (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական կրթություն),
2. «ՀՖԿՍՊԻ-ի բակավրի, մագիստրանտի գիտական ակտիվության «գնահատման քարտ»,
3. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության գնահատման սանդղակ (վարկանիշ),
4. «Սպորտային տուրիզմ» մագիստրոսի կրթական ծրագրի մշակման մեթոդաբանության վերաբերյալ գրավոր խորհրդատվություն,
5. «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բակալավրի կրթական ծրագրի վերանայված վերջնարդյունքների վերաբերյալ գրավոր խորհրդատվություն.....

ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվության տրամադրում

ՈՆԱ գործընթացների ոլորտում փորձի փոխանակումը ներքին շահակիցների հետ առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՈԱԲ-ը, բաժնի ղեկավարի մակարդակով, մասնակցություն է ունեցել 2020-2021 ուսումնական տարվա ավարտին ամբիոնների վարիչների հետ ՀՖԿՍՊԻ ռեկտորի նախաձեռնած հանդիպումների շարքին, անհատականացվել են կրթական ստորաբաժանումների ներկայացուցիչների վերհանած խնդիրների լուծման հավանական ուղիները,

քննարկվել են կրթական գործընթացի ռիսկերի կառավարման ռազմավարությունները:

Հետադարձ կապի մշակույթի զարգացում

Ներքին և արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի ձևավորում, հետադարձ կարծիքի միջոցով ստացվող տեղեկատվության կիրառումը որոշումների կայացման գործընթացում (ՊԻԳԲ շրջափուլի ապահովում)

2020-ին ՈԱԲ-ի կողմից իրականացված հարցումները միտված են եղել ուժեղացնելու ներքին շահակիցների ներգրավվածությունն ու նրանց հետ արդյունավետ համագործակցությունը կրթության որակի ապահովման գործընթացներում՝ նպատակ ունենալով ձևավորել այնպիսի մթնոլորտ, երբ բոլոր շահակիցները պատասխանատվություն են կրում արդյունքների որակի համար:

ՈԱԲ 2020-2021 տարեկան պլանի համաձայն՝ ներքին շահակիցների հետ իրականացվել են հետևյալ հարցումները.

3.1. Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴ) կարիքների վերհանում և գնահատում

Ինստիտուտի ներքին շահակիցներն իրենց հետաքրքրություններով և նպատակադրումներով փոխկապակցված են իրար հետ, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր կարիքներն ու սեփական պահանջները՝ համահունչ կրթական միջավայրի ներկայիս զարգացումներին:

Հարցման նպատակն էր՝ բացահայտել ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի հիմնական խնդիրները և պարզել ներքին շահակիցների բավարարվածության աստիճանը ՀՖԿՍՊԻ-ի ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետությունից, ինստիտուտում տրամադրվող ռեսուրսներից, ինչպես նաև՝ տեղեկատվական և օժանդակ ծառայություններից:

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները.**

✓ **ՊԴ կազմի գոհունակությունը ներքին տեղեկատվական համակարգից, աշխատակիցների կարծիքների արտահայտման, բողոքներին արձագանքելու մեխանիզմներից**

Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ դասախոսների մեծ մասը տեղեկացված է իր իրավունքներին և պարտականություններին ու պարբերաբար իրազեկվում է ինստիտուտում իրականացվող կրթական բարեփոխումներին: ՊԴ-ի կազմը մատնանշել է նաև բուհում իրականացվող այն բարեփոխումները, որոնք տեսանելի և ընդունելի են մեծ մասի համար, ինչպես օրինակ՝ կրթական ծրագրերի վերանայումներ, գնահատման մեթոդաբանության արդիականացում, քննական գործընթացի վերահսկողության ավելացում, ներքին հաղորդակցության միջավայրում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելիության ընդլայնում, օտար լեզուների դասավանդման ծավալի մեծացում: Իրականացվող փոփոխությունների համատեքստում ընդգծվել է նաև

պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման միտումը: ՊԴ-ի կազմն իր գոհունակությունն է հայտնել բուհի ներքին տեղեկատվական համակարգից:

✓ ՊԴ կազմի գոհունակությունը աշխատանքային միջավայրից, անմիջական վերադասից

Հարցումների արդյունքների վերլուծությունը փաստում է, որ պրոֆեսորադասախոսական կազմին տրամադրվող աշխատանքային պայմանները գոհացնում են դասախոսներին: Ինստիտուտը հետաքրքրված է դասախոսի մասնագիտական առաջընթացով, ինչպես նաև ՊԴ կազմի համար ստեղծված է աշխատանքային անաչառ և փոխաջակցող միջավայր: ՀՖԿՍՊԻ-ի գրեթե բոլոր դասախոսները ներկայումս գոհ են անմիջական վերադասից և նրանցից ստացած աջակցությունից:

✓ ՊԴ կազմի գոհունակությունը դասավանդման գործընթացի համար ապահովված պայմաններից և ռեսուրսներից

Ինստիտուտի ՊԴ կազմի բավարարվածությունն ուսուցման գործընթացի համար ապահովված ռեսուրսներից, ընդհանուր առմամբ, միջինից բարձր է: Եթե այս արդյունքը համեմատենք 2019-2020 ուստարում իրականացված [հարցման արդյունքների հետ](#), կնկատենք զգալի բարելավում, չնայած այն բանի, որ, դասախոսների կարծիքով, բուհը դեռևս կարիք ունի տեխնիկապես հագեցած (պրոյեկտորներով, համակարգիչներով և թվային գրատախտակներով) լսարանների ու լաբորատորիաների:

✓ ՊԴ կազմի գոհունակությունը դասավանդողների գիտահետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմներից


Պարզ է դառնում, որ դասախոսները իրենց գիտական գործունեության արդյունքներն ընդգրկում են հիմնականում դասախոսություններում և էլեկտրոնային տարբեր հարթակներով տրամադրում ուսանողներին: Հարցմանը մասնակից դասախոսների կարծիքով գիտական գործունեության հիմնական խոչընդոտներն են՝ հետազոտական սարքավորումների, մոտիվացիայի պակասը և ժամանակի սղությունը:

✓ ՊԴ կազմի աշխատավարձերը. բուհը ձգտում է անշեղորեն իրականացնել դասավանդողների աշխատավարձերը շարունակաբար բարձրացնելու քաղաքականություն

Ինստիտուտն իր դասախոսներին հիմնականում ապահովում է համապատասխան աշխատավարձով. հարցման շրջանակում ՊԴ կազմն իր գոհունակությունն է հայտնել բուհում ստացած աշխատավարձի չափից:

Գծապատկեր 1. Ձեր ղեկավարությունն ապահովում է Ձեզ համապատասխան աշխատավարձով

■ Այո ■ Մասամբ այո ■ Մասամբ ոչ ■ Ոչ ■ Այլ



3.2. Վարչական և սպասարկող անձնակազմի կարիքների վերհանում և գնահատում

Հարցման նպատակն էր՝

1. վեր հանել և գնահատել վարչական համակազմի շահակիցների կարիքները,
2. մշակել և ներկայացնել բացահայտված խնդիրների և բացթողումների լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Հարցման վերլուծության հիմնական արդյունքներն են՝

- ՀՖԿՍՊԻ-ում ներդրվել է ներքևից վերև կառավարման համակարգ, ինչը բարձր գոհունակությամբ է գնահատվում բուհի վարչակազմի կողմից:
- ՀՖԿՍՊԻ-ի ներքին շահակիցները՝ վարչական և սպասարկող համակարգում աշխատողները, գոհունակությունն են հայտնել իրենց անմիջական վերադասից:
- ՀՖԿՍՊԻ-ի աշխատակիցները գոհ են աշխատանքային հիմնական գործոններից, սակայն դժգոհություն են հայտնել գործառույթների ոչ հստակ տարանջատումից և ֆինանսական խրախուսումների բացակայությունից:
- Սպասարկման ոլորտի աշխատակիցները դժգոհում են աշխատանքի ծանրաբեռնվածության և վարձատրության անհավասարությունից:
- ՀՖԿՍՊԻ-ի աշխատակիցները առաջարկում են ներդնել խրախուսանքի և պատժի մեթոդներ, հստակեցնել աշխատանքային պատասխանատվությունները, ներդնել բուժապահովագրության սոցիալաթիվ:

3.3. Ուսանողական հարցումներ


ՀՖԿՍՊԻ-ն կարևորում է ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներում և ուսանողների հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովման տարբեր ձևեր մշակում (ուսանողական հարցումներ, ֆոկուս խմբային հետազոտություններ, ֆորումներ և աշխատաժողովներ):

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են հետևյալ սոցիալարցումներն ու ֆոկուս խմբային հետազոտությունները.

3.3.1. Մասնագիտության ընտրության դրդապատճառների և կրթական միջավայրի բարելավման վերաբերյալ հարցում


Հարցման նպատակն էր պարզել ՀՖԿՍՊԻ ընդունված ուսանողների՝ ինստիտուտում սովորելու որոշման վրա ազդող գործոնները, բացահայտել տվյալ մասնագիտության ընտրության դրդապատճառները, վեր հանել ուսանողների կրթական ակնկալիքներն ու սպասումները, և նրանց տեսանկյունից արժևորել կրթական միջավայրի բարելավման առաջնահերթությունները:

Դրական փաստ է, որ ուսանողները կրթություն ստանալու հարցում առավել կարևորում են պահանջված գիտելիքները և ոչ այնքան՝ ուղղակի դիպլոմ ունենալը: Հատկանշական է, որ ՀՖԿՍՊԻ ցածր վարձավճարը ուսանողների կողմից չի դիտարկվել բուհը ընտրելու առաջնային գործոն: Հիմնականում կարևորվել են հետևյալ հիմնական բնութագրիչները՝ մարզչամանկավարժական ոլորտում ուսուցման, ապագայում մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունը:




Խնդրում ենք նշել, թե ինչո՞ւ եք որոշել սովորել ՀՖԿՍՊԻ-ում

Դրական է, որ բուհի ներկայիս ուսանողներն ու շրջանավարտները դիմորդներին խորհուրդ են տալիս և ուղղորդում սովորելու ՀՖԿՍՊԻ-ում:



Խնդրում ենք նշել տեղեկատվական ի՞նչ աղբյուրից եք իմացել ինստիտուտի մասին:



ՀՖԿՍՊԻ-ում Ձեզ ի՞նչն է դուր գալիս

ՀՖԿՍՊԻ-ում բարձր են գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներն ու բուհում իրենց ցուցաբերվող անհատականացված վերաբերմունքը:

Ուսանողները բուհում ուսումնառության բացասական կողմ են համարում հեռավար դասերը (3%), բուֆետի բացակայությունը (2,3%), դասաժամերի երկարությունը (2,3%), տեղեկատվության պակասը (2,3%), շենքային պայմանները և լսարանների կահավորանքը (2,3%):

Ուսանողների պատասխանների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսանողների շրջանում կա աշխատաշուկայում սեփական մասնագիտությամբ իրացվելու պահանջմունք, ինչպես նաև մեծ է առաջին կուրսեցիների կրթական մոտիվացիան:

Համեմատաբար շատ են այն ուսանողները, որոնք առաջարկել են, որ ինստիտուտի գրադարանն ապահովված լինի մասնագիտական նոր գրականությամբ, բուհում ներդրվեն դասավանդման նոր մեթոդներ, ուսուցումը դառնա լսարանային և արակտիկ:

3.3.2. Ուսանողների ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների արդյունավետության գնահատում

Հարցման նպատակն էր գնահատել ուսանողներին տրամադրվող ռեսուրսների մատչելիությունը, հասանելիությունն ու կիրառելիությունը, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը:

Հարցման վերլուծության արդյունքներն են՝

Բուհում կա լսարանային ու ուսումնական տարածքները ժամանակակից սարքավորումներով և տեխնոլոգիաներով հագեցնելու խնդիր, մարզադահլիճներում առկա մարզական գույքը մաշված է, դահլիճին կից գործող հանդերձարանները փոքր են, կահավորված չեն անհրաժեշտ գույքով և ունեն հիմնանորոգման կարիք:


Պարզ է դառնում նաև՝ հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե կեսն օգտվում է ինստիտուտի ընթերցասրահից: Ուսանողների դժգոհությունների հիմնական պատճառները՝ ընթերցասրահի փոքր չափերն են, լուսավորվածության և պատշաճ կահավորանքի պակասը, ինչպես նաև օգտվելու կարգ ու կանոնի ոչ պատշաճ պահպանումը: ՀՖԿՍՊԻ-ի գրադարանի հետ կապված նույնպես նշվել են

մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ համակարգիչներով հագեցվածության պակասը, մասնագիտական գրականության համալրման խնդիրը. ուսանողների կողմից պահանջարկված է **կենսամեխանիկա, անատոմիա, ֆիզիոլոգիա, ֆիզիկական թերապիա, կինեզիոթերապիա, լող, աթլետիկա** ոլորտներին վերաբերող նոր հրատարակությունները:

Ուսանողներն առավելագույն գնահատական են տվել ինստիտուտի ջեռուցման համակարգին, ընթերցասրահների կահավորվածությանը, ինստիտուտի էլեկտրոնային կայքի տեղեկատվական հագեցվածությանը (հարցվածների 77%-ից 80%-ը «լավ» կամ «գերազանց» է գնահատել նշված ռեսուրսները): Համեմատաբար ցածր գնահատականներ են ստացել բուհում *ինտերնետից օգտվելու հնարավորությունը, սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակը, մարզադահլիճների գույքային պայմանները, մերսման լսարանը և լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը* (հարցվածների 23%-ից 38%-ը «անբավարար» կամ «բավարար» գնահատական է տվել նշված ռեսուրսների ապահովվածությանը):

Ուսանողների բավարարվածությունը իրենց տրամադրվող տեղեկատվությունից. հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսները ուսանողներին հիմնականում տրամադրել են կրթական գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն (կրթական ծրագրի նպատակները, շնորհվող որակավորում, դասավանդման և գնահատման մեթոդներ, քննությունների արդյունքների բողոքարկում): Ուսանողներին հիմնականում գոհացրել է տրամադրված տեղեկատվությունը (55, 5 %):

Պարզ է դառնում նաև, որ իրազեկման հարցում *դասավանդողները շատ հաճախ* կատարել են դասավանդողի պարտականությունների տիրույթից դուրս աշխատանքներ (տեղեկատվություն զեղչման կարգի, ուսումնական վարձի զեղչման իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ): Բուհի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ դժգոհությունները, բողոքներն ու առաջարկություններն ուսանողները հիմնականում հասցեագրում են իրենց դասախոսներին (51%), ամբիոնի վարիչին (20%), դեկանին (9%), ուսանողական խորհրդին (7%) և այլն:



Ո՞ւմ կողմից է տրամադրվել տեղեկատվությունը

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ՀՖԿՍՊԻ ստորաբաժանումների (կառույցների) մատուցած ծառայություններից ուսանողների կողմից համեմատաբար մեծ գոհունակություն են վայելում ինստիտուտի ամբիոնները և ֆակուլտետները («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 72%-75%-ի կողմից), Որակի ապահովման բաժինը, Ուսումնագիտական բաժինը և Ուսանողական խորհուրդը («լավ» կամ «գերազանց» են գնահատվել հարցվողների 65%-67%-ի կողմից):

Ուսանողությունը, ընդհանուր առմամբ, գոհ է հետևյալ ուսումնառական ծառայություններից.

- ✓ դիմումների ընդունման համակարգ՝ 44%,
- ✓ բնութագրերի տրամադրում՝ 40%,
- ✓ լրացուցիչ խորհրդատվության տրամադրում՝ անհատական հանդիպում ուսանողի հետ՝ 40%,
- ✓ տեղեկանքների տրամադրում՝ 39% և այլն:

Ինստիտուտի գործունեության և իրականացվող բարեփոխումների մասին ուսանողների տեղեկատվության առաջնային աղբյուրներն են բուհի ֆեսբուքյան էջը (49%), ինստիտուտի պաշտոնական կայքը (43%), ՀՖԿՍՊԻ-ում փակցված հայտարարությունները (25%) և այլն:

Ուսանողներին համար հիմնականում տեսանելի են հետևյալ բարեփոխումները՝ ինստիտուտի վերանորոգումը, կահավորումը, կրթական բարեփոխումները, նոր, արհեստավարժ դասախոսներով համալրումը, տեսախցիկների առկայությունը և այլն:

3.3.3. ՀՖԿՍՊԻ-ում օտար լեզուների ուսուցման արդյունավետության գնահատում

2019-2020 ուսումնական տարվանից ուսանողների և դասախոսների հետ իրականացվող սոցիալական հետազոտությունների միջոցով վերհանված խնդիրների մի մասը անդրադառնում էր օտար լեզուների ուսուցման արդյունավետությանը՝ ընդգծելով ուսանողների շրջանում օտար լեզվի, մասնավորապես՝ միջազգային կրթագիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման անբավարար մակարդակը:

Հաշվի առնելով ներքին շահակիցներից ստացված առաջարկները՝ մասնավորապես սովորողների օտար լեզվի իմացությունը բարելավելու և շարժունության միջազգային ծրագրերում ուսանողների ներգրավվածությունը խթանելու նպատակով՝ 2020-2021 ուսումնական տարվա կրթական ծրագրերում ավելացվել է ռուսերենի (անգլերենի) դասավանդման և ուսումնառության ծավալը. օտար լեզուների դասավանդումը կազմակերպվում է 4 կիսամյակում՝ նախկինում նախատեսված 1 կիսամյակի փոխարեն:

Կարևորելով ՀՖԿՍՊԻ գործունեության ցանկացած տիրույթում իրականացվող բարելավիչ գործողությունների և քայլերի վերաբերյալ բուհի ներքին շահակիցների հետադարձ կարծիքի կանոնավոր ուսումնասիրումն ու արդյունքների գնահատումը՝ ՀՖԿՍՊԻ-ի Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ ՈԱԲ) անցկացրել է առցանց

անանուն հարցում բակալավրի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների շրջանում:

Հարցման վերլուծության արդյունքներն են՝

- ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի ուսանողների ռուսաց և անգլերեն լեզուների իմացության մակարդակների նշանակալի աճ է դիտվում, սակայն, ըստ ուսանողների ինքնագնահատման արդյունքների՝ այդ լեզուների իմացության միջին ցուցանիշը (3,25 ռուսերենի և 3,09 անգլերենի համար) դեռ «լավ» (4 միավոր) համարվել չի կարող:
- Ուսանողների 59%-ը համարում է, որ 1-ին կուրսում նրանք անգլերենի որոշ գիտելիքներ ստացել են, բայց դա դեռևս բավարար չէ ազատ հաղորդակցվելու համար:
- Օտար լեզուներին տիրապետելու հմտությունների զարգացման վրա ազդող գործոններն ուսանողները կապում են ինչպես բուհում այդ լեզուների լավ դասավանդման (87 %՝ ռուսերեն, 91%՝ անգլերեն), այնպես էլ ինքնակրթության հետ (≈70%): Ուսանողների գերակշիռ մասը բավարված է օտար լեզվի դասախոսական մասնագիտական որակներից, դասավանդման և գնահատման կիրառվող մեթոդներից (77% տոկոս):

2020-2021 ուսումնական տարվա 271 առաջին կուրսեցիներից հարցմանը մասնակցած 173 ուսանող (64 տոկոս) պատասխանելով «բաց հարցերին» վեր են հանել որոշակի խնդիրներ և կատարել կոնկրետ առաջարկություններ, ինչպես օրինակ՝ **տարբերակել անգլերեն և ռուսաց լեզուների ուսուցման խմբերը՝ ըստ ուսանողների գիտելիքների մակարդակի, զարգացնել բանավոր հաղորդակցման (մասնագիտական անգլերենի) տիրապետման կարողություններ, գրադարանը համալրել անգլերեն և ռուսաց լեզուների նոր ուսումնական ձեռնարկներով և գիտափոխակապական հրապարակություններով:**

3.3.4. ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող մասնագիտական պրակտիկայի գնահատում

Հարցումն իրականացվել է բակալավրիատի «Լրագրություն», «Կինեզիոլոգիա», «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերի ուսումնառողների (4-րդ կուրս) մասնագիտական պրակտիկայի արդյունավետությունը գնահատելու, որակի ապահովման խնդիրները բացահայտելու համար: Նշենք, որ հարցումներն անցկացվել են տարբերակված հարցաթերթերով:

Մասնագիտություն	Պրակտիկայի մասնակիցների քանակ	Հարցման մասնակիցների քանակ	Հարցման մասնակիցների տոկոս
Լրագրություն	10	9	90%
Կինեզիոլոգիա	34	28	82%

Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	236	134	57%
ԸՆԴԱՄԵՆԸ	280	171	61%

Պրակտիկային և հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակները

Հարցումների արդյունքների վերլուծություններն են՝

«Լրագրություն» կրթական ծրագիր

- Բոլոր հարցված լրագրող պրակտիկանտները (9 հոգի կամ 100%) համարում են, որ պրակտիկան արդյունավետ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման առումով:
- Ուսանողների 89%-ը կարծում է, որ պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարող են կիրառել իրենց աշխատանքային գործունեության ընթացքում:
- Պրակտիկայի ընթացքը նպաստել է, որպեսզի տիրապետեն այն տեխնոլոգիաներին և մասնագիտական նոր հմտություններին, որոնք անհրաժեշտ են լրագրողական աշխատանքում (56%):
- Ընդունող լրատվամիջոցի աջակցությունը պրակտիկայի ընթացքում բավարարել է ուսանողների 44%-ին: Ինչ վերաբերում է պրակտիկայի տևողությանը, հարցվածների 78%-ը համարում է, որ այն բավարար էր՝ դրված նպատակներին հասնելու համար:
- Պրակտիկանտների 56%-ը կարողացել է պրակտիկայի շնորհիվ զարգացնել տարբեր ժանրերի լրագրողական նյութեր գրելու կարողությունը, 33%-ը՝ կադրում աշխատելու, ևս 33%-ը՝ նկարահանման և մոնտաժի հմտությունները, իսկ 22%-ը՝ խմբագրական հմտություններ են ձեռք բերել:
- Պրակտիկայի շնորհիվ ուսանողների 67%-ը նաև ձեռք է բերել ամենօրյա լրագրողական աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն, 56%-ը՝ սպորտային լրագրողին անհրաժեշտ մասնագիտական հմտություններ, 33%-ը՝ խմբագրական աշխատանքի և այլ հմտություններ:
- Պրակտիկայի արդյունավետության բարձրացման համար հարցված ուսանողների գրեթե կեսը մատնանշել է պրակտիկայի տևողությունը երկարացնելու մասին:

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզոլոգիա» կրթական ծրագիր

- Բոլոր հարցված կինեզիոլոգ պրակտիկանտները (28 հոգի կամ 100%-ը) համարում են, որ պրակտիկան արդյունավետ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար:

- Կինեզիոլոգ պրակտիկանտների 46%-ը կարողացել է պրակտիկայի շնորհիվ ձեռք բերել թիմում աշխատելու, աշխատանքի կազմակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություններ, 32%-ը՝ վերականգնողական կենտրոնում կիրառվող ռեաբիլիտացիայի մեթոդների և կիրառվող բուժական վարժությունների տեսակների վերաբերյալ նոր գիտելիքներ են յուրացրել, ինչպես նաև յուրաքանչյուր հիվանդի ֆիզիկական ռեաբիլիտացիայի ծրագիրը ինքնուրույն կազմելու կարողություններ են զարգացրել:
- Պրակտիկայի արդյունավետության բարձրացման համար հարցված կինեզիոլոգները մատնանշել են պրակտիկայի տևողությունը երկարացնելու, հիվանդների հետ ավելի շատ աշխատելու, բուհում պրակտիկ կրթական պայմաններ ստեղծելու անհրաժեշտության մասին:

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագիր

- Պրակտիկանտների 20%-ը կարողացել է պրակտիկայի շնորհիվ ձեռք բերել ապագա մանկավարժի/մարզչի մասնագիտական գործունեությունը պլանավորելու, անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու, 19%-ը՝ աշակերտների հետ հաղորդակցվելու, ֆիզիկական կուլտուրայի դասի, արտադասարանական պարապմունքների, մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ կազմակերպելու կարողություններ:
- Ուսանողների մեծ մասը (73%-ը) ցանկություն է հայտնել, որ մասնագիտական պրակտիկան անցակցվի 2-րդ կուրսից:

3.3.5. ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատում

Հարցման նպատակն էր բացահայտել և գնահատել ՀՖԿՍՊԻ-ի շրջանավարտների բավարարվածության մակարդակը բուհում ստացած կրթության որակից: Հարցմանը մասնակցել է 373 շրջանավարտ (60%):

Հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

- Շրջանավարտների՝ ՀՖԿՍՊԻ-ի՝ որպես բուհի ընտրության հիմնական դրդապատճառը եղել է այն, որ նրանք ցանկացել են ստանալ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում բարձրագույն կրթություն և համապատասխան սպորտային կարիերայի հնարավորություններ:
- Շրջանավարտների գերակշիռ մասը՝ 79%-ը բարձր է գնահատում բուհում առաջարկվող դասընթացների օգտակարությունը մասնագիտական գործունեության մեջ:
- Միջին հաշվով, ՀՖԿՍՊԻ-ում ստացած իրենց կրթությունը «լավ» կամ «գերազանց» են գնահատել այս տարվա շրջանավարտների 80%-ը: Առավել ցածր են գնահատել այդ կրթությունը մարզական լրագրողներն ու կինեզիոլոգները (64% և 69% համապատասխանաբար), իսկ առավել բարձր՝

սպորտային հոգեբանները (100%), մանկավարժ/մարզիչները (84%), սպորտի կառավարիչ/մարկետոլոգները (82%):

- Շրջանավարտների գրեթե 67%-ը համարում է, որ բուհն ավարտելուց հետո համապատասխան գործատուի մոտ աշխատելու համար լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեն: Մարզիչ-մանկավարժներն առավել վստահ են բուհում ստացած գիտելիքներով աշխատանք գտնելու հարցում:
- Բուհում օտար լեզուների՝ անգլերենի և ռուսերենի ուսուցման արդյունավետությունը շրջանավարտները միջին հաշվով, 1-5 բալանոց սանդղակով գնահատել են 3.6 միավոր, այսինքն՝ միջինից-լավ:
- Շրջանավարտներն իրենց մտահոգությունն են հայտնել նաև շրջանավարտների աշխատանքի տեղավորման, բուհում մասնագիտական կրթության մեջ պրակտիկ, գործնական ուղղվածության, արտերկրի համալսարանների հետ համագործակցության հնարավորությունների պակասի մասին:
- Շրջանավարտների առաջարկով՝ մագիստրատուրայի կրթական ծրագրի պրակտիկայի *գիտահետազոտական* բաղադրիչը պետք է փոխարինել *մասնագիտական* պրակտիկայով, որը հնարավորություն կտա ուսանողներին ոչ թե իրականացնելու հետազոտական աշխատանք պրակտիկայի վայրում, այլ՝ ձեռք բերել մասնագիտական գործնական հմտություններ, որոնք օգտակար կլինեն բուհն ավարտելուց հետո այդ մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար:

3.3.6. Վերապատրաստման, փորձի փոխանակման դասընթացների արդյունավետության մեկանգամյա գնահատում

Վերապատրաստման ծրագրերի արդյունավետությունն ուսումնասիրելու համար ՈԱԲ-ի կողմից իրականացվել է որակավորման բարձրացման միջոցառումների (նախագծեր, սեմինարներ, վարպետության դասեր և այլն) արդյունավետության միանգամյա գնահատում, որի արդյունքներն ուղարկվում են ինչպես սեմինարավարին, այնպես էլ կազմակերպչին՝ հետագա բարելավումների կամ համագործակցության հեռանկարների հստակեցման նպատակով:

Գնահատման արդյունքներից պարզ է դառնում, որ վերապատրաստման ծրագրերում ընդգրկված մասնակիցները հիմնականում գոհ են մատուցված նյութի բովանդակությունից, դասընթացների մեկնարկին ունեցած ակնկալիքները հիմնականում համապատասխանում են ձեռքբերված վերջնարդյունքին՝ նպաստելով նոր գիտելիքների և հմտությունների յուրացմանը, որոնք օգտակար կարող են լինել մասնագիտական գործունեության մեջ:

4. Ֆոկուս խմբային հետազոտություններ

4.1. «Մենեջմենտ», «Մարկետինգ» մագիստրոսի կրթական ծրագրերի պիլոտային փուլի գնահատում

Հաշվետու տարում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են ուսանողների կարիքների վերհանման ֆոկուս խմբային (ՖԽ) խորքային հետազոտություններ (2021թ.): «Մենեջմենտ», «Մարկետինգ» մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնառողների,

դասավանդողների, նախորդ սերունդների շրջանավարտների հետ ՖԽ քննարկումների արդյունքներից պարզ է դառնում՝ պլիոտային փուլը հիմնականում ապահովել է նախանշված նպատակների իրագործումը. ՄԿԾ-ում ներգրավվել են մեծ թվով պրակտիկ և հմուտ մասնագետներ, թարմացվել է առարկայացանկը, ներդրվել մոդուլային ուսուցում, կիրառվել են գնահատման նոր մեթոդներ, որոնք ընդունելի և արդյունավետ են գնահատվել ուսանողների համար:

4.2. Թիրախային հարցումներ

ՀՖԿՍՊԻ-ի ճաշարանի սպասարկման որակի գնահատում

2019-ից իրականացվող հարցումներով բուհի աշխատողներն ու ուսանողները մշտապես բարձրաձայնել են ինստիտուտի ներսում սննդի կետ ունենալու խնդիրը: Իսկ ահա 2021-ին բուհի գլխավոր մասնաշենքում բացված բուֆետի պայմանների, սննդի մատչելիության և սպասարկման որակի գնահատման, ինչպես նաև՝ բուֆետից օգտվելու նախընտրություններն ու առաջարկությունները պարզելու նպատակով ՈԱԲ-ի կողմից իրականացվել է սոցիալացում, որին մասնակցել են դասախոսներ, վարչական կազմի աշխատակիցներ ու ուսանողության ներկայացուցիչներ:

Պատկերն այսպիսին է. հարցման մասնակիցներից 17%-ը նշել է, որ *գրեթե միշտ* օգտվում է բուհի ճաշարանից, 13%-ը նշել է, որ *հաճախ* է օգտվում սննդի կետից, իսկ 30%-ը միայն երբեմն է հաճախում ՀՖԿՍՊԻ-ի ճաշարան:

Հարցվածների 22%-ը նշել է, որ գոնե մեկ անգամ օգտվել է բուհում գործող սննդի կետից, իսկ 17%-ը՝ *երբեք* չի օգտվել ճաշարանից՝ այդ հանգամանքը պարզաբանելով մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ բարձր գներ ու սննդի ոչ թարմ լինելը, սննդի քիչ տեսականին (34-67%), ճաշարանի հարմարություններ (կահույք, սանհանգույց):

Հարցման միջոցով պարզվել է, որ բուհի ներսում գործող ճաշարանն ունի որոշակի պահանջարկ ՀՖԿՍՊԻ դասախոսների, ուսանողների և վարչական աշխատակիցների կողմից, սակայն, վերջինս գտնվելով բարձր մրցակցային միջավայրում, ի վիճակի չէ բավարարելու հաճախորդների բազմազան պահանջմունքները, ինչի պատճառով էլ կորցնում է շատ պոտենցիալ հաճախորդներին:

Հարկ է հավելել նաև, որ ներքին շահակիցների հետ կանոնավոր կերպով իրականացված սոցիալացումների, ֆոկուս խմբերի արդյունքները պարբերաբար քննարկվել են համապատասխան ստորաբաժանումներում, [Գիտական խորհրդի նիստերում](#), ընդունվել են կոնկրետ որոշումներ բացահայտված խնդիրներն ու թերացումները հաղթահարելու համար:

5. ՈՆԱ մշտադիտարկումներ, ՄԿԾ որակի ապահովման և ռիսկերի կառավարման հետազոտությունների արդյունքների վերլուծումներ

ՈԱԲ-ն իր գործունեության նպատակներին համահունչ՝ իրականացնում է մշտադիտարկումներ, գնահատողական վերլուծություններ՝ վերհանելու

մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրներն ու բացահայտելու բուհի լավագույն փորձը:

ՈԱԲ ռազմավարական գերակայություններից է բուհում ամրապնդել որակի ներքին ապահովման անկախ մշտադիտարկող կառույցի դերակատարումը, որը ձգտում է ՀՖԿՍՊԻ առաքելությանը համահունչ իրականացնել շահակիցների համար ընդունելի, օբյեկտիվ և անկախ գնահատումներ՝ ապահովելով որակի ներքին և արտաքին մշտադիտարկումների թափանցիկությունն ու փոխկապակցվածությունը:

ՈԱԲ-ի կողմից իրականացվող գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

Կարևոր է նշել, որ կրթական ստորաբաժանումները (ֆակուլտետ, ամբիոններ) հիմնականում բավարարված են ՈԱԲ-ի գնահատման արդյունքներով՝ անկախ դրանց դրական կամ բացասական լինելուց:

Հաշվետու տարում ՈԱԲ-ի կողմից իրականացվել են կրթական գործընթացի որակի ապահովման բարելավմանը միտված հետևալ մշտադիտարկումները.

5.1. ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող դասալսումների (չպլանավորված) արդյունքների վերլուծություն. որը թույլ է տվել պարզելու դասավանդման փորձի փաստացի վիճակը, ուժեղ կողմերն ու թերացումները, վերանայել ու բարելավել ուսումնառության պայմանները:

Ուսումնասիրության հիմնական նպատակներն էին՝

- ✓ բացահայտել ուսումնական գործընթացի կազմակերպման կարիքները, խնդիրներն ու թերությունները,
- ✓ ապահովել դասավանդման մեթոդների համապատասխանությունը կրթական վերջնարդյունքներին,
- ✓ տարածել դասավանդման լավագույն փորձը,
- ✓ նպաստել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը,
- ✓ բարելավել ուսումնառության և դասավանդման որակը:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են ընդհանուր թվով 20 դասալսումների հաշվետվություններ (տեսական դաս՝ 6, գործնական դաս՝ 14), որոնք կազմվել են «Դասալսումների կազմակերպման, անցկացման, գնահատման կանոնակարգին» կից ներկայացված գնահատման մատրիցայի բնութագրիչներին և պահանջներին համապատասխան:

Դասալսումներն իրականացվել են 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Անհրաժեշտ է նշել, որ վերլուծության ընթացքում համեմատություն է անցկացվել դիտարկված առարկաների դասավանդման մեթոդաբանության միջև:

Դասալսումների իրականացումը, որպես հետազոտման գործիք, հնարավորություն է տվել գնահատելու դասավանդման և ուսուցման մեթոդների փաստացի կիրառությունը և դասավանդողների այն հմտությունները, որոնք սահմանված են դասընթացի նկարագրերում՝ դասի թեմայի, նպատակների ու

խնդիրների համապատասխանությունը առարկայի վերջնարդյունքներին, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներին:

Դիտարկվել են նաև դասի ուժեղ (առավելությունները) և թույլ (թերությունները) կողմերը, ներկայացվել են դասախոսական կրթափորձի բարելավման կոնկրետ առաջարկություններ:

Մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս անել հետևյալ եզրահանգումները.

- Դասավանդման մեթոդներում որոշակի փոփոխություն նկատվում է՝ դասավանդողները սկսում են կիրառել փոխգործուն մեթոդներ:
- Ուսումնական գործընթացի ժամանակ չի ապահովվում ուսուցման մեթոդների բազմազանությունը և կապը մասնագիտական պրակտիկ գործունեության հետ:
- Ուսանողների կողմից տրվող հարցադրումների հաճախականությունը բավականին բարձր է, սակայն գերակշռում են գիտելիքի և ընկալման հարցերը, որոնք սովորողից պահանջում են նվազագույն մտավոր աշխատանք: Արդյունքում խրախուսվում է հիշողության վրա հիմնված գիտելիքի զարգացումը և անտեսվում այնպիսի հմտությունների զարգացումը, ինչպիսիք են ինքնուրույն և ստեղծագործական կարողությունները, որոնք անհրաժեշտ է զարգացնել առավել բարձր մտավոր աշխատանքի միջով՝ համադրում, վերլուծում և գնահատում:
- Ուսումնական գործընթացի կառավարման հիմնական դժվարությունը բոլոր ուսանողներին այդ գործընթացում ներգրավելն է:

5.2. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացների նկարագրերի մշակման փորձի մշտադիտարկում, խնդիրների վերհանում

Նկատենք, որ ՀՖԿՍՊԻ-ում արդյունահեն կրթական ծրագրերի/դասընթացների մշակման պաշտոնական մշտադիտարկում իրականացվում է առաջին անգամ, որը կարևորվում է մասնավորապես երկու հանգամանքով: Այն կարող է նպաստել կրթական ծրագրերի ընթացիկ և հետագա գնահատման, մշտադիտարկման և վերանայման գործընթացների հաջող իրականացմանը, ինչպես նաև դասավանդողների համար լինել ուղեցույց արդյունահեն կրթական վերջնարդյունքների ձևավորման, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների մշակման և ընդհանուր առմամբ՝ դասավանդման սեփական փորձի ինքնագնահատման և շարունակական բարելավման համար:

Ուսումնասիրությունն անդրադառնում է հետևյալ առանցքային հարցերին՝ արդյո՞ք

1. դասընթացն ունի հստակ սահմանված նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,
2. դասավանդման և ուսումնառության մեթոդները համահունչ են ակնկալվող կրթական վերջնարդյունքներին,

3. նկարագրված են այն ձևերն ու մեթոդները, որոնց օգնությամբ ձևավորվելու և գնահատվելու են դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,
4. ուսանողներին տրվող հանձնարարականներն ու առաջադրանքները միտված են կրթական վերջնարդյունքների ձևավորմանը,
5. ECTS կրեդիտների բաշխվածությունը համապատասխանում է ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնասիրության հիմնական նպատակն էր պարզել՝ ինչպես է «կրթական մոդելը» սահմանվում դասախոսական գործունեության պրակտիկ միջավայրում: Կրթական մոդել ասելով հասկանում ենք, թե բարձրագույն կրթության գործընթացում ինչպես են ուսուցանվում ուսանողները, կամ որոնք ենք ուսուցման և ուսումնական տիպային ծրագրերի հիմնական խնդիրներն ու նպատակները:

Դրական փաստեր

- Ջանքեր են գործադրվել կրթական ծրագրերում կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ իրականացնելու և ՀՀ և արտերկրի առաջավոր բուհերի համանուն կրթական ծրագրերի կրեդիտների բաշխվածությանը համապատասխանեցնելու համար:
- Կրթական ծրագրի յուրաքանչյուր դասընթացի մակարդակում սահմանված են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, քարտեզագրված է հանձնարարականների/առաջադրանքների և ձևավորվող վերջնարդյունքների (գործնական և հետազոտական) փոխկապակցվածությունը:

Բացասական փաստեր

- Կրթական առաջին և երկրորդ շրջափուլերի (բակալարիատ, մագիստրատուրա) համար նախատեսված կրթական վերջնարդյունքները տարանջատված չեն:
- Հստակ չեն «կրթական ելքային արդյունքների» և «դասընթացի նպատակի» տարբերությունը:
- Ուսուցման մեթոդների և ուսումնառության նախասահմանված արդյունքների միջև կապը թույլ է. ինտերակտիվ դասի նախապայման է ընկալվում տեսասահիկներով ուսուցման առկայությունը, ինչը վկայում է ինտերակտիվության թյուր ընկալման մասին:
- Դասավանդման, ուսուցման և գնահատման մեթոդները հիմնականում միատիպ են, դրանց փոխկապացումը վերջնարդյունքահեն չեն:
- Ուսանողին տրվող առաջադրանքների գնահատման համատեքստում թույլ են արտահայտված հետադարձ կապի մեխանիզմները:
- Ուսուցման գործընթացում ձևավորող գնահատումը (formative assessment) համակիրառելի չէ դասախոսական պրակտիկայում. հիմնականում գործածվում են եզրափակիչ գնահատման ձևերը (ստուգաք, քննություն):
- Դասընթացի նկարագրերի գերակշռող մասում գնահատման սանդղակը բավականին անհասկանալի է. դրա հետագա կիրառման դեպքում կարիք կլինի հավելյալ բացատրելու ուսանողներին:

- Էլեկտրոնային ռեսուրսներն ու գրականությունը քիչ են ներառված առարկայական նկարագրերում:

5.3. ՀՖԿՍՊԻ կազմակերպական կառուցվածքում իրականացված փոփոխությունների արդյունավետության գնահատում

Հետազոտության հիմնական նպատակն էր ուսումնասիրել ՀՖԿՍՊԻ-կազմակերպական կառուցվածքում ներդրված փոփոխությունների նպատակահարմարությունն ու արդյունավետությունը (2019, 2020), բացահայտել ներկայումս գործող կառուցվածքի ռիսկերն ու խնդիրները:

ՀԱՄԱՌՈՏ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

- Հիմնվելով կառուցվածքային առանցքային փոփոխությունների արդյունքների վրա՝ ՀՖԿՍՊԻ-ն ներկայումս վերակազմավորվում է մի ուսումնական հաստատության, որը միավորում է կրթական, կիրառական, հետազոտական ոլորտների զարգացման ուղղությունները:
- ՀՖԿՍՊԻ հաստատության կազմակերպական կառուցվածքի վերափոխումն ու շարունակական բարելավումների մշակույթը պայմանավորված է ակադեմիական միջավայրում առօրյա խնդիրների լուծման հրատապությամբ, ինչն իր հերթին միտված է բարձրացնելու ռազամավարական նպատակների իրագործման արդյունավետությունը:
- Թեև բուհի կառավարման համակարգի շատ օղակներ, վարչական կառույցներ նոր են վերաձևավորվել, և դեռևս վաղ է գնահատել դրանց գործունեության արդյունավետությունը, այնուամենայնիվ, ինստիտուտի կառավարման գործընթացներում նոր մոտեցումների սահմանումը, որոշակի առումով, արդեն ապահովել է շոշափելի արդյունքներ. ոչ ուռճացված կազմակերպական նոր կառույցի գործարկումով կառավարման հորիզոնական մակարդակում ամրապնդվել են վերահսկման, հաշվետվողականության գործառույթները, ամրագրվել են հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմներ, էականորեն բարելավվել է որոշումների կայացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը, հստակեցվել են ստորաբաժանումների գործառույթային փոխկապակցվածությունը և գործառնական հարաբերությունները:
- ՀՖԿՍՊԻ կազմակերպական կառուցվածքում ներդրված փոփոխությունները (2019թ.) նպատակաուղղված են եղել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, բուհի կառուցվածքի օպտիմիզացմանը, բուհական ինքնավարության և հաշվետվողականության զարգացմանը, իսկ ահա ներկայումս առաջարկվող կառուցվածքային փոփոխությունների գերակշիռ մասը նպատակ ունի նաև բուհում ինտեգրել կրթական և գիտական գործընթացները, ստեղծել նախադրյալներ շարունակական կրթության համակարգի ձևավորման և զարգացման համար:

5.4. Տեղական և միջազգային պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա ՈՆԱ գործընթացներին առնչվող փաստաթղթերի, ուղենիշերի, ուղեցույցների/ձեռնարկների վերանայում

Հաշվետու ժամանահատվածում ՈԱԲ-ը սկսել է վերանայել Որակի ներքին ապահովման համակարգի ուղեցույցը (հաստատված՝ 2014թ.-ին), մշակվել է ձեռնարկի [նախագծային տարբերակը](#), որտեղ սահմանված է բուհի կրթական բարեփոխումների տեսլականը՝ առաջնային կարևորություն տալով որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշերին, ինչպես նաև՝ սահմանված նպատակներին համապատասխանության ու հաշվետվողականության ապահովման սկզբունքների հիման վրա որակի շարունակական բարելավմանը:

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման և ուսումնասիրման նպատակով մշակվել է որակի ապահովման [ներքին աուդիտի](#) ընթացակարգի նախագիծը, կազմվել են բուհի գործունեության տարբեր տիրույթների գնահատման չափանիշերը, որոնք հնարավորություն կտան համակողմանիորեն վերլուծելու ներքին միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, ուսումնասիրել ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունը, ինչպես նաև՝ օգտագործել հավաքագրված տվյալներ ՀՖԿՍՊԻ-ի ներքին և արտաքին միջավայրերի փոփոխականների գնահատման համար:

Համաձայն նախագծի՝ ՈԱ հիմնական ոլորտներ են սահմանված կրթական ծրագրերը և դասընթացները, դասախոսական կազմի մասնագիտական որակները, դասավանդումն ու ուսումնառությունը, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ուսումնական ռեսուրսները, գիտահետազատական գործունեությունը, իսկ ՈԱ յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված են համապատասխան դերակատարներ և պատասխանատուներ: Ընդ որում՝ հստակ նշված է ուսանողների և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ յուրաքանչյուր գործընթացում: Հարկ է նկատել, որ այս քաղաքականությամբ ամրագրվում են ԵԶՈԻ հիմնական սկզբունքներն ու ուղենիշերը:

6. Համագործակցություն ՀՀ ՈԱԱԿ-ի հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ-ը, բաժնի ղեկավարի դեմքով, մշտապես մասնակցել է ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին՝ հայաստանյան այլ բուհերի որակի ապահովման կենտրոնների հետ քննարկելով ուսուցման որակի բարելավման գործընթացները, անդրադառնալով նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ փուլի առանձնահատկություններին:

2021թ. փետրվարի 24-ին ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) ՀՖԿՍՊԻ-ում իրականացրել է բուհի որակի ներքին ապահովման համակարգի [առցանց մշտադիտարկում](#): Մշտադիտարկման նպատակն էր դիտարկել առաջին փուլի հավատարմագրման ազդեցությունը բուհի որակի ապահովման համակարգի վրա, ՀՖԿՍՊԻ-ի բարելավման պլանի իրականացման արդյունքում տեղի ունեցած

փոփոխությունները և դրանց կիրառումը կրթության կազմակերպման գործընթացում: Ուշադրության կենտրոնում էր բուհի կառավարման համակարգը, ՄԿԾ-ների բարեփոխումները և որակի ապահովումը:

Մշտադիտարկման շրջանակում ՈԱԲ-ը համակարգել է ՀՖԿՍՊԻ ռեկտորի, պրոռեկտորների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, ՈԱԲ-ի ողջ անձնակազմի, ինչպես նաև ուսանողների հետ ՈԱԱԿ մասնագետների և արտաքին փորձագետի առցանց հանդիպումները:

Մշտադիտարկման արդյունքում որպես փորձագիտական եզրակացություն նշվել է, որ բուհում ընթացող գործընթացներն ունեն բարելավման միտում, սակայն դրանք դեռևս արմատական վերափոխման փուլում են: Կառավարման տեսանկյունից խորհուրդ է տրվել ուշադրություն դարձնել արդյունքահեն կառավարմանը, ինչպես նաև՝ կազմակերպչական կառուցվածքային փոփոխությունների պայմաններում իրականացնել դրա արդյունավետության գնահատում:

2021թ. մայիսի 19-ին ՈԱԲ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված **«Ո՞րն է որակի ապահովման ներքին կառույցի դերը և այդ դերի վերաբերյալ բուհական կառավարման համակարգի և շահակիցների ընկալումը»** թեմայով հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են կրթության որակի ապահովման մարտահրավերները, առանձնակի ուշադրություն է դարձվել մասնագիտական կրթության որակավորումների որակի հավաստմանը, կարևորվել է որակի ապահովման ներքին աուդիտի, ինքնագնահատումների պարբերական իրականացումը, շեշտվել է արդյունավետության գնահատման ցուցիչների կիրառումը ներքին գնահատման գործընթացներում:

Հանդիպման ավարտին ՈԱԲ առաջարկով ՈԱԱԿ-ի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել/իրականացնել ՈԱԱԿ-ՀՖԿՍՊԻ առցանց հանդիպումների շարք, որոնք հնարավորություն կտան երկխոսելու կրթական ծրագրերի որակի կառավարման խնդիրների շուրջ, ներկայացնելու ՄԿԾ-ների բարելավման ներբուհական փորձն ու առաջանցիկ գործողությունները (փորձի ներկայացման համար ընտրվել է «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բակալավրի կրթական ծրագիրը):

ՀՖԿՍՊԻ ղեկավար կազմի, կրթական և վարչական հիմնական ստորաբաժանումների հետ ՈԱԲ նախաձեռնած հանդիպումների շրջանակում ներքին շահակիցներին փոխանցվել են ՈԱԱԿ-ի կողմից անցկացված առցանց քննարկումների արդյունքները, որոնք հիմնականում վերաբերում էին ՀՀ բուհերի համընդհանուր խնդիրներին՝ նույնական կրթական ծրագրեր, թափուր (սակավաթիվ սովորողներով) մասնագիտություններ, որակավորումների արժանահավատություն շնորհում (շրջանավարտը ավարտելուց հետո որտե՞ղ կարող է աշխատել), (2021 թ. մայիսի 21):

ՈԱԲ-ը պարբերաբար մասնակցել է նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ ՈԱԱԿ-ի կազմակերպած դասընթացներին, առցանց ֆորումներին

(«Ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ» թեմայով դասընթաց, բանախոսներ՝ ԵԽ փորձագետ, Վարչավայի համալսարանի դոցենտ Թոմաս Գաջերովիչ, Կրթության և վերապատրաստումների գնահատման խորհրդի (ETEC) միջազգային գնահատումների փորձագետ, Evidence ինստիտուտի հիմնադիր Մաչեյ Զաբուկովսի, 2020թ., դեկտեմբերի 17):

Հարկ է նշել, որ ՈԱԲ-ը մշտապես ներքին շահակիցներին հասանելի է դարձրել արտաքին գործընկերների հետ ունեցած շփումների, քննարկումների արդյունքների գլխավոր շեշտադրումները:

7. Միջազգայնացում և գործակցություն

7.1 Հաշվետու տարում ՈԱԲ-ը շարունակել է քայլեր ձեռնարկել միջազգային գործընկեր հատատությունների հետ ձեռքբերված կապերն ամրապնդելու և գործակցային նոր հարաբերություններ ստեղծելու ողողությամբ:

ՈԱԲ նախաձեռնությամբ բուիի Պրակտիկայի և կարիերայի բաժնի հետ համատեղ մեկնարկել է մարզական ֆրիլենսեր-լրագրող ուսանողների, շրջանավարտների մասնագիտական զբաղվածության աջակցման միջազգային ծրագիր:

Հնդկաստանի GL մեդիակառույցի հետ համագործակցային ծրագրի նախնական փուլում իրականացվել է ուսանողների հավաքագրում, նախապատրաստական աշխատանքներ են տարվել ծրագրի կառուցվածքի փոխհամաձայնեցման ուղղությամբ, որը նախատեսում է ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացման 6-ամսյա առցանց դասընթացների ծրագիր: Վերապատրաստման ավարատին ընտրության փուլը հաղթահարած ուսանողները հնարավորություն կունենան աշխատանքի անցնելու միջազգային կազմակերպությունում՝ որպես ֆրիլենս մարզական լրագրող-թղթակից:

Համագործակցության վավերացման նպատակով սկիզբ է դրվել փոխըմբռնման հուշագրի մշակման և կնքման աշխատանքներին:

7.2. ՀՖԿՍՊԻ-ի որակի ներքին ապահովման համակարգի վերափոխման, բարելավման և զարգացման նպատակով բաժինը սկսել է իրականացնել միջազգային բենչմարքինգ՝ կատարելով արտերկրյա բուիերի որակի ապահովման կառույցների քաղաքականության համեմատական վերլուծություն՝ ըստ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի (ԵՉՈԻ) համապատասխանության և կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակների, խնդիրների և գործընթացների:

Տեղեկատվական հավելյալ նյութեր, ինքնավերլուծության արդյունքներ ձեռքբերելու նպատակով բաժինը նամակագրական կապեր է ստեղծել Լիտվայի սպորտի համալսարանի, Իտալիայի Բոլոնիայի համալսարանի, Լոնդոնի Մոնտֆորտ համալսարանի, Լյուսեքս բժշկական և սպորտի համալսարանի ներկայացուցիչների հետ՝ ձգտելով բենչմարքինգի հիմքում ունենալ փաստահեն տվյալներ և կողմնորոշիչներ:

Այսպիսով՝ ամփոփելով 2020-2021 ուսումնական տարում ՈԱԲ գործունեության արդյունքները, կարևոր է ընդգծել, որ ՀՖԿՍՊԻ-ում որակի ներքին ապահովման համակարգի զարգացման հիմնական ճանապարհը դառնում է ոչ միայն որակի ապահովման ընթացակարգերի մշակումը, այլև՝ ինստիտուտի տարբեր օղակների կողմից ընթացակարգերի մշակման, գործադրման, գնահատման և բարելավման գործընթացներին աջակցումը, հետևապես՝ որակի մշակույթի տարածումն ու ամրապնդումը:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ

ԿԱԶՄ

ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմ. սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակով սահմանված է զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Առաջնորդվելով բարձրակարգ գիտամանկավարժական կազմ ձևավորելու և մասնագիտական ներուժը պարբերաբար զարգացնելու հիմնարար արժեքով՝ ինստիտուտի գործունեության հենասյունը պրոֆեսորադասախոսական կազմն է, որի շնորհիվ ՀՖԿՍՊԻ-ն իրականացնում է իր առաքելությունը:


ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող 4 բակալավի և 9 մագիստրոսի կրթական ծրագրերը նպատակաուղղված են ֆիզիկական կրթության, սպորտի, մարզչական, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, մարզական լրագրության, մենեջմենտի, մարկետինգի և սպորտի հոգեբանության ոլորտների մասնագետների պատրաստմանը:

Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ ունենալը, ոլորտի լավագույն մասնագետներին ներգրավելը և պահպանելը, ինչպես նաև սահուն սերնդափոխություն իրականացնելը կարևոր է ՀՖԿՍՊԻ-ի համար: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրելու համար հայտարարվում է մրցույթ, որի միջոցով ստուգվում են մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի նպատակներին կամ աշխատանքի են հրավիրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման և ձևավորման գործընթացում կարևորվում են դասախոսական կազմի տարիքային գործոնները:


2020-2021 ուսումնական տարում արոՖեսորադասախոսական համակազմում արված համալրումներն ուղղակիորեն հանեցրել են դասախոսական կազմի երիտասարդացմանը՝ ըստ այդմ՝ նվազել է նաև ՊԴ կազմի միջին տարիքի ցուցանիշը և կազմել 50,4 (նախկինում՝ 70 տ.):

ՊԴ կազմի երիտասարդացման տեսանելի միտում է գրանցվել մասնավորապես Մարզական լրագրության, Սպորտի կառավարման և մարկետինգի, Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոններում:




ՊԴ կազմի տարիքը

2020-2021 ուսումնական տարում յուրաքանչյուր կրթական ծրագրին համապատասխան դասախոսական կազմ ձևավորելու կամ այն համալրելու համար գործնականում առավել ակտիվ կիրառվել է մրցութային կարգը՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը տարածելով բուհի պաշտոնական և [ֆեյսբուքյան էջում](#):



ՊԴ համակազմը՝ ըստ գիտական աստիճանների



Դասավանդող կազմի հաշվեկշիռը՝ ըստ գիտական կոչումների

Հաշվետու ժամանակահատվածում վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմերի հաստիքացուցակները վերանայվել են, որին ՄՌԿԸ բաժինն իր մասնակցությունն է ունեցել հաստիքների անվանումների մասով:

1) Աշխատողների շարժ

2020-2021 ուսումնական տարում ընդունվել է 228, աշխատանքից ազատվել է 301 աշխատող, որից 32-ը սեփական դիմումի համաձայն, 268-ը՝ ծանուցումով, իսկ 1-ը՝ մահվան փաստով:

2020-2021 ուսումնական տարում կազմվել է 244 նոր աշխատանքային պայմանագիր և գործող աշխատանքային պայմանագրերը փոփոխող և լուծող 272 համաձայնագիր:


2020-2021 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժնի կողմից կազմվել է և ըստ հասցեատերերի առաքվել 198 ծանուցում:

2020-2021 ուսումնական տարում համատեղող աշխատողների թիվը կազմել է 21:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմից՝

- 1) 17-ն ունեն պրոֆեսորի գիտական կոչում, որոնցից 7-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 5-ը՝ դոկտորի գիտական աստիճան,
- 2) 47-ն ունեն դոցենտի գիտական կոչում, որոնցից 31-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՖԿՍՊԻ-ի ՊԴ կազմի համալրումն իրականացվում է նաև բուհի լավագույն շրջանավարտների միջոցով՝ նրանց հնարավորություն ընձեռելով շարունակելու ուսումնառությունը կրթական հաջորդ մակարդակում:



ՀՖԿՍՊԻ-ում կարևորում է մասնագիտական բարձր որակներ և գործատու ոլորտի փորձառու մասնագետների ներգրավումը կրթական գործընթացում, ինչը թույլ է տալիս երաշխավորելու կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող դասախոսական կազմով:

Ընդգծենք, որ համատեղությամբ աշխատողները պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում ՀՀ պետական կառավարման մարմիններում և գործատու ոլորտի առաջատար կազմակերպություններում և ընկերություններում:



Գործարար ոլորտի ներկայացուցիչների ներգրավվածությունը ՀՖԿՍՊԻ ՄԿԾ-ում

ՊԴ կազմի համալրման գործընթացի կանոնակարգային կառուցակարգերի հստակեցման նպատակով 2020-2021 ուսումնական տարում վերանայվել են աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը և մշակվել են բոլորովին նոր բովանդակությամբ՝ վարչական աշխատողների, հրավիրված մասնագետների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և հրավիրված դասախոսի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևեր, որտեղ զգալիորեն փոփոխվել և լրացվել են «աշխատողների իրավունքներ և պարտականություններ», «աշխատողի վարձատրություն» գլուխները, ավելացվել են նաև «աշխատողի ծանուցում», «աշխատողի պատասխանատվություն», «պայմանագրի փոփոխում և լուծում» բաժինները: Այսօրինակ փոփոխությունների արդյունքում աշխատանքային պայմանագրերը համապատասխանեցվել են ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին:

2020-2021 ուսումնական տարում մեկնարկել է աշխատողների «պաշտոնի նկարագրերի» մշակման գործընթացը, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2022 թվականի ընթացքում:

Պաշտոնի նկարագրերը կազմվել են ըստ յուրաքանչյուր հաստիքի (պաշտոնի) և ներառել են տվյալներ պաշտոնի՝ կառուցվածքային ստորաբաժանման պատկանելիության, ենթակայության, պատասխանատվության շրջանակի, պաշտոնից բխող գործառույթների, տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և անձնային որակների մասին:

ՄՌԿԸ բաժինն իր մանակցությունն է ունեցել աշխատողների համալրման գործում, մասնավորապես՝ ՄՌԿԸ բաժինը ներկայացված է եղել ՊԴԱ կազմի համալրման շուրջ ամբիոնների վարիչների հետ կայացած բոլոր հանդիպում-քննարկումներին, այնուհետև ինստիտուտի ղեկավարի հանձնարարությամբ, ինչպես ամբիոնի վարիչներից, այնպես էլ ինստիտուտի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված պահանջների հիման վրա, ՄՌԿԸ բաժինը կազմել է թափուր աշխատատեղերի մրցույթների մասին հայտարարություններ, որոնք հրապարակվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

2020-2021 ուսումնական տարում հայտարարվել է թափուր աշխատատեղի համալրման 19 մրցույթ, որոնց հիման վրա ստացվել է ընդհանուր 157 ինքնակենսագրական: Վերջիններս ըստ էության ուսումնասիրվելուց հետո, ըստ ենթակայության ուղարկվել են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին, որոնց առաջարկությամբ թեկնածուները հրավիրվել են հարցազրույցի: Հայտարարված մրցութներից միայն 4-ով հարցազրույց չի անցկացվել, մնացած 15 հարցազրույցներին ՄՌԿԸ բաժինը ներկայացված է եղել: Հարցազրույցների արդյունքում կազմվել են 19 արձանագրություններ:

Ինստիտուտում վարչական և պրոֆեսորադասախոսական համակազմի համալրման և աշխատանքից ազատման գործընթացն իրականացվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին և ինստիտուտի «Վարչական համակազմի աշխատանքի ընդունման և պայմանագրերի լուծման ընթացակարգ»-

ին և «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ»-ին համապատասխան:

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

Վարչական և ուսումնաօժանդակ կառույցների գործունեության արդյունավետության շարունակական կատարելագործումն ամրագրված է ՀՖԿՍՊԻ-ի զարգացման ռազմավարական ծրագրում:

2019-ին ՀՖԿՍՊԻ-ի նոր կազմակերպական կառուցվածքի ներդրման արդյունքում վարչական կառուցվածքում կատարվել են առանցքային փոփոխություններ: Վարչական համակազմի աշխատակիցների վերամշակված գործառույթներով տարանջատվել են աշխատակիցների պատասխանատվություններն ու պարտականությունները:

2020-2021 ուստարում բուհում ընթացող բարեփոխումներին զուգահեռ ստեղծվել և վերակազմավորվել են մի շարք ստորաբաժանումներ՝ համապատասխան աշխատակազմերով, որոնք ևս ձևավորվել են մրցութային կարգով:

Որոշ բաժինների հիմքի վրա վերակազմակերպվել են նոր ստորաբաժանումներ: Ուսումնական մասի հիմքի վրա ստեղծվել է Ուսումնագիտական բաժինը՝ բակալավրի, մագիստրատուրայի (առկա/հեռակա) ենթաբաժինների աշխատակիցներով:

Ստեղծվել են նոր կառուցվածքային միավորներ, ինչպես օրինակ՝ Ինստիտուցիոնալ և համագործակցային զարգացման ծրագրերի բաժին, Իրավական ապահովման բաժին, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, Ներքին անվտանգության բաժին, Հասարակության հետ կապերի պատասխանատու:

Մշակման գործընթացում են վարչական ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնի անձնագրերը, որտեղ ներկայացված կլինեն աշխատողների աշխատանքային պարտականություններն ու գործառույթները, պահանջվող մասնագիտական հմտություններն ու անձնային որակները: Կանոնակարգման փուլում են նաև ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի գործունեության վերահսկման, տարբեր տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարման գործընթացները, որոնք հնարավորություն կտան հստակեցնել տարբեր հաստիքների ձևավորման սկզբունքները, վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ հաստիքների աստիճանակարգումը, նշված հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները՝ ինչպես նաև տարանջատել աշխատողների իրավասությունների շրջանակները:

Ուսումնաօժանդակ կազմի գործունակության ցուցանիշների բարելավման նպատակով անցկացվել է վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորում:

Պայմանավորված Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի ներդրմամբ՝ 2020-2021 ուսումնական տարում ՄՌԿԸ-ի կողմից կազմակերպվել և

ըստ ժամանակացույցի իրականացվել է ինստիտուտի բոլոր վարչական աշխատողների և ամբիոնի վարիչների վերապատրաստման դասընթաց, որի արդյունքում աշխատողները պատկերացում են կազմել ինչպես ինստիտուտում ստեղծվող փաստաթղթերի շարժի վերաբերյալ, այնպես էլ այդ մասով ձեռք են բերել համակարգչային նոր հմտություններ: Վերապատրաստմանը զուգընթաց, ՄՌԿԸ բաժինը մշտապես իր խորհրդատվական աջակցությունն է ցուցաբերել համակարգի շահագործման շուրջ առաջացող հարցերին:

Ներքին իրավական ակտերի վերաբերյալ սեմինարները և դրանց հաջորդող ատեստավորումը հետաձգվել է հաջորդ տարի, քանի որ մի շարք ներքին իրավական ակտերի հաստատումը ևս հետաձգվել է:

ՄՌԿԸ բաժնի կարևորագույն գործառույթներից է աշխատողների աշխատանքային գիտելիքների և հմտությունների պարբերաբար ստուգումը: Աշխատողների գիտելիքների ստուգման գործիք է վերջիններիս ատեստավորումը:

2020-2021 ուսումնական տարում կազմակերպվել է ատեստավորում 2 աշխատակցի մասով՝ գրադարանավար և ամբիոնի գործավար:

Գրադարանի աշխատողի ատեստավորումը նպատակ է հետապնդել ստուգել աշխատողի գիտելիքները գրադարանային գործին վերաբերող ՀՀ օրենսդրության և համակարգչային գիտելիքների մասով:

Ամբիոնի գործավարի ատեստավորման արդյունքում ստուգվել են վերջինիս համակարգչային գիտելիքները:

Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգը ներդրվել է 01.06.2021թ.-ին, սակայն ամենամյա արձակուրդի ժամանակահատվածով պայմանավորված, այն լիարժեք սկսել է շահագործվել 2021 թվականի սեպտեմբեր ամսից:

Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի ներդրումը նպաստել է ինստիտուտում կառավարման թափանցիկությանը, կառավարման արդյունավետությունն ու հուսալիությունը բարձրացնելուն, միևնույն ժամանակ թղթային տարբերակով փաստաթղթաշարժը կրճատելուն և ժամանակի խնայողությանը:

ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

«Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակով սահմանված է «ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող ռեսուրսային ենթակառուցվածքներ»: Նախատեսված է զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, բազմազանել ինստիտուտի ֆինանսական աղբյուրները և դրանք նպատակաուղղել հաստատության զարգացման կարիքներին:

Ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում

Դիտարկվող ժամանակահատվածում բուհում իրականացվել են հիմնանորոգման ծավալուն աշխատանքներ: Վերանորոգման և շինարարական աշխատանքներ են իրականացվել ՀՖԿՍԴԻ-ի տարբեր մասնաշենքերում, որի համար ծախսվել է շուրջ 12,6 միլիոն դրամ: Իրականացվել է 2-րդ մասնաշենքի՝ ամբողջությամբ 4-րդ հարկի վերանորոգում:

Հաշմանդամություն ունեցող ուսանողների ազատ տեղաշարժն ապահովելու համար կառուցվել են թեքահարթակներ բուհի գլխավոր մասնաշենքում: Ներառակա կրթության իրականացման նախադրյալներ ստեղծելու նպատակով բացվել է ներառական լսարան, վերանորոգվել են սանհանգույցները, որտեղ նախատեսվել են առանձին հատվածներ հաշմանդամություն ունեցող անձանց համար:


Վերանորոգվել են վարչական մասնաշենքի սանհանգույցները, որոնք նախկինում խիստ անբարեկարգ վիճակում էին. նախատեսվում է հիմնանորոգել ևս 8-ը:

Ուսումնական կարիքների բավարարման ու արդյունավետ պլանավորման նպատակով ամբիոնների, համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացվել են պահանջագրեր և զեկուցագրեր, որոնց հիման վրա ձեռք են բերվել անհրաժեշտ ռեսուրսներ: Ներկայացված պահանջագրերի մեծ թիվը ցույց է տալիս, որ բուհում եղել է տեխնիկական անհրաժեշտ վերազինումների և հագեցվածության պակաս:

Համապատասխան տեխնիկական միջոցներով և սարքավորումներով լրացուցիչ ապահովման ու թարմացման անհրաժեշտությունը հիմնավորող պահանջագրերը, որպես կանոն, բավարարվել են և հետևողական կերպով ընթացք է տրվել անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործընթացին:

Այսպիսով՝ լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները տեխնոլոգիապես վերազինելու համար 2020-2021 ուստարվա ընթացքում կատարվել է 12.88 միլիոն դրամի ներդրում, որի շրջանակում ձեռք են բերվել համակարգչային գույք (64), համակարգչային պարագաներ, դյուրակիր համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպագրական սարքեր, տեսահսկման սարքեր, տեսախցիկներ, վեբ և շարժական տեսախցիկներ, խոսափողներ և ականջակալեր:

2020-2021 ուսումնական տարում բուհ է ընդունվել 734 ուսանող, ինչը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տասը տարվա համար: Այս ցուցանիշների փոփոխականը հանգեցրել է լսարանային տարածքների ավելացմանն ու նորոգմանը, ուսումնական գործընթացին օժանդակող ռեսուրսների ձեռքբերմանը, ինչպես նաև՝ դասախոսական կազմի համալրմանը:



Ներկայացված գծապատկերից երևում է, որ կայուն հենքի վրա են դրվել հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներն ու նյութատեխնիկական հիմնական միջոցների, սարքավորումների ձեռքբերումը, որի նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը: Ընդհանուր միտումն առանձին ուղղություններով ծախսերի ավելացումն է՝ պայմանավորված տվյալ տարվա նպատակադրումներով և առաջնահերթություններով:

Թեև բուհում առկա են կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար պայմաններ, սակայն իրականացվող ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավումը շարունակում է մնալ ՌԾ-ում ամրագրված խնդիր: Լսարանները դեռևս հարմարեցված չեն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու և գործնական դասեր կազմակերպելու համար, իսկ Smart գրատախտակների և համակարգչով ու պրոյեկտորով հագեցած լսարանների քանակը սակավաթիվ է:

Մարզադահլիճներում առկա մարզային գույքը մաշված է, դահլիճին կից հանդերձարանները փոքր են, կահավորված չեն անհրաժեշտ գույքով և ունեն հիմնանորոգման կարիք: Սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանելու տեսանկյունից ևս մարզադահլիճների սանհանգույցները վատ վիճակում են:

Թեև ֆինանսական միջոցները կառավարվում են հնարավորինս նպատակային, այդուհանդերձ ֆինանսական հատկացումների բաշխման, կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումն ընթացիկ

գերակայություն է և գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացումը ևս օրակարգային հարց է, որի լուծման համար տարվում են ինստիտուտի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի առևտրայնացման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին բուհի մասնակցությունն ակտիվացնելու միջոցով:

Ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում

12.6 մլն.



Վերանորոգման և շինարարական աշխատանքներ

համակարգչային պարագաներ, դյուրակիր համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպագրական սարքեր, տեսահսկման սարքեր, տեսախցիկներ, վեբ և շարժական տեսախցիկներ, խոսափողներ և ականջակալեր

Ժայռապատ

Լսարանային ֆոնդի բարելավում



ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ, ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀՆԵՐԻ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ՀՖԿՍՊԴ-ի կազմակերպական կառուցվածքում իրականացված փոփոխությունների արդյունքում գրադարանի զարգացումը բուհում դիտարկվում է իբրև ռազմավարական ուղղություն: Ներկայումս մշակվում է գրադարանի զարգացման ծրագիր, որը հնարավորություն կտա բարելավել գրադարանային ֆոնդի համալրումները. նախատեսվում են բարեփոխումներ գրադարանային սպասարկման, գրադարանային ֆոնդի թվայնացման, տեղական միջգրադարանային և միջազգային գրադարանային ցանցերի, գիտատեղեկատվական շտեմարանների հետ համագործակցության ձեռքբերման և զարգացման ուղղություններով:

Հաշվետու տարում ամբողջականացվել է հիմնական ուսումնական գրականության թվայնացման և գրադարանի էլեկտրոնային քարտարանի ձևավորման գործողությունների փաթեթը: Գրադարանն ունի 2858 ընթերցող ` 277 աշխատող և 2581 ուսանող:

2020թ. սեպտեմբերից գրադարանում իրականացվել են գույքագրման և հաշվառման աշխատանքներ: Կատարվել են ընթերցասրահի և սպասարկման բաժնի գրականության վերագրանցման աշխատանքներ, որը ներառել է 56825 կտոր գիրք: Մեկնարկել են գրապահոցի գրականության վերագրանցման աշխատանքներ, առանձնացվել են արդիականությունը կորցրած, հնամաշ գրքերը, որոնք դուրս են գրվում գրադարանի ֆոնդից: Գրադարանային ֆոնդը համալրվել է անհրաժեշտ և պահանջված գրականությամբ: Գրադարանը նվիրատվության կարգով ստացել է 194 անուն գիրք: Էլեկտրոնային գրադարանը ևս համալրվել է նոր գրքերով՝ կազմելով ընդհանուր 1200 անուն գրականություն:

Մշակման փուլում է գրադարանի զարգացման հայեցակարգը, որով նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային ռեսուրսների ներբուհական պորտալ, ընդլայնել գրադարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, բարձրացնել ուսանողների և դասախոսական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին:

Գրադարանային ֆոնդի համալրումը կատարվում է ներքևից վերև եկող առաջարկություններով. ամբիոնների և այլ ենթակառուցվածքների կողմից ներկայացվում է համապատասխան պահանջարկը, որը ձեռք է բերվում նախապես հատկացված գումարներով: Արդյունքում ակտիվացել է համագործակցությունը ամբիոնների հետ, օնլայն գրախանութներից գնումներ իրականացնելուց առաջ ամբիոններից հավաքագրվել է ժամանակակից պահանջված մասնագիտական հայալեզու և օտարալեզու գրականության ցանկ:

Ինստիտուտի գրադարանի զարգացման բնագավառում կարևոր խնդիր է տեղեկատվական ծավալի ընդլայնումը՝ առավել արդիական գիտական և ուսումնամեթոդական տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Այդ նույն

նպատակով ստեղծվել է էլեկտրոնային գրադարանը: Օրակարգային խնդիր է ՀՀ էլեկտրոնային գրադարանների հետ համագործակցության հաստատումը և էլեկտրոնային քարտարանի ստեղծումը:

Գրադարանային միջավայրի վերափոխման աշխատանքների շրջանակում նախատեսվում է ստեղծել քննարկումների համար առանձին սենյակներ, ճեմասրահում «փափուկ» հատվածներ քննարկումների համար: Գրադարանում սպասարկումը կիրականացվի բաց դարակների սկզբունքով:

Գրադարանը նպատակ ունի նաև կատարել հետևյալ աշխատանքները.

1. Փոխել ողջ գրադարանի կառուցվածքը. գրապահոցը պետք է հասանելի լինի ընթերցողի համար:
2. Օտարել ողջ մաշված, արդիականությունը կորցրած գրականությունը, հանձնել մակուլատուրա՝ ձեռք բերել նոր գրքեր: Դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ նոր գրքեր ձեռք բերելու համար: Հաշվառել մեթոդիկների քանակը և դրա հիման վրա կազմակերպել համալրման աշխատանքներ:
3. Գրադարանի վեբ-կայքի պատրաստում: Ակտիվ գործարկել էլեկտրոնային կայքը, մեծացնել էլեկտրոնային գրականության հասանելիությունը:
4. «Գրադարանը՝ ինչպես ինտելեկտուալ զարգացման կենտրոն». տարածք՝ նախատեսված կլոր սեղանների, դասախոսությունների, սեմինարների, կոնֆերանսների, գիտական թեզերի պաշտպանության համար:
5. Կատարել դասախոսների հեղինակած գրքերի շնորհանդեսներ, որոնք կոգևորեն և՛ դասախոսին, և՛ ուսանողին: Ստեղծել այնպիսի շտեմարան, որը կօգնի ուսանողին դյուրությամբ պատրաստվել քննություններին:
6. Ամեն ամիս անցկացնել «Ինֆորմացիոն օրեր», տպագրել տեղեկագրեր՝ «Ֆոնդային նոր համալրումներ» խորագրով:
7. Համագործակցել այլ գրադարանների հետ, փորձի փոխանակման նպատակով, ակտիվ ներգրավվելով վերապատրաստման բոլոր ծրագրերին:
8. Իրականացնել թրեյնինգներ սպորտային բովանդակությամբ՝ նոր հրատարակությունների վերաբերյալ:
9. Պատրաստել կարծիքների հարթակ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց առաջարկները և դժգոհությունները:
10. Ստեղծել գրքափոխանակության անկյուն (դասախոսությունները ևս կարող են ներառվել գրադարանի ֆոնդում՝ ամրապնդելով գրադարան - ամբիոն կապը):

ՀՖԿՍՊԻ-ում ստեղծված է ապահով և անվտանգ աշխատանքային միջավայր

Ինստիտուտում առողջության և անվտանգության պահպանման ծառայությունները մատուցվում են համապատասխանաբար ամբուլատորիայի և ներքին անվտանգության բաժնի կողմից, որոնցից վերջինը բուհում ստեղծվել է 2019-2020 ուստարում: Բաժնի աշխատակիցները իրականացնում են ինստիտուտի մասնաշենքերի և գույքի պահպանության, ուսանողների և աշխատակիցների

անվտանգության ապահովման, շուրջօրյա ռեժիմով հերթապահության գործառույթներ:

Ամբուլատորիան իրականացնում է նաև ներբուհական ընդունելության քննությունների բժշկական սպասարկումը: Ամբուլատորիան ապահովված է անհրաժեշտ դեղորայքով և բուժզննում իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներով:

Ամբուլատորիան ֆինանսավորվում է ինստիտուտի բյուջեից, ծավալում է կենտրոնացված և ապակենտրոնացված գործունեություն, օրինակ՝ մարզական պարապմունքների և բուհական խաղերի անցկացման համար սահմանվում են բուժանձնակազմի հերթապահություններ:

Առողջապահական ծառայություններ իրականացնող ամբուլատորիան տեղակայված է բուհի կենտրոնական մասնաշենքում, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ուսանողներին և աշխատակիցներին օպերատիվ կերպով ցուցաբերել առաջին բուժօգնություն:

2020-2021 ուստարում կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով բուժանձնակազմը օպերատիվ հերթապահություն է իրականացրել, կատարել ամենօրյա կանոնավոր ջերմաչափումներ, անհրաժեշտության դեպքում կատարել է բուժզննում և տրամադրել առաջին բուժօգնություն:

Ստուգման ընթացքում կցված բուժաշխատողի կողմից տրվել են ցուցումներ ի հայտ բերված թերությունների վերաբերյալ, որոնք և ժամանակին շտկվել են: Ինստիտուտի սանիտարական վիճակի մասին պարբերաբար տեղյակ են պահվել ինստիտուտի ղեկավար կազմին: Հաշվետու տարում սպասարկվել են առկա և հեռակա ուսուցման 250 ուսանողներ, ինչպես նաև ինստիտուտի աշխատակիցներ:

Պրոցեդուրավիրակապային կաբինետի կողմից սպասարկվել են 250 դիմողներ՝ տարբեր ցուցումներով՝ ներարկում, վիրակապություններ, վերքերի մշակում:

Առաջնային հիվանդություններն ըստ բնույթի բաշխվել են հետևյալ կերպ՝ ինֆեկցիոն՝ 5 COVID, թոքաբորբ՝ 5, վիրաբուժական՝ 50, ԼՕՌ՝ 7, ՍՌՀ (վերին շնչուղիների կատար)՝ 40, կուտրվածքներ՝ 2 և այլ հիվանդություններ: Բոլոր վնասվածքները գրանցված են ամբուլատոր գրքում:

Առկա ուսուցմամբ ուսանողներից առաջնային հիվանդությամբ դիմողներն ըստ կուրսերի կազմել են՝

առաջին կուրս՝ 35%,
երկրորդ կուրս՝ 25%,
երրորդ կուրս՝ 10 %,
չորրորդ կուրս՝ 3%:

Բժշկավերաստուգիչ աշխատանքներ են կատարվել բոլոր կուրսերի ուսանողների հետ: Հաշվետու տարում ուսանողների առողջական կոպիտ շեղումներ չեն բացահայտվել: Ուսանողներին տրամադրվել են տեղեկանքներ՝ կապված մրսաժության հետ, որը կազմել է 5-7 օր, վիրահատությունից հետո՝ 10-25 օր, վնասվածքների միջին տևողությունը՝ 15-20 օր:

1. Բժշկական հանձնաժողովը 2020-2021 թթ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին սպասարկել է առկա, հեռակա և սփյուռքահայ դիմորդների քննությունները: Ուսումնական տարվա ընթացքում բաժնի կողմից սահմանվել է վերահսկում բուհի ողջ տարածքում սանիտարահիգիենիկ նորմերը:

Հաշվետու տարում բժշկի և բուժքույրերի կողմից ուսանողների հետ զրույցի տեսքով անցկացվել են բժշկատեղեկատվական աշխատանքներ տարբեր թեմաների շուրջ՝ մարզիկի հիգիենան, աղիքային ինֆեկցիաները, մարզական վնասվածքները, սնկային հիվանդությունները և դրանց կանխարգելումը:

2. Բուհում թեպետ կատարվեցին բազմապիսի կանխարգելիչ միջոցառումներ, այնուամենայնիվ, ինստիտուտում եղան COVID-19-ով վարակակիրներ: Կորոնավիրուսի դեմ պայքարի աշխատանքները շարունակական առաջնային բնույթ են կրում:

Հաշվետու տարում բժշկական հանձնաժողովի կողմից տարեկան աշխատանքները կազմակերպվել են՝ համաձայն աշխատանքային պլանի:

Հաշվետու տարում սպասարկվել է առկա և հեռակա ուսուցման 500 ուսանող, ինչպես նաև՝ ինստիտուտի աշխատակիցներ:

Այսպիսով՝ առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի անմիջական ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին ՀՀ օրենքի դրույթները՝ ծխախոտի օգտագործման դեմ պայքարը ուժեղացնելու նպատակով ՀՖԿՍՊԻ ռեկտորի հրահանգով բուհում ծխելը խստիվ արգելվում է:

Կարևորելով աշխատակիցների առողջության պահպանման, սոցիալական աջակցության տրամադրման հարցերը՝ աշխատանքներ են տարվում աշխատակիցներին սոցիալական փաթեթներում ընդգրկելու ուղղությամբ, նախատեսվում են մարզման անվճար պարապմունքներ անցկացնել բոլոր աշխատողների համար:

2019-ից ՀՖԿՍՊԻ-ում գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, որն իրականացնում է մասնաշենքերի և գույքի պահպանությունը, ապահովում ուսանողների և աշխատողների անվտանգությունը: Բաժնի անձնակազմը ընդգրկում է 19 աշխատող, որից 12-ը պահնորդական ծառայության կազմում է, 3-ը շրջիկ հսկիչ, 3-ը տեսահսկիչ:

2019-ից բուհում ներդրվել է հակահրդեհային ծառայություն՝ իրականացվել են մասնաշենքերում հակահրդեհային պատրաստվածության գնահատման պրոֆիլակտիկ աշխատանքներ, բուհի անձնակազմն իրազեկվել է հակահրդեհային կանոնների վերաբերյալ: Ինստիտուտի մասնաշենքն ապահովված է հակահրդեհային ազդանշանային համակարգով, շինությունը տեսահսկվում է:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ՀՖԿՍՊԻ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին հայ-ադրբեջանական սահմանին սանձազերծված պատերազմի օրերին ինստիտուտում մշտական հիմունքներով գործել են քաղաքացիական պաշտպանության հանձնաժողովներ: Ինստիտուտի մի քանի տասնյակ

աշխատակիցներ կամավորական ջոկատներով մեկնել են ռազմաճակատ՝ մասնակցելու պատերազմական գործողություններին, իսկ դասախոսական կազմի ներկայացուցիչներից թիկունքում մասնակցել են հոգեբանական աջակցման, բժշկական վերականգնողական ծառայությունների տրամադրման աշխատանքներին:

Հաշվետու տարում ՀՖԿՍՊԻ-ում տեսանելի աշխատանքներ են կատարվել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և աշխատակիցների համար մատչելի և անվտանգ միջավայրի ապահովման համար: Բուհի գլխավոր շենքի մուտքն ունի թեքահարթակ, բացվել է նաև ներառական լսարան: Քայլեր են ձեռնարկվում ոչ միայն ֆիզիկական մատչելիության ապահովման ուղղությամբ, այլև, հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորությունը, ներառական հասարակության կայացման հարցում, ջանքեր են ներդրվում ծրագրային և սոցիալական մատչելիության, ինչպես նաև ակադեմիական ներառականության ուղղությամբ. ինստիտուտի անվտանգության ծառայության տեսահսկման բաժնի աշխատակիցներից երկուսը հատուկ կարիքներ ունեցող անձինք են:

Գլխավոր մուտքի նոր պահակակետի և պլաստիկ քարտերի ակտիվացմամբ ավելի անվտանգ և ապահով է դառնում բուհի անվտանգությունը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ. ՄՈՒՏՔ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ


2020-2021 ուսումնական տարում Պրակտիկայի և կարիերայի բաժինը գործուն քայլեր է ձեռնարկել՝ ձևավորելու բուհի շրջանավարտների մասնագիտական զբաղվածության տվյալների բազա, վերանայվել են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչը կօգնի հասկանալու և գնահատելու բուհում իրականացվող մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Ընդհանուր առմամբ՝ բաժինը դեռևս չունի ակտիվ դերակատարում ուսանողների մասնագիտական կողմնորոշման գործընթացում, թույլ է կապը շրջանավարտների հետ, դեռևս ձևավորված չէ բոլոր տարիների շրջանավարտների և նրանց զբաղվածության տվյալների բազա, ինչպես նաև գնահատված չէ բաժնի օժանդակությամբ շրջանավարտների՝ զբաղվածության և մասնագիտական ոլորտում ծառայունակության և դրա բարձրացմանն ուղղված քայլերի և միջոցառումների արդյունավետությունը:

Քանի որ բուհում համակարգված կերպով չեն իրականացվել շրջանավարտների զբաղվածության վերլուծություններ, հաշվետու տարում Պրակտիկայի և կարիերայի բաժինը նախաձեռնողականություն է ցուցաբերել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները հավաքագրել ոչ ֆորմալ ճանապարհով՝ հիմնականում ամբիոններին արված հարցումների միջոցով:

2020–2021 թթ. շրջանավարտների 65%-ն աշխատում են" որոնցից՝ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներ՝ 35% (65 % ից), ուժային կառույցներում (ՊՆ, ԱԱԾ, ՀՀ ոստիկանություն)՝ 21% (65 % ից), այլ ոլորտներ՝ 44% (65 %-ից):

Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներ՝
ըստ կրթական ծրագրերի



Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ մասնագիտական ոլորտում շրջանավարտների զբաղվածության մակարդակը բավականին ցածր է, ինչն առաջին պլան է մղում ուսանողների կարիերայի զարգացմանն օժանդակելու բուհի հանձնառության կաևորությունը:

Ուսանողների և ապագա շրջանավարտների հետ հաղորդակցական հոսքերը կառավարելու նպատակով ներդրվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Ուսանողներին տրամադրված հասցեն պահպանվելու է նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը:

Վերանայվում են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչն իր հերթին կօգնի ուսումնասիրելու և գնահատելու բուհում իրականացվող մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Հաշվետու տարում բաժինը շարունակել է իր ֆեյսբուքյան էջով ուսանողներին իրազեկել մասնագիտական աշխատաշուկայում առկա թափուր տեղերի մասին, կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ ոլորտի գործատուների հետ, որոնց կողմից բարձրաձայնված խնդիրները դիտարկվում են նաև ՄԿԾ-ների վերանայման ժամանակ:

Ուսանողական խորհրդի հետ համատեղ անցկացվել են առցանց դասընթացներ [CV գրելու հմտությունների, աշխատաշուկային ճիշտ և շահեկան](#)

ծնով ներկայանալու վերաբերյալ, մասնագետները ուսանողներին գործնական խորհուրդներով ծանոթացրել են կարիերա սկսելու քայլերի հաջորդականությանը, տրամադրել գործնական առաջխաղացում ունենալու խորհրդատվություն:

Ուսանողական խորհրդի գործունեությունը

Հաշվետու տարում ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) պարբերաբար իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող միջոցառումներ:

Ռազմահայրենասիրական միջոցառումների շրջանակում ՈՒԽ նախաձեռնությամբ ուսանողներն այցելեն են Եռաբլուր պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին: Ակտիվացել են միջբուհական կապերը ուսանողական խորհուրդների հետ, համատեղ կազմակերպվել են ուսանողական բոլվինգի և բազկամարտի առաջնության խաղեր: ՈՒԽ հրավերով Եվրոպական համալսարանի ուսանողները այցելել ՀՖԿՍՊՈՒ, ինստիտուտի թանգարանում ծանոթացել բուհի 76-ամյա պատմությանը:

ՈՒԽ. «Բանավեճ-քննարկումների» ակումբի նախաձեռնած «Ֆիլմերը ժամանցի ավելի լավ տարբերակ են, քան գրքերը» խորագրով բանավեճ-քննարկումները մեծ հետաքրքրություն և աշխուժություն են առաջացրել ուսանողների շրջանում՝ գրքասեր ուսանողներին համախմբելով դասական և ժամանակակից գրականության բեսթսելերներին նվիրված քննարկումների սեղանի շուրջ:

Բուհում իրադարձային նշանակալի միջոցառում էր նաև «Տարվա 10 լավագույն մարզիկները» մրցանակաբաշխությունը:

Ինստիտուտում նախկինում գործող 3 անվանական կրթաթոշակներին ավելացել է ևս 6:

Փետրվարի 19-ը՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, նշվում է որպես գիրք նվիրելու տոն: Այդ կապակցությամբ ինստիտուտում անցկացվել է #նվիրիր_գիրք challenge ֆլեշ մոբը, որին միացել են բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները և միմյանց նվիրել գրքեր: Այսօրինակ նախաձեռնությունները լուսաբանվել են բուհի և ՈՒԽ պաշտոնական ֆեյսբուքյան էջերի միջոցով՝ խրախուսելով ընթերցանության միջոցով ինքնազարգացումն ու գիտելիքների հարստացումը:

EXPO-2021



ԲՈՒՀ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2019-ից բուհում նոր կառուցվածքային ստորաբաժանում է գործում. այն է՝ Ինստիտուցիոնալ հարաբերությունների բաժին, որի հիմնական գործառույթն ուղղված է գլխադասային գերատեսչության (ՀՀ ԿԳՄՄՆ), ՀՀ գործադիր, օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային կազմակերպությունների, բուհերի, մասնագիտացված ընկերությունների հետ գործընկերային և փոխգործակցային հարաբերությունների ձևավորմանը, սպասարկմանը և զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից համագործակցային հարաբերությունների վերաբերյալ նամակագրություն է իրականացվել Հայաստանում գործող տարբեր ոլորտների առաջատար տնտեսվարողների հետ՝ ուղղված ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի սպասարկման որակի, ինչպես նաև ուսումնական և աշխատանքային պայմանների լավացմանը: Ուսումնական գործընթացի կազմակերպմանն են ուղղված եղել նաև տարբեր մարզական կազմակերպությունների մարզաբազաներից օգտվելու նպատակով հաստատված ինստիտուցիոնալ հարաբերությունները: Գործընկերային հարաբերություններ են ձևավորվել «Հայաստանի թվային գրադարանների» ասոցիացիայի հետ, կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ինստիտուտի կորպորատիվ հեղինակության բարձրացմանը և աշխատակիցների կորպորատիվ պատասխանատվության ձևավորմանը:

Բուհում իրականացվող կրթության որակի ապահովմանն է ուղղված համագործակցային նամակագրության կազմակերպումը և ուսանողների գործնական դասերի կազմակերպմանը և պրակտիկայի անցկացմանը նպաստող գործընկերային հարաբերությունների ձևավորումը: Այդ նպատակով իրականացվել են սերտ և արդյունավետ աշխատանքներ մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ: Բաժնում ստեղծել է հարուստ կոնտակտային բազա (մարզական, այդ թվում նաև՝ ֆուտբոլային ակումբներ, ֆիթնես սրահներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ, գործընկեր բուհեր, առաջատար տնտեսվարողներ, betting ոլորտի ներկայացուցիչներ և այլն):

Ինստիտուցիոնալ հարաբերությունների բաժնում կատարվել են աշխատանքներ՝ լրացուցիչ կրթական ծրագրերի տեսակների ավելացման ուղղությամբ, կազմակերպվել են սեմինարներ, իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ: Իր առջև դրված նպատակներին և ղեկավարներից ստացած հանձնարականների կատարման նպատակով հաստատվել է ոչ միայն նամակագրային համագործակցություն, այլև իրականացվել են բազմաթիվ միջանձնային շփումներ, բանակցություններ, քննարկումներ, ձեռք են բերվել համապատասխան համաձայնություններ: Նշված համաձայնությունները վավերացվել են կնքված հուշագրերով:

Բաժինն ակտիվորեն մասնակցել է մասսայական միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքներին (հուշ-երեկո, մեծարման միջոցառում, թեմատիկ հանդիպումներ, սեմինարներ և այլն), այդ թվում նաև՝ մարզաձևերի ազգային ֆեդերացիաների հետ համատեղ: 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում ՀՀ բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում «Ֆիզկուլտուրա» առարկայի հեռավար դասավանդման ուղեցույց, ինչի անհրաժեշտությունն առաջացել էր համաճարակային սահմանափակումների պատճառով:

Բաժինն ակտիվ մասնակցություն է ունեցավ EXPO-2021 կրթական ցուցահանդեսին ներկայանալու նպատակով ներկայացուցչական բուկլետների պատրաստման գործում: Հաշվետու ժամանակահատվածում Հայ կամավորների միության հետ համատեղ կազմակերպել և իրականացրել է սպորտի ոլորտի կառավարման, շուկայագիտության և PR ոլորտի մասնագետների համար նախատեսված դասընթացների շարք:

Նշենք, որ վերահիշյալ աշխատանքներն իրականացվել են արտակարգ պայմաններում և ռեժիմով՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի և Հայաստանի Հանրապետության նկատմամբ սանձազերծված 44–օրյա պատերազմի պատճառով ստեղծված իրավիճակը: Բաժնի կողմից իրականացված նամակագրային հարաբերությունները մեծապես նպաստել են պատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջանում ինստիտուտի մասնագետների և ուսանողների ակտիվ մասնակցությանը վիրավոր և հաշմանդամություն ստացած զինծառայողների ֆիզիկական վերականգնման գործընթացում:

2020-ից ինստիտուտը որդեգրել է գործատու ոլորտից դասախոսական կազմի ձևավորման քաղաքականություն, ընդլայնվել են գործատու կառույցների հետ մասնագիտական պրակտիկայի անցկացման, աշխատաշուկայից հրավիրված մասնագետների հետ համատեղ մագիստրոսական ատենախոսության շրջանակում հետազոտական նախագիծ իրականացնելու հնարավորությունները՝ որպես միջոց գործատուի հետ շարունակաբար շփվելու, աշխատաշուկայի պահանջը ուսանողին հասցնելու, գործատուից եկած ազդակներին համապատասխան պրակտիկ կրթություն իրականացնելու համար:

Այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ կարող է լինել գործակցող կողմերի համար. որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով:

2020-2021 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ-ն նոր թափ է հաղորդել բուհ-գործատու համագործակցային կապերի սերտացմանը. ընդլայնվել է գործատու հաստատությունների և կառույցների գործակցային ծրագրերի շրջանակը: Հուշագրեր են ստորագրվել մի շարք գերատեսչությունների և գործընկեր կառույցների հետ, ինչպես օրինակ՝

ինստիտուտի բակալավրի և մագիստրոսի տարբեր կրթական ծրագրերի ուսումնառողների պրակտիկայի անցկացման նպատակով գործատու կառույցների հետ կնքվել է շուրջ 300 պայմանագիր:

Արտաքին շահակիցների հետ ինստիտուցիոնալ հարաբերություններ ձևավորելու նպատակով ՀՖԿՍՊԻ-ն պրոակտիվ ներդրում է ունեցել նաև բարձրագույն կրթության ոլորտային շրջանակի մշակման աշխատանքներին: ՀՀ մանկավարժական բուհերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի հետ համատեղ մշակվել է Որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) նախագծային տարբերակը և ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Նախագծում ՀՖԿՍՊԻ առաջարկները վերաբերել են ոչ միայն փաստաթղթի կառուցվածքին, վերջնարդյունքների ձևակերպման հիմնական բնութագրիչներին, այլև մշակվող փաստաթղթով ապագա մանկավարժի որակավորման հուսալիության ու արժանահավատության հավաստմանը: Բուհի կողմից ներկայացրած դիտարկումներն ու առաջարկությունները հիմնականում ընդունվել են և արտահայտվել ՈՈՇ-ի նախագծային տարբերակում:

ՀՖԿՍՊԻ-ի համագործակցություններ



- ✓ Ուրարտու ֆուտբոլային ակումբ
- ✓ Հայաստանում Ֆրանսիական համալսարան (UFAR)
- ✓ Հայաստանի ուսանողական ֆեդերացիա
- ✓ Երևանի շախմատի ֆեդերացիա
- ✓ Սպորտային բժշկության կենտրոն



ՈՐԱԿՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Որակյալ կառավարում և վարչարարություն» ռազմավարական նպատակով սահմանված է «կատարելագործել ինստիտուտի կազմակերպական կառուցվածքը և բարձրացնել կառավարման արդյունավետությունը»:

Կառավարման և հաշվետվողականության համակարգի բարելավում

2020-2021 թվականին կառավարման ուղղությամբ ՀՖԿՍՊԻ-ի գործունեությունը նպատակաուղղված էր ինստիտուտի կառուցվածքի և վարչակառավարչական գործառույթների բարելավմանը:

2019-ի դեկտեմբերին բուհում ներդրվել է կազմակերպական նոր կառուցվածք:

Մինչ հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելը, այն լայնորեն քննարկվել է ներքին շահակիցների շրջանում, ստացվել են հիմնավորված առաջարկություններ, որոնց մեծ մասն ընդունվել է:

Հոգաբարձուների խորհրդի կողմից հավանություն ստանալուց հետո ինստիտուտը դիմել է դատարան՝ նպատակների, շահառուների փոփոխությունը հաստատելու նպատակով:

Համաձայն կազմակերպական նոր կառուցվածքի՝ կառավարման օղակների միջև հաստատվել են հորիզոնական և ինտեգրալ կապեր, որոնք նախկինում մասնատված էին: Կառավարման հորիզոնական մակարդակում ամրապնդվել են վերահսկման, հաշվետվողականության գործառույթները, ամրագրվել են հակակշիռների և փոխզսպումների մեխանիզմները:

ՀՖԿՍՊԻ-ի որդեգրած քաղաքականությունը և վարչարարության ներկայիս գործունեությունն իրականացվում է որակի կառավարման (P-D-C-A cycle) (ՊԻԳԲ) փուլային մոդելի կիրառմամբ՝ համապատասխան ընթացակարգերով:

Հաշվետու տարում պլանավորվել և իրականացվել է արդյունավետ կառավարման համակարգի համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի, ընթացակարգերի և կանոնակարգերի մշակում և հաստատում, ինչը համապատասխանում է որակի ապահովման կառավարման ՊԻԳԲ շրջափուլին՝

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականությունը և ընթացակարգը («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2020թ. սեպտեմբերի 14-ի թիվ 8 որոշում),
2. Կանոնակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ներքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման հարցումների անցկացման և արդյունքների օգտագործման («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2020թ. նոյեմբերի 27-ի թիվ 17-Լ որոշում),

3. Ընթացակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների առցանց եղանակով ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2020թ. մայիսի թիվ որոշում),
4. Կանոնակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2021թ. փետրվարի 1-ի թիվ որոշում),
5. Կանոնակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի իրավական ապահովման բաժնի («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2020թ. նոյեմբերի 27-ի թիվ 27 որոշում),
6. Կանոնակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի որակի ապահովման բաժնի («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 23 որոշում),
7. Կանոնակարգ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժնի» («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի 2021թ. ապրիլի 16-ի թիվ 23–Լ որոշում):

Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, որոշումների նախագծերի կազմումը, արձանագրությունների վարումը, դրանց հրապարակման տալը, շահագիգիռ կողմերին որոշումներին ծանոթացնելը 2020թ. հուլիս ամսից իրականացնում է բաժնի իրավախորհրդատուն՝ համագործակցելով ռեկտորի և գիտական քարտուղարի հետ:

Առկա կամ հեռավար ձևաչափով տեղի ունեցած ԳԽ նիստերին քննարկվել և հաստատվել են՝ ինստիտուտի գործունեությունը կարգավորող կանոնակարգեր. մասնավորապես՝ Գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կանոնակարգը, ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, վերանայման քաղաքականության ընթացակարգը, հաստատվել է Գիտական խորհրդի նոր կազմը, ինստիտուտի մի շարք շրջանավարտների շնորհվել է պատվավոր պրոֆեսորի կոչումներ, տպագրության է երաշխավորվել մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, հաստատվել է ավարտական քննությունների և ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունները: Վերանայվել է Գիտական խորհրդում հարցերի ներկայացման ընթացակարգը:

2020-2021 ուսումնական տարում բուհի կառավարման համակարգում արված բարեփոխումները ի հայտ են բերում այն իրողությանը, որ ինստիտուտն առավելապես գտնվել է վարչարարության իրականացման պլանավորման և իրականացման փուլերում, իսկ բոլորովին վերջերս ՊԻԳԲ շրջափուլը սկսել է իրականացվել նաև գնահատում և բարելավում փուլերով:

Գործակից ունեցող ամսագրերում բուհի աշխատակիցների հրապարակումների թիվը՝ ընդհանուր 12 հոդված նախկին եզակի հրատարակությունների փոխարեն:

Հետադարձ կապի մշակույթի ձևավորում. ներքին շահակիցների հետ հարցումների իրականացում, վերհանված խնդիրների հետևողական լուծում, հետադարձ կապի հիման վրա բարելավումների/բարեփոխումների նախագծում, որոշումների կայացման հիմնավորվածության ամրագրում:

ՀՖԿՍՊԻ-ում հետադարձ կապի ապահովման մեխանիզմ է դիտարկվում ներքին և արտաքին շահակիցների հետ հարցումների անցկացումը, որը կանոնակարգվել է 2017-ին, սակայն հետադարձ կապի ուսումնասիրման առաջին հետազոտություններն արվել են միայն 2019-ին՝ ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից:

2020-2021 թթ. բուհում կանոնավոր կերպով իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի հարցումներ, իսկ որոշ դեպքերում՝ տվյալները հավաքագրվել են, սակայն չեն վերլուծվել: Արդյունքում՝ վավեր գործիքակազմով բացահայտված չեն շահակիցների բուն կարիքները, հետևաբար տեսանելի չեն այդ կարիքների ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների արդյունքները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աշխատապրոցեսի ավելի արդիականացման և թվայնացման նպատակով ներդրված «Google Workspace» (նախկին «G Suite for Education») շարունակում է սպասարկել 325 աշխատակիցների: Օգտահաշիվները ստեղծվում և սպասարկվում են պարբերաբար, ծառայությունները կարգավորվում են ըստ անհրաժեշտության: Պլատֆորմի հետ կապված խորհրդատվություններ են տրամադրվել ինչպես նոր աշխատակիցներին՝ տեղում գրանցման ժամանակ, այնպես էլ գործող աշխատակիցներին՝ տարատեսակ խնդիրների առկայության դեպքում: Ամբիոնները ներառվել են խմբերում, ինչը թույլ է տալիս ավելի հեշտացված ներքին նամակագրություն և ֆայլերի փոխանակում:

«Google Workspace»-ում ներառված «Google Classroom» ծառայության ներդրման պրոցեսը ընթացքի մեջ է, ստեղծվել են փորձնական խմբեր: Համակարգի գործիքակազմին նախնական պրոֆեսորադասախոսական կազմին ծանոթացնելու նպատակով հանդիպել ենք որոշ ամբիոնների ներկայացուցիչների հետ, որից հետո քննարկումների արդյունքում մշակվել է ըստ հնարավորին դյուրին ընկալվող

տեսաուղեցույց, որը մի քանի անգամ դիտելուց հետո, համակարգի հնարավորությունները մեծ մասամբ պարզ են դառնում: Կարող ենք վստահաբար ասել, որ հաջորդ ուսումնական տարում անհրաժեշտության դեպքում բուիը հեշտությամբ կարող է անցում կատարել «Google Classroom» ծառայություն կիրառմանը:

Ինստիտուտում նախագծվել և ներդրվել է Wi-Fi ցանց բաղկացած 14 Wi-Fi երթուղիչից, որոնք գրեթե ամբողջությամբ 2 մասնաշենքերում, ինչպես նաև Ծանրամարտի, բոնցքամարտի և սուսերամարտի ու Մարզախաղերի ամփոփումների մասնաշենքերում ապահովում են անլար ինտերնետի առկայություն: Ներքին ցանցում տրվել են բոլոր անհրաժեշտ կարգավորումներն անցանկալի մուտքերից խուսափելու և ցանցի անվտանգությունը ապահովելու համար:

Նոր և վերանորոգված սենյակներում մոնտաժվել են նոր ցանցային մալուխները, ինչպես նաև հնացած և կասկածելի վիճակում գտնվող մալուխները փոխարինվել են նորով, մոնտաժվել է մոտ 310 մետր մալուխ :

Համավարակի ընթացքում ներդրված Zoom հարթակի օգտագործման ընթացքում առաջացած խնդիրների լուծումների մշակման ընթացքում, անհրաժեշտություն առաջացավ բուի բոլոր Zoom օգտահաշիվներից անցնել Zoom հարթակի կորպորատիվ տարբերակին: Այն թույլ է տալիս կենտրոնացված կերպով կառավարել օգտահաշիվները և խնդիրները լուծել հեռավար տարբերակով: Թիրախային խմբերը մեծ մասամբ ամփոփում են, քանի որ Zoom հարթակի կորպորատիվ տարբերակը թույլ է տալիս նաև վերահսկել անցկացված առցանց դասերի քանակը, տևողությունը, մասնակիցների քանակը, մասնակցության տևողությունը: Հարթակի հետ կապված ծրագրային աջակցություն է տրվել մոտ 50 դասախոսի: SS բաժինը անհրաժեշտության դեպքում ապահովել է Գիտական խորհուրդի նիստերի և այլ կոնֆերանսների առցանց անցկացումը:

2021-2022 ուսումնական տարվա ընդունելության քննությունների ընթացքում SS բաժինը կազմակերպել և իրականացրել է գործնական քննությունների տեսանկարահանման (մասամբ) և տեսանյութերի արխիվացման աշխատանքները:

Համակարգիչներով աշխատանքների կայունությունը և հուսալիությունն ապահովելու նպատակով պատվիրվել են 8 նոր համակարգիչներ և 14 դյուրակիր համակարգիչներ (Covid-19 համավարակի ընթացքում լսարաններից հեռավար տարբերակով մասնակցող ուսանողների ներկայությունն ապահովելու համար), որոնք ստուգվել, ֆորմատավորվել և համալրվել են անհրաժեշտ ծրագրերով, այնուհետև բաժանվել կարիք ունեցող ստորաբաժանումներին:

Հին համակարգիչներն ավելի արագագործ և աշխատունակ դարձնելու նպատակով 22 համակարգիչների մագնիսական սկավառակասարքերը փոխարինվել են կոշտ կրիչներով (SSD), որից հետո ֆորմատավորվել են և համալրվել անհրաժեշտ ծրագրերով: Արդյունքում՝ համակարգիչների արագագործությունը աճեց մի քանի անգամ, ինչը թույլ է տալիս նաև ծրագրային սպասարկումից պաշտոնապես դուրս եկած Windows 7 օպերացիոն համակարգի

փոխարեն նշված համակարգիչների վրա տեղադրել Windows 10՝ նոր, ավելի ֆունկցիոնալ և առավել անվտանգ օպերացիոն համակարգ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործառույթների կարևոր մասն է կազմում նաև տեխնիկական սպասարկումն ու ծրագրային խորհրդատվությունը: Աշխատանքային օրվա ընթացքում աշխատակիցներից միջինում ստացվում է 8-ից 14 զանգ՝ կապված տեխնիկական և ծրագրային խնդիրների հետ: Արդյունքում՝ առաջացած խնդիրներին արձագանքել ենք հնարավորինս սեղմ ժամկետներում, ստացված զանգերի գրեթե բոլոր դեպքերում խնդիրները լուծվել են ժամանակին:

Պատվիրվել և բաժանվել են 5 տպիչ սարքեր: Լիցքավորվել են տպիչ սարքերի քարթրիջները կամ փոխարինվել նորով՝ 155 հատ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է նաև քարթրիջների վերանորոգում (55 հատ):

Սերվերային տիրույթում պարբերաբար իրականացվել են համակարգերի աշխատունակության վերահսկում, ծրագրային փաթեթների թարմացում և խնդիրների շտկում: Արխիվացման և ռեզերվային պահոցի տվյալների ճշտության ստուգման աշխատանքները կատարվել են շաբաթական 1 անգամյա պարբերությամբ:

Մշակվել, պատրաստվել և այնուհետև սպասարկվել է ինստիտուտի նոր կայքը՝ համագործակցելով հասարակայնության հետ կապերի պատասխանատուի և այլ ստորաբաժանումների հետ: Նոր կայքը պատրաստված է առավել նոր և կատարելագործված տեխնոլոգիայով, առավելություններից որոշներն են՝

- Ադմինստրատորի էջը, որը թույլ է տալիս ոչ տեխնիկական ուղղվածություն ունեցող մասնագետներին ևս կառավարել կայքի բովանդակությունը:
- Այցելուներն ունեն հետադարձ կապի հնարավորություն:
- Կայքում տեղ է գտել որոնման հնարավորությունը:
- Էջերը նախատեսված են նաև փոքր էկրաններով սարքերի համար, օրինակ՝ բջջային հեռախոսներ, պլանշետներ և այլն:

Մինչ նոր կայքի պատրաստման ավարտը, հին կայքը ևս մշտապես սպասարկվել է՝ պարբերաբար թարմացվել են հայտարարությունների և նորությունների էջերը, տեղադրվել են ուսումնական դասացուցակները, քննատախտակները և այլն:

Նոր կրեդիտային համակարգի մշակման կարիք առաջացավ, քանի որ հին կրեդիտային համակարգը գրված էր ASP.Net 2.0 ծրագրավորման լեզվով, որը ինքնին կոմպիլացվող է և չունի հետագա փոփոխությունների հնարավորություն ծրագրային կոդի բացակայության դեպքում: Նոր կրեդիտային համակարգը ստեղծվել է՝ օգտագործելով ժամանակակից և առաջատարներից մեկը համարվող PHP 8.0 ծրագրավորման լեզուն: Նոր կրեդիտային համակարգի մշակման կարևոր մարտահրավերներից էր՝ ուսումնասիրել և հասկանալ նախկին ծրագրի աշխատանքի սկզբունքները, ինչպես նաև նախկին ծրագրի տվյալների բազային համապատասխան նոր ծրագրի մշակումը, որպեսզի անցումը լինի դյուրին և քիչ ժամանակատար: Ուսումնագիտական բաժնի հետ քննարկումներից և, իհարկե, հին

ծրագրի երկարատև ուսումնասիրություններից հետո մշակվեց նոր ծրագիրը, որի հիմնական առավելություններն են՝

- ժամանակակից, ֆունկցիոնալ, ինտերպրետացվող ծրագրավորման լեզվով մշակված լինելը,
- նախատեսված է բոլոր չափսերի մոնիտորների համար,
- ավելի արագագործ լինելը և այլն:
- ՀԾ-հաշվապահ ծրագրային փաթեթին կիրառական ծրագրավորման միջերեսի (API) միջոցով միացումը դեռ մշակման փուլում է, այն թույլ կտա ուսանողների պարտքերը տեսնել նաև կրեդիտային համակարգում և բավականին կխնայի լրացուցիչ աշխատապրոցներ՝ ուսանողների պարտքերի մասին տեղեկատվություն տրամադրելու հետ կապված:

Ծրագիրը շարունակական կերպով կատարելագործվելու և հարմարեցվելու է օգտագործողների պահանջներին: Հետագայում նախատեսվում է ուսանողների համար ստեղծել անհատական էջ, որը թույլ կտա ուսանողին անմիջապես տեսնել իր պարտքը, գնահատականները և բեռնել ակադեմիական տեղեկագիրը ինքնուրույն: Նոր համակարգը գտնվում է փորձարկման փուլում և նախատեսվում է շուտով վերջնական շահագործման հանձվել:

Ուսումնական տարվա ընթացքում լսարաններն ապահովվել են պրոյեկտորներով, մասնավորապես՝ 6 լսարաններում մոնտաժվել են պրոյեկտորներ: Գիտական խորհրդի դահլիճում տեղադրվել է ավելի մեծ և ավելի ֆունկցիոնալ պրոյեկտոր:

Ինստիտուտում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովվելու նպատակով ՄՌԿԸ բաժնի նախաձեռնությամբ և SS բաժնի աջակցությամբ ներդրվել է «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Սկսած բանակցությունների փուլից մինչ ներդնումը, հարմարեցումը բուհի առանձնահատկություններին, այնուհետև խորհրդատվությունների տրամադրումը, SS բաժինն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նշված գործընթացում:

Նախատեսվում է համակարգը կիրառել ուսումնական գործընթացին առնչվող տվյալների և տեղեկատվության կառավարման արդյունավետությունը բարձացնելու նպատակով՝ ներառելով հետևյալ փուլերը՝

- ✓ ուսանողների և դասախոսների հաշվառում,
- ✓ ուսանողների շարժի կառավարում և վերահսկում,
- ✓ ուսումնական պլանների և դասացուցակների համապատասխանություն,
- ✓ քննության աղյուսների ավտոմատ գրանցում,
- ✓ ուսանողի առաջադիմության հաշվարկ և վերահսկում:

Կարգավորման փուլում է գտնվում «Google Classroom» առցանց ուսուցման հարթակը:

Ներկայումս բոլոր աշխատակիցները և ուսանողներն ունեն էլ. փոստի հասցեներ: Էլեկտրոնային ծառայությունները կարգավորվել են այնպես, որ առավելապես ավտոմատացվեն փաստաթղթաշրջանության գործառույթները:

Առցանց դասապրոցեսի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել ամբիոններին: Հետևաբար, 14 առանձին թեյնինգ է անցկացվել ամբիոնների համար, որոնց մասնակցել է 145 աշխատակից:

Ներքին հաղորդակցության արդյունավետության բարձրացում Էլեկտրոնային կառավարման միջոցով

ՀՖԿՍՊԻ-ի ներքին շահակիցների կարծիքն ու վերաբերմունքը բուհի նկատմամբ ինքնին շատ կարևոր գործոններ են և մեծապես ազդում են հանրային կարծիքի ձևավորման վրա:

2019-ին ՀՖԿՍՊԻ-ում մշակվել և ներդրվել է հանրային կապերի հայեցակարգը, որի 7-րդ կետը վերաբերում է բուհի ներքին հաղորդակցության ապահովմանը: Մշակման փուլում են հանրային կապերի քաղաքականությանն ու ընթացակարգին առնչվող փաստաթղթերը:


ՀՖԿՍՊԻ-ում դեռևս բացակայում են գործընթացների թափանցիկության և հասանելիության ապահովման գործիքների արդյունավետության վերլուծման մեխանիզմները:

Տեղեկատվության տարածումն ու հասանելիությունը ներքին շահակիցների շրջանում ապահովվում է ներքին մեյլինգի միջոցով, հրապարակման ենթակա փաստաթղթերը տեղադրված են պաշտոնական կայքէջում (www.sportedu.am/փաստաթղթեր):

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման նպատակով կիրառվում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Նախատեսվում է ներքին հաղորդակցումը ևս ապահովել Mulberry համակարգի միջոցով:

ՀՖԿՍՊԻ-ում գործում են հասարակության լայն շերտերից հետադարձ կապի ստացման օնլայն մեխանիզմներ:

Տեղեկատվության տարածման կարևոր միջոցներից են ՀՖԿՍՊԻ-ի կայքն ու ֆեյսբուքյան էջերը: 2020-ին ներքին շահակիցների հետ իրականացված հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ դասախոսական կազմն ու մասնավորապես՝ ուսանողները բուհի ֆեյսբուքյան էջի միջոցով են տեղեկանում իրենց հետաքրքրող հարցերին:



ՀՖԿՍՊԻ-ի կայքը և ֆեյսբուքյան պաշտոնական էջը՝ որպես տեղեկատվության ստացման միջոց

Սոցցանցերի միջոցով ուսանողները, դասախոսները, գործատուները, դիմորդները և շրջանավարտները, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր են ուղղում, պատասխաններ ստանում՝ օրինակ՝ արտակարգ դրության պայմաններում 2020-2021 ուսումնական տարվա դիմորդների կողմից ստացված 1212 նամակներին տրվել է արագահաս և սպառիչ պատասխան:

ՀՖԿՍՊԻ-ն նախաձեռնել է նաև ինստիտուտի պաշտոնական կայքի շարունակական բարելավման գործընթացը՝ դրա բնականոն գործունեության ապահովմամբ, ինչպես նաև տեխնիկական սպասարկման իրականացմամբ:

Նոր կայքում նախատեսվում է հաշվետվությունները տեղադրել հատուկ փաստաթղթերի համար ստեղծված բաժնում doc.sportedu.am, որն ապահովելու է բուհի հիմնական փաստաթղթերի հասանելիությունը: Կայքում տեղադրված կլինեն ոչ միայն հաշվետվությունները, այլև բոլոր կանոնադրություններն ու կանոնակարգերը, բուհի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների նիստերի արձանագրություններն ու ՀՖԿՍՊԻ-ի ղեկավարի հրամանները: Իսկ կրթական փաստաթղթերը (կրթական ծրագրեր, առարկայական նկարագրեր, ուղեցույցներ, կարգեր և այլն) տեղադրված կլինեն edu.sportedu.am հատվածում՝ ուսանողների և համապատասխան թիրախային խմբի համար նախատեսված փաստաթղթերն ավելի մատչելի դարձնելու համար:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

«Հասարակական պատասխանատվություն» ռազմավարական նպատակով սահմանված է «զարգացնել հասարակության հետ կապերն ու հանրային ներգրավման ծառայությունների համակարգը, բարձրացնել սոցիալական պատասխանատվությունը»:

Հասարակայնության հետ կապերի ինստիտուտը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում ներդրվել է 2020-ի փետրվարից: Հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հիմնական գործառույթն է բուհ-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովումն ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը (լրագրողների հետ աշխատանք, տեղեկատվության տրամադրման հարցումների պատշաճ պատասխաններ, ինտերնետային ռեսուրսների զարգացում, աշխատանք ՀԿ-ների, այլ բուհերի, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ):

PR պատասխանատուի աշխատանքը միտված է նպաստելու բուհում թափանցիկության և հրապարակայնության ապահովման գործընթացին:

ՀՖԿՍՊԻ-ի ընթացակարգերի և գործողությունների թափանցիկության ու հասանելիության մեխանիզմները սահմանված են PR պատասխանատուի գործունեության [հայեցակարգով](#):

Բուհի «Փի Ար» գործունեության հանրայնացմանն ուղղված մարկետինգային գործողությունների շարքը ծավալուն է և բազմաբնույթ, որը ներառում է.

Գովազդային արշավների կազմակերպում

2020 թվականի հունվարին անցկացված հարցումների արդյունքներով ՀՖԿՍՊԻ-ն խնդիր ունի ներկայանալու որպես կայացած կրթօջախ, ուստի գովազդային արշավների կարիք կա, քանի որ բուհերի միջև մրցակցությունը գնալով թեժանում է, բուհի հեղինակությունն էլ հանրության շրջանում անհրաժեշտ է բարձրացնել, պահպանել ու զարգացնել: Հետևաբար ՀՖԿՍՊԻ հասարակայնության հետ կապերի աշխատակիցների կողմից պատրաստվել են գովազդային տեսահոլովակ [dimord.am](#) կայքի համար, ռադիո գովազդային հոլովակ, որը հեռարձակվել է հանրային ռադիոյով և 5 տեսահոլովակներ, որոնք տեղադրված են բուհի ֆեյսբուքյան էջում:

Աշխատանքներ դիմորդների հետ

ՀՖԿՍՊԻ-ն, ինչպես նաև յուրաքանչյուր կրթական հաստատություն, չի կարող գոյատևել առանց դիմորդների և ուսանողների: Հաշվետու ժամանակահատվածում դիմորդների հետ աշխատանքները ՀՖԿՍՊԻ «Փի Ար» գործունեության գերակա ուղղություններից է եղել, և այդ աշխատանքներն իրականացվել են՝ հաշվի առնելով «Փի Ար» աշխատանքների արդի մարտահրավերները:



Այս առումով արտակարգ դրության պայմաններում դիմորդների հետ աշխատանքը տեղափոխվել է վիրտուալ տիրույթ՝ տեսահոլովակների միջոցով ներկայացվել են ինչպես լրացնել դիմումի հայտերը, պարզաբանվել են ընդունելության կարգն ու քննական նորմատիվները:


Ներկայացվածությունը համացանցում

ՀՖԿՍՊԻ-ի պաշտոնական էջի առաջխաղացում ֆեյսբուք սոցիալական հարթակում:


Category	2020թ.	2019թ.
ԳԵՆ	0%	0%
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖԵՍՏԱՌՈՒԹՅԱՆ ԵԶՐԵ	22%	55%
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՉՖԵՍՏԱՌՈՒԹՅԱՆ ԵԶՐԵ	20%	10%
ԳՆԱԿԱԼԱՆՈՐԳՐՈՒԽՆԻՍՏԵՐԻՆԵ	4%	10%
ԱՍՐՈՒԽՆԻՍՏԵՐԻՆԵ	34%	20%
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅՔԻՆԵ	20%	5%

■ 2020թ. ■ 2019թ.






Մարտի 25-ի դրությամբ արդեն գործող և ակտիվ նամակագրական կապ ունեցող օգտատերերի թիվը 1281 է, իսկ նոր ներգրավված օգտատերերինը՝ 589, տվյալները ծրագրային են, և ժամանակահատվածը մարտի 25-ի դրությամբ է ծրագրային հիմքով:




(Հաշվետվությանը կցված է 2 ֆայլ՝ ֆեյսբուքյան հաշվետվությունները 01.09.2020-28.02.2021 և 01-03-2021՝ մինչ հաշվետվության կազմման ժամանակահատվածը):


Էջը հավանաժ հետևորդների՝ 9500 հոգու՝ 55.4% իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ մնացյալը՝ արական: Ակտիվ տարրային խումբը 18-44 տարեկանն է (Գրաֆիկը կցվում է):



Հետևորդների ճնշող մեծամասնությունը Հայաստանից է՝ 91.8 %, կան հետևորդներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից Վրաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Լիբանանից և այլն (Գրաֆիկը կցվում է):




Ըստ մարզերի՝ Հայաստանում բնակվող հետևորդների կեսից ավելին Երևանից է՝ 59.7%, այնուհետև Արմավիրն է, Արտաշատը, Գյումրին, Հրազդանը, Կապանը և այլն (Գրաֆիկը կցվում է):




Ֆեյսբուք սոցիալական հարթակում նշված ժամանակահատվածում վճարովի գովազդներ են տեղադրվել՝ նախապատրաստական դասընթացների, փորձնական քննությունների, բակալավրի և մագիստրատուրայի ընդունելության հայտարարությունները տարածելու նպատակով:

ՀՖԿՍԴԻ-ի ներկայությունը մեդիադաշտում

Տարվա ընթացքում տեղի ունեցած միջոցառումներից հետո Հանրային կապերի պատասխանատուի կողմից հավաքագրված 90 և ավելի էլ. հասցեներ պարունակող բազայի օգտատերերին ուղարկվել էր մամուլի ասուլիսը:



Հաշվետու ժամանակաշրջանի՝ 2020թ" սեպտեմբերի 1-ից մինչև 2021թ. հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում մամուլում ՀՖԿՍՊԻ-ի վերաբերյալ՝ ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների, ղեկավարների, բարեփոխումների, կրթության, միջոցառումների, շրջանավարտների և հերոսների վերաբերյալ կատարվել է շուրջ 658 գրառում: Տվյալները ներբեռնված են Rummors Monitoring պաշտոնական կայքի ՀՖԿՍՊԻ-ի պրոֆիլից: Նոր ուսումնական տարվան զուգահեռ նախատեսվում է ներդնել և կիրառել ծրագիրը: Այժմ այն փորձարկման փուլում է:



Ընդհանուր առմամբ 2020-2021 ուսումնական տարում ԶԼՄ-ների հետ ակտիվ համագործակցություններ են ծավալվել, որոնց ներգրավվել են բուհի ղեկավարը, պրոռեկտորները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ" հանդես են եկել հարցազրույցներով, մասնակցել հաղորդաշարերի, մանրամասն ներկայացրել բուհում իրականացվող կրթական ծրագրերն ու բարեփոխումները:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում տեղի ունեցող միջոցառումների, բարեփոխումների և նորությունների մասին խոսել են՝ Առաջին ակթի, Արմենիա թիվի, Երկիր մեդիայի, Կենտրոն թիվի, Նոր Հայաստան թիվի, Հրազդան թիվի, Արցախի հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերներից"

<https://www.youtube.com/watch?v=AIYliXcRPg4&t=21s>

<https://www.youtube.com/watch?v=Qd95R0DZ-3w>

<https://www.facebook.com/watch/?v=1200415063666531>

<https://www.facebook.com/106836408254140/videos/386264876161717>

Նկարահանվել է տարեկան ամփոփ հոլովակ «ՄԵՆՔ՝ 75» խորագրով՝ ղեկավարի և պրոռեկտորների մասնակցությամբ"

<https://www.facebook.com/sportedu.am/videos/170323258113430>

Համապատասխան ստորաբաժանումներից հավաքագրվել և տեսկավորվել է անհրաժեշտ տեղեկատվություն:



Կայքն աշխատում է և՛ mobile, և՛ web տարբերակով:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ իրականացվել է տեղեկատվական շրջանակի հանրայնացում, միջոցառումների լուսատեսանկարահանում: Ֆեյսբուքյան պաշտոնական էջում իրականացվել է արշավ՝ «Մերոնք» խորագրով:

Հանրային կարծիքի ուսումնասիրություններ

Գծապատկեր.

Առաջինը ի՞նչ է Ձեր մտքով անցնում երբ լսում եք Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ



Հանրային ճանաչելիություն



11143 Հետևորդ

Նամակների թիվը՝ 2000+ /1 տարվա կտրվածքով/

Հաշվետու ժամանակահատվածում ՀՖԿՍՊԻ-ն բավականաչափ լավ է ներկայացված եղել ամենատարածված սոցիալական ցանցում՝ facebook-ում: Սոցցանցերի միջոցով ուսանողները, դասախոսները, գործատուները, դիմորդները և շրջանավարտները, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր են ուղղել, պատասխաններ ստացել, վարկանիշեր տվել, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ կարծիքներ արտահայտել:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

«Արտաքին կապեր և միջազգայնացում» ռազմավարական նպատակով սահմանված է «խթանել միջազգայնացման շարունակական գործընթացներն ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում»:

2016-ից ՀՖԿՍՊԻ-ում գործել է Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնը, որի հիմքի վրա 2019թ. դեկտեմբերին ստեղծվել է Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը (այսուհետ՝ ՄՀԶԾ), որը համակարգում է Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալսարանների միջազգային ասոցիացիայի անդամ է (շուրջ 52 համալսարան):

Միջազգայնացման տեսանկյունից կարևոր է տարբեր դեսպանատների, միջազգային պատվիրակությունների, արտասահմանյան գիտնականների և դասախոսների մասնավոր այցերի կազմակերպումը:

Կնքված երկկողմ համաձայնագրերի շրջանակում կողմերն աջակցում են.

- ✓ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի զարգացմանը,
- ✓ դասախոսների, ուսանող-մարզիկների, հետազոտողների համատեղ ուսումնագիտական, մարզական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացմանը:

- ✓ Փորձի փոխանակման, գիտահետազոտական գործունեության արդյունքների վավերացմանը. ինստիտուտը կազմակերպում է ամենամյա հանրապետական և միջազգային գիտաժողովներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-հոգեբանական, բժշկական-սաքսանական, մանկավարժական, պատմամշակութային թեմաներով, որին մասնակցում են արտերկրների մասնագետներ ու մարզիկ ուսանողներ:

Ինստիտուտը համագործակցում է նաև՝

- ✓ ԱՊՀ առաջատար ֆիզկուլտուրային-մարզական ուսումնական հաստատությունների ղեկավարների խորհուրդի հետ:

- ✓ Կենտրոնական Ասիայում և Եվրոպայում «Օլիմպիական սպորտ և սպորտ բոլորի համար» մարզական և ուսումնական բարձրագույն կրթական հաստատությունների միջազգային և ազգային գլոբալ կոնֆեդերացիայի հետ:

- ✓ Աշխարհի սպորտային առաջատար համալսարանների ասոցիացիայի լիիրավ անդամ է:

- ✓ Ինստիտուտից Միջազգային օլիմպիական ակադեմիայի (ՄՕԱ) ամենամյա նստաշրջանների մասնակցություն են ունենում դասախոսներ, երիտասարդ մասնակիցներ: Արդյունքում՝ իրենց գործունեությունն են ծավալում ՀՀ-ում օլիմպիական գաղափարների տարածման ուղղությամբ, տպագրվում են ՄՕԱ-ի պարբերականներում:

2021թ. հունվարին ՀՖԿՍՊԻ-ին՝ որպես Հայաստանի ազգային օլիմպիական ակադեմիա, դարձավ Եվրոպական օլիմպիական ակադեմիայի լիիրավ անդամ, ինչի արդյունքում Հայաստանն էլ ավելի կսերտացնի իր համագործակցությունը օլիմպիական մեծ ընտանիքին:

2020-2021 ուսումնական տարում միջազգայնացման և արտաքին կապերի հաստատագրմանը միտված պայմանագրերի և հուշագրերի վավերացման գործընթացում հաշվի են առնվել գործընկեր հաստատության առանձնահատկությունները, պայմանագրի բովանդակությունը համահնչեցված է համագործակցային ծրագրի նպատակներին և խնդիրներին, մասնավորապես՝ շեշտը դնելով պայմանագրի շրջանակում կողմերի ամրագրված պարտականությունների, ակնկալվող արդյունքների, կոնկրետ գործողությունների և արդյունավետության գնահատման ցուցիչների վրա: Դրա արդյունքում հաշվետու տարում նախագծվել և կնքվել է ևս 3 պայմանագիր՝ Մոսկվայի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի, Լեհաստանի Բիդգոշի համալսարանի և Erasmus+ ծրագրի շրջանակներում՝ Լեհաստանի Ջոզեֆ Պիլսուդսկու անվան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ակադեմիայի հետ:

Իհարկե, միջազգային գործընկերների և գիտական շրջանակների հետ շփումներն ու համագործակցությունն իրականացվել է հիմնականում հեռավար ձևաչափով՝ ապահովելով նաև սովորողների և բուհի երիտասարդ աշխատակիցների ակտիվ մասնակցությունը միջազգային տեսակոնֆերանսներին:


Միջազգային գիտաժողովի և համագործակցային ծրագրի արդյունքներն ու ձեռքբերված փորձը դասախոսական կազմին, ուսանողներին ներկայացվել է տեղեկատվական հանդիպումների միջոցով, հաշվետվությամբ ամփոփվել գիտխորհրդում: Գիտության զարգացման նպատակով ՄՀՀԾ բաժինը խրախուսել և աջակցել է բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հոդվածների տպագրման առաջարկները և տպագրման պրոցեսի կազմակերպմանը:

Ընդհանուր առմամբ, ինստիտուտում միջազգայնացման գործառույթը տարրալուծված է և խրախուսվում են տարբեր ստորաբաժանումների (օր. ֆակուլտետ, ամբիոններ, որակի ապահովման բաժին և այլն) կամ անհատների կողմից նախաձեռնություններ:

2020-2021 ուստարում բուհ ընդունվել են սփյուռքի և արտերկրի 19 քաղաքացի՝ 11 առկա, 5 հեռակա, 3-ը՝ մագիստրատուրա, որից 2-ն առկա, 1-ը հեռակա ուսուցման համակարգ: Հետբուհական համակարգում ընդունվել են 3 հոգի:

Կազմակերպվել է նաև նախապատրաստական բաժնի ընդունելություն, ինչի արդյունքում ընդունվել են 19 դիմորդներ, 17-ն Իրանի Իսլամական Հանրապետությունից, 2-ը՝ Գանայի Հանրապետությունից, սակայն բացակայությունների պատճառով որոշ ուսանողներ հեռացվել են և նախապատրաստական բաժնի դասընթացներ հաճախել են 8 հոգի, իսկ քննությունը հաղթահարել են 5-ը:

Հաշվետու տարում ինստիտուտում բակալավրի աստիճանով սովորում են արտերկրի և սփյուռքի 62, իսկ նախապատրաստական բաժնում՝ 19 քաղաքացիներ: Ընդհանուր թվով 81 ուսանող, 6-ը՝ հետբուհական:



Ինստիտուտում կոնկրետ քայլեր են կատարվել նաև միջազգային համագործակցությունը կենտրոնացված և ապակենտրոնացված մակարդակում իրականացնելու համար: Աշխատանքներ են տարվում դրամաշնորհային ծրագրերին հայտագրվելու համար, քանի որ դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունն ու իրագործումը հետապնդում են որոշակի նպատակներ: Այս տարի հայտագրվել է Ճապոնիայի դեսպանատան կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագիրը՝ GCGP Grant assistance for Cultural Grassroots Projects. «Ձյուդոյի և կարատեի դահլիճի վերանորոգման նախագիծ» անվանումով:

2020-2021 ուստարում ՄՀՀԾ բաժինը նշանակալի նախաձեռնողականություն է ցուցաբերել միջազգային վեբինարների, տեսակոնֆերանսների կազմակերպման և անցկացման հարցում: Բուհի աշխատակիցներին վեբինարներում, կլոր սեղան-քննարկումներում, կոնֆերանսներում ներգրավելու նպատակով մասնակցության հրավերներ են ուղարկվել (25 հրավեր) համապատասխան ամբիոններին, բաժիններին: Ուսանողները տեսահանդիպում են ունեցել նաև Մոսկվայի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի հետ՝ ներկայացնելով իրենց մասնագիտական ամբիոնները, հնչեցրել իրենց հետաքրքրող հարցերն ու արտահայտել իրենց դիրքորոշումը, ինչը վկայում է թե՛ ուսանողների հետաքրքրվածության աճի, և՛ թե անգլերենով, ռուսերենով հաղորդակցվելու

հմտությունների բարելավման մասին: Հեռավար սեմինարներին ու թրեյնինգներին մասնակցություն է կազմակերպվել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների հետ, որոնք նպատակ ունեն խթանելու միջբուհական հաղորդակցության զարգացումը, նպաստելու ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությանը՝ երաշխավորելով միջազգային համագործակցային ծրագրերի իրականացման շարունակականությունը:

Նշենք, որ իրականացված գործողություններն ու միջոցառումներն լուսաբանվել են առավելապես ինստիտուտի [ֆեյսբուքյան պաշտոնական էջում](https://www.facebook.com/ASIPCSInternational/), իսկ այժմ նաև ՄՀԶԾ բաժնի սոցիալականներում (Facebook <https://www.facebook.com/ASIPCSInternational/>, Instagram), որոնք ներկայումս բուհի շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման մատչելի և ամենահասանելի միջոցներն են: Այստեղ տեղադրվում են նաև կրթաթոշակների (22 կրթաթոշակ), մրցույթների (15 մրցույթ) հնարավորությունները:

Թեև վերջին տարում բուհում միջազգային համագործակցության ոլորտում բավականին դրական շարժընթաց է գրանցվել, դեռևս վերանայման ու բարելավման կարիք ունեն աշխատանքային ընթացակարգերն ու կանոնակարգերը, նախատեսվում է մշակել և ներդնել նաև մեթոդաբանական ուղենիշեր, քանի որ բուհում սակավաթիվ են դրամաշնորհային նախագծեր կազմող փորձառու աշխատողները, առկա է դրամաշնորհային նախագծեր մշակելու վերաբերյալ վերապատրաստումների անհրաժեշտություն:

Ինստիտուտում դեռևս ցածր է ուսանողների և դասախոսների լեզվի իմացության մակարդակը, ինչը խոչընդոտում է միջազգային փոխանակման ծրագրերի արդյունավետ իրականացումը: Օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով 2020-2021 ուսումնական տարվանից ավելացվել են անգլերենի ժամերը (օտար լեզվի դասավանդումը կազմակերպվում է 3 կիսամյակում՝ նախկին 1 կիսամյակի փոխարեն), մրցութային հավաքագրման արդյունքում ՊԴ կազմը համալրվել է օտար լեզվի դասավանդման բարձր որակավորում ունեցող դասախոսներով, վերանայվել են դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները:


Միջազգային համագործակցություն



- Հայ Ամերիկյան սպորտային բժշկության կոալիցիայի, Աթլետիկ մարզումների և թերապիայի աշխարհի ֆեդերացիայի (Կանադա) և ՀՖԿՍՊԻ միջև եռակողմ պայմանագիր
- ՀԱՕԱ-ի անդամակցությունը Եվրոպական օլիմպիական ակադեմիային
- առցանց հանդիպում-քննարկում Բիդգոշի Եվրոպական համալսարանի (Լեհաստան) հետ:
- Մոսկվայի օլիմպիական հերթափոխի N1 միջին մասնագիտական քոլեջի հետ պայմանագրի կնքում



ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



ՀՖԿՍՊԻ SWOT (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐ ԱՌԱՋՆԵԱՑ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ
1. ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքի կիրառում: Փոփոխված կառուցվածքում կառավարման հորիզոնական և ինտեգրալ կապերի ապահովում: 2. Կառավարման համակարգում առավել արդյունավետ մոտցումների ներդրում. որոշումների կայացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովում: 3. Ինստիտուտի կրթական և այլ գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքի վերանայում և վերամշակում: 4. Ներքին փաստաթղթաշրջանառության և հաղորդակցման գործընթացներում էլեկտրոնային գործիքակազմի ներդրումն ու գործարկումը: 5. Գնահատականների մուտքագրման և պահպանման էլեկտրոնային համակարգի մշակում: 6. Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման և համալրման գործընթացի իրականացումը հրապարակայնացված և բաց մրցութային ընթացակարգի միջոցով: 7. Գործատու ոլորտներից դասախոսներով ՊԴ կազմի համալրվածությունը: 8. Օտար լեզուների ուսուցման աշխատաձևալի մեծացում: 9. Կրթական ծրագրերի իրականացման բարենպաստ ուսումնական միջավայրի շարունակական բարելավում՝ որպես զարգացման առաջնահերթություն: 10. Նյութատեխնիկական բազայի թարմացում, արդիականացում և բազմազանեցում, աշխատանքային պայմանների բարելավում: 11. ՀՖԿՍՊԻ ռազմավարական կառավարման, ենթակառուցվածքային և վարչարարական փոփոխությունների իրականացում: 12. Հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողների համար բուհի շենքային, լսարանային և գույքային պայմանների մատչելիության ապահովում: 13. Տեղական շուկայում պահանջարկ ունե-	1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում արտաքին առանցքային շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ) մասնակցության և նախաձեռնողականության ցածր մակարդակ: 2. Ֆինանսական մուտքերի կենտրոնացվածություն կախում հիմնականում մեկ աղբյուրից ուսման վարձավճարներից: 3. Ֆինանսական պլանավորման և ֆինանսական մուտքերի ու ռեսուրսների բաշխման ոչ հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: 4. Ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործադրում և ճգնաժամերի դիմակայմանն ուղղված ռազմավարության թերի կիրառում: 5. Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածությունը: 6. Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մշակույթի և դրականոնակարգման գործընթացների բացակայություն: 7. ՊԴ կազմի ընդհանուր հաստիքացուցակում օտարերկրյա գիտական կադրերի ներգրավվածության բացակայություն: 8. ՊԴ կազմի մասնագիտական աճին առնչվող ինստիտուցիոնալ քաղաքականության բացակայություն: 9. Դասերին ուսանողների հաճախելիության ապահովման մեխանիզմների անարդյունավետություն: 10. Ուսանողների գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման չափանիշների ու կրթական վերջնարդյունքների միջև թույլ կապ: 11. Ուսուցման գործընթացում ուսանողի առաջընթացի օբյեկտիվ և թափանցիկ արժանագրման համար գնահատման քաղաքականության, գնահատման մեթոդների անկատարություն: 12. Շրջանավարտների զբաղվածության տվյալների բազայի բացակայություն: 13. Ուսանողների շարժունությանը նպաստող

ցող նոր կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունների մշտադիտարկում: 14. «Ապորտի տուրիզմ» մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման արտոնման հաստատում ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից: 15. Ինստիտուտում իրականացվող կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգի ներդնում, բակալավրի երեք և մագիստրատուրայի չորս ՄԿԾ-ների փորձագիտական անկախ գնահատման իրականացում, բարելավման առաջարկությունների հիման վրա ՄԿԾ-ի վերանայում և վերամշակում: 16. Հասարակության հետ կապերի ակտիվացում, բուհի գործունեության հանրայնացում, լուսաբանումների միջոցով Ինստիտուտում գործող մասնագիտությունների գրավչության բարձրացում: 17. Դիմորդների և ընդունվողների մեծ ներհոսքի ապահովում՝ 697 ուսանող, որը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տասը տարվա համար: 18. Ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված համալիր մոտեցումների գործարկում, ծածկագրված քննակարգի ներդնում: 19. ՀՖԿՍՊԻ աշխատակազմի կատարողական բարելավմանը ուղղված ռազմավարության և մոտեցումների մշակում: 20. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսում, հավելավճարի հատկացում միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրապարակումների համար: 21. Գործատու - բուհ կապերի ընդլայնում, ուսանողական պրակտիկայի հնարավորությունների ընդլայնման նպատակով նոր գործընկերների ձեռքբերում, համագործակցության նոր պայմանագրերի և հուշագրերի կնքում: 22. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացում՝ բուհի կողմից մատուցվող կրթա-	ոչ կանոնակարգված ընթացակարգեր և ուսանողների ակադեմիական շարժունության արդյունքում արձանագրված առաջընթացի շարունակական վերլուծությունների բացակայություն: 14. ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքում առկա տեղեկատվության ոչ համապարփակություն, կայքի թերի գործարկում: 15. Հաջողված փորձի փոխանակման գործընթացների թույլ կառավարման հետևանքով՝ տարբեր ամբիոնների և ՀՖԿՍՊԻ անհամաչափ զարգացվածությունը: 17. ՈԱ մեխանիզմների և գործիքակազմի հուսալիությունը և վավերությունը հավաստող մեխանիզմների թույլ կիրառումը: 18. Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը ՈՆԱ գործընթացներում:
---	---

կան ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրման, բուհի ղեկավար կազմի կողմից տրվող հարցազրույցների և մամուլի ասուլիսների միջոցով: 23. Որակի ապահովման ներքին համակարգի և գործող մեխանիզմների մշտադիտարկում, արտաքին գնահատումների գործիքակազմի արդյունավետության վերլուծության իրականացում: 24. ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից ներքին շահակիցների հետ հետադարձ կայուն կապի ապահովում, հարցումների իրականացում, վերլուծում, հետադարձ կարծիքի ուսումնասիրության և գնահատման հիման վրա բարելավումների իրականացում: 25. Ներքին ՈԱ-ի նոր մեխանիզմների և չափանիշների մշակում ու կիրառում՝ միտված ՄԿԾ-ների բովանդակության, ուսումնառության արդյունքների ու տվյալների հավաստի գնահատմանը: 26. ՀՖԿՍՊԻ միջազգայնացման գործընթացի խթանում՝ օտարերկրյա գործընկեր համալսարանների և միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների ներկայացուցիչների հետ գիտակրթական համատեղ ծրագրերի մշակման միջոցով: 27. Գրավչություն օտարերկրյա ուսանողների համար և նրանց ներհոսք, ուսանողական և դասախոսական շարժունության ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծում: 28. Նախապատրաստական դասընթացների վերաբացում: 29. Օտար լեզվով կրթական ծրագրի մեկնարկ և իրականացում: 30. Միջազգային առանցքային կառույցների հետ համատեղ տեսակոնֆերանսների կազմակերպում և անցկացում, կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգի իրականացում, միջազգային դրամաշնորային ծրագրերին մասնակցության հայտերի ներկայացում: 31. Լրագրություն մագիստրոսի կրթական ծրագրի ինքնագնահատման իրականացում՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում:	
--	--

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
1. ՀՖԿՍՊԻ կազմակերպական նոր կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված զարգացման հնարավորություններ: 2. ՀՖԿՍՊԻ 2022-2026 զարգացման նոր ռազմավարական պլանի, գործողությունների իրականացման ծրագրի մշակում և ներդնում, որտեղ սահմանված կլինեն չափելի նպատակներ (SMART), հստակ արտացոլված կլինի դրանց կապը առաքելության հետ, մշակված կլինեն կատարողականի ցուցիչներն ու ենթացուցիչները, գործողությունների վերջնաժամկետներն ու պատասխանատուները: 3. ՀՖԿՍՊԻ Ռազմավարական ծրագրի (ՌԾ-ի) գնահատման ձևաչափի մշակում ըստ գործունեության արդյունավետության ցուցանիշների (ԳԱՑ-երի) 4. ՀՖԿՍՊԻ համապատասխան շենքային և լսարանային պայմանների, տեխնոլոգիական բազայի բարելավում: 5. Արտաքին ֆինանսական մուտքերի ավելացում և բազմազանացում ձեռնարկատիրական գործունեության տեսակների և ընդլայնման ու լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների ավելացման միջոցով: 6. ՀՖԿՍՊԻ ֆինանսավորման համակարգի ապակենտրոնացում և ծրագրային բյուջեների կազմում և բաշխում ըստ ռազմավարական գերակա ուղղությունների ու ոլորտների: 7. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշներ՝ պայմանավորված կրթության ձևերի բազմազանեցմամբ և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությամբ: 8. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման ցուցանիշները բարձրացնելու նպատակով մասնագիտությունների գրավչության աստիճանի բարձրացում: 9. Երիտասարդ դասախոսների մենթորության և մասնագիտական կատարելագործման խրախուսմանն ուղղված մեխանիզմների մշակում և կիրառում: 10. Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական վերլուծությունների պարբերական իրականացում, կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում:	1. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մակարդակ: 2. ՀՀ բնակչության եկամուտների ցածր մակարդակ: 3. Արտաքին շահակիցների և, հատկապես, գործատուների ոչ բավարար շահադրվածություն և ներգրավում բուհական կրթական գործընթացներում: 4. Բարձրորակ գիտամանկավարժական կադրերի համար արտաքին մրցակցության ուժեղացում: 5. ՀՀ-ում գիտության ֆինանսավորման խիստ ցածր մակարդակ: 6. Բուհերի միջազգայնացմանը նպաստող պետական անբավարար աջակցություն: 7. Համավարակի բռնկումն ու տարածումը, պատերազմական գործողությունների հետևանքով առաջացող տնտեսական ու սոցիալական հետևանքները: 8. Ֆորս մաժորային այլ իրավիճակներ:

11. Համագործակցության ընդլայնում միջազգային գիտակրթական, մասնագիտական, ֆինանսավորող կառույցների, ընկերությունների և կազմակերպությունների հետ: 12. Բուհում իրականացվող հետազոտությունների նպատակային ֆինանսավորման համար: 13. ՀՖԿՍՊԻ համագործակցային ձևաչափերի կիրառման դաշտի ընդլայնում, ինստիտուտի և ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև պայմանագրերի կնքում՝ ուսանողների հավաքագրման նպատակով: 14. Օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման ոլորտում ստեղծված հնարավորությունների զարգացում: 15. ՀՖԿՍՊԻ աշխատակիցների նմուշների և գործիքների ամբողջական փաթեթի մշակում՝ դրամաշնորհների առաջարկների և նախագծերի ներկայացման համար: 16. Հասարակության հետ կապերի ամրապնդում և շահակիցների հետ համագործակցության զարգացում: 17. ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման աշխատանքների ընդլայնում, արդյունավետության բարձրացում (օրինակ՝ բարձրորակ տեղեկատվական նյութերի պատրաստում, դրանց տարածում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում և բուհերում) և հետադարձ կապի ձևերի բազմազանեցում՝ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային ժամանակակից ռեսուրսների ավելի ինտենսիվ օգտագործմամբ: 18. ՈՆԱ համակարգի ազդեցության պարբերական գնահատում բուհի բարելավումների վրա:	
--	--

Մեծ գործերը պետք է իրականացնել,
այլ ոչ թե անվերջ մտածել դրանց մասին:
Ջոկիոս Կեսար

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am, www.sportedu.am
 facebook.com/sportedu.am

